

# ԷԶՄԻԱԾԻՆ



Բ.  
2025






ՉԲ. ՏԱՐԻ

ՀԱՅԿԱՅԻ


ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻՐ  
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ԱՆՅՐ ԱԹՈՒՄՅՈՒՆ ՄԻՔԱՆ ԷԶԴԻԱՏՈՒ

ՓԼԿՐՈՒՄ

2025  
Լ. ԷԶԴԻԱՏՈՒՆ



ՀՐԱՄԱՆԱԻ  
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ  
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



## «ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

### Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուաւոճական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝  
Տ. Մկրտիչ եպս. Պոռշեան,  
Տ. Գեորգ եպս. Սարոյեան,  
Տ. Շահէ ծ. վրդ. Անանեան,  
Տ. Ռուբէն վրդ. Չարգարեան,  
Տ. Յուսիկ աբղ. Սմբատեան,  
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան,  
Ազատ Բոզոեան,  
Վահէ Թորոսեան,  
Կարէն Մաթեւոսեան





**“Etchmiadzin”**

Journal of Religious and Armenological Studies

***Editorial staff***

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Mkrtich Proshyan,  
Bishop Gevorg Saroyan,  
Proto-Archimandrite Shahe Ananyan,  
Archimandrite Ruben Zaragaryan,  
Rev. Fr. Husik Smbatyan,  
Fr. Ararat Poghosyan,  
Azat Bozoyan,  
Vahe Torosyan,  
Karen Matevosyan**



**«Эчмиадзин»**

Религиоведческий и арменоведческий журнал

***Редакционный состав***

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Мкртич Прошян,  
Епископ Геворг Сароян,  
Протоархимандрит Шагэ Ананян,  
Архимандрит Рубен Заргарян,  
Иеромонах Иусик Смбатян,  
Иерей Арарат Погосян,  
Азат Бозоян,  
Ваге Торосян,  
Карен Матевосян**



Տ. ՄՈՎՍԵՍ ՔԱՀԱՆԱ (ԴԱՎԻԹ) ՍԱՀԱԿՅԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ե. ԴԱՐՈՒՄ. ՄԱՐԴԱՑԱԾ ԱՍՏՎԱԾ

Սկիզբը՝ թիվ Ա.

Այս շրջանի քրիստոսաբանական պատկերացումների ուսումնասիրության շրջանակներում յուրահատուկ են նաեւ Մամբրե Վերծանողին վերագրվող ճառերը, որոնցում միեւնույն ժամանակ խոսում է եւ երկու բնությունների առկայության եւ դրանց անբաժանելի միության ու համագոյության մասին:

Հենց իր առաջին ճառում հեղինակն անդրադարձ է կատարում նեստորականներին, որոնք, իր խոսքերով՝ Քրիստոսին բաժանում էին երկուսի, կարծելով, թե նրանում մարդն աղոթում է, Աստված՝ լսում այդ աղոթքները, մարդը հուզվում է, Աստված՝ խաղաղեցնում, մինչդեռ Քրիստոս ինքն իրենով կարող էր երկուսն էլ գործել, ինչպես օրինակ ժողովրդապետի տանը, որտեղ հարություն է տալիս աղքատ եւ չի աղոթում Աստծուն, այլ ուղղակի գոչում է. «Տալիթա կումի, աղջիկ դու, արի՛ կաց» (Մարկ. Ե. 41), կամ՝ մնացյալ տեղերում. «Նոյնպէս եւ յամենայն նշանագործութիւնն. ուր անձամբն առնէր, զգաւութիւնն Աստուածութեանն ցուցանէր, եւ ուր առ Հայր աղաչանս մատուցանէր, զկատարեալ սիրելութիւնն ցուցանէր»<sup>1</sup>:

Ըստ Մամբրե Վերծանողի՝ Հիսուս Քրիստոս թե՛ իր աստվածային գոյությունն է դրսևւորում եւ թե՛ իր մարդկային կրքերն է կրում անձամբ,

<sup>1</sup> Մամբրեի Վերծանողի ծառք, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1104:

որոնք երկուսն էլ պայմանավորված են աստվածային եւ մարդկային բնությունների երկակի ներգործությամբ.

«Սա միայն կրէ զերկուս ներգործութիւնս ... կատարեցելով մարմնով երեւցուցէ զերկուս բնութիւնսն յիմեան բերելով անորիշ համագոյութեամբ, զի որպէս աննառելի Աստուածութեամբն էր ամենակատար, այսպէս եւ երեւելի մարմնովն բոլորայարմար տիեզերաց զիմն յայտնեցէ»<sup>2</sup>:

Քանի որ մարդիկ իրենց բնությամբ անկարող էին տեսնել աստվածային բնությանը, ինքն Աստված, ընդունելով մարդկային բնությունն ամբողջությամբ՝ իր բոլոր մասերով ու զգայարաններով, եւ ստուգապես միացնելով այն իր աստվածային էությանը՝ մարդկային կերպարանք է առնում.

«Վասն զի ոչ բաւ բնութիւնս՝ զբնութեանն տանել տեսութիւն, առնու զմեր կերպարանս, եւ կերպարանակից զմեր բնութիւնս իմեան առնէ ըստ շնորհի, եւ մերոնակ բնութեամբս ընդ մահու պատերազմեալ մահու չափ, զմահու կամեցաւ բառնալ զիշխանութիւն»<sup>3</sup>: «Ստուգապէս մարմնանայր Բանն՝ բովանդակ մարդկելէն մասանց ողջ զկարգն պահելով... Ի ծննդէն կրկին թուաւ մինչեւ ի խաչելութիւնն՝ երեք հնգեաշարժ զգայութեամբ, տեսանելեամ, լսելեամ, հոտոտելեամ, նաշակելեամ եւ շաւափելեամ: Զորս միացոյց ընդ իւր էութիւն, որ համբարձաւ յերկինս, ընդ նմին յարոյց եւ ըստ նմին նստոյց ընդ Հաւս»<sup>4</sup>:

Աստվածային բնության հետ միավորվելով՝ մարդկային բնությունը իր հանգստությունն է գտնում եւ դառնում է «աստվածախառն»<sup>5</sup>, իսկ ինքն Աստված՝ «մերունակերպախառն»<sup>6</sup>: Եւ քանի որ Հիսուս Քրիստոս, թեեւ երկու ներգործությամբ, բայցեւայնպէս՝ մեկ գործող անձ է, իր մարդկային կրքերը ենթարկվում են իրեն՝ Հիսուս Քրիստոսին, որ Աստված էր եւ մարդկային բնությունն առավ՝ կատարելապէս միավորելով աստվածայինն ու մարդկայինը.

«Հաղորդեսցոյ՛ւ աստուածապէս եւ մարմնաւոր անբաժանելի առանձնաւորութեանն Քրիստոսի»<sup>7</sup>: «Զի աստուածային բնութիւն անախտ եւ անուր-

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 1102, 1135:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 1123, հմմտ. նույն տեղում, էջ 1129–1130:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 1111, 1131:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 1118:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 1121:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 1127, հմմտ. նույն տեղում, էջ 1120:

տում է, այլ խոռվելն նշանակէ, թէ հրաման ետ տրտմութեանն գալ եւ բխել զարտաւսն կամատրաբար: Յուցանէ թէ յորժամ կամէր զիջանէր յայնոսիկ ի բնական կիրսն, յայտնելով զճշմարիտ մարդեղութիւնն, զի թէպէտեւ Աստուած միացաւ ի մարմնի, այլ ոչ ետ շարժել մարմնոյն ի բնական կիրսն, այլ յորժամ թոյլ տայր իջանէր ի կերակուր եւ յըմպելիս եւ ի բուն, եւ յորժամ կամէր անցանէր, որ բնութեանս գեր ի վերոյ, պահէր զինքն աստուածային միութեամբն»<sup>8</sup>:

Այսպիսով, իր մարդեղացմամբ Հիսուս Քրիստոս ըստ Վերծանողը մարդկային «հանցավոր» բնությունն է առնում եւ ըստ այդմ՝ «պարտավորություն» ընդունում, սակայն աստվածութեանը այն միացնելով՝ գործում անհանցապես<sup>9</sup>:

Այս շրջանի հեղինակներից է նաեւ Անանիա վարդապետը, որ Սբ. Պետրոսի նահատակութեանը նվիրված իր երկում բացատրում է, որ Աստծու խոսքը մարմնանալով վերցնում է մարդկային բնությունը եւ այն «խառնում» է իր բնութեանը՝ «անճառ միավորութեամբ եւ անարձակ, հարամնա կապակցութեամբ»<sup>10</sup>, որով այդ խառնումը ոչ թէ բնությունների ձուլում է ենթադրում, այլ՝ անքակտելի միություն, առանց երկվության<sup>11</sup>: Մարմնացմամբ նա վերցնում է «բոլորի մեղքերը», բայց՝ ինքը՝ «չի ախտանում» դրանից, այլ՝ մարդկային անկյալ բնությունն իրեն միավորելով բեւեռում է խաչին եւ ապա՝ բարձրացնում երկինք. «Զանկեալ բնութիւնս մեր բեւեռեաց ի խաչին, ընդ ինքեան, որպէս փայտն խոտորնակ: Դարձեալ կանգնէ ընդ ինքեան, բարձրացոյց զանկեալն գերագոյն քան զերկինս՝ յիւրն հանելով զբարձրութիւն զանկեալն ի ստորինս»<sup>12</sup>:

Հաջորդ հեղինակը՝ Սբ. Հովհան Մանդակունին, իր ճառերում անդրադառնալով Աստծու խոսքի մարդեղացմանը, բացատրում է, որ Քրիստոս՝ Աստծու Միածին Որդին է, որ իր էութեամբ Աստված է եւ իր տնօրինութեամբ դառնում է նաեւ կատարյալ մարդ: Քանի որ Աստված ինքնին չէր կարող չարչարվել եւ մահանալ, հանուն մարդկանց փրկության նա պետք է դառնար մարդ՝ ունակ դառնալու համար չարչարանքների եւ մահվան, ուստի եւ նա, որ էականն էր՝ Աստված, դառնում է մարդ. «Որ

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 1114, հմմտ. նույն տեղում, էջ 1095:

<sup>9</sup> Տէն նույն տեղում, էջ 1129–1130, 1133:

<sup>10</sup> Տէն Անանիա վարդապետի ի խորհուրդ կատարմանն Առաքելոյն Պետրոսի, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 1146:

<sup>11</sup> Տէն նույն տեղում, էջ 1147:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 1147–1148, հմմտ. նույն տեղում, էջ 1147:

ըստ էությանն անմայր, եւ ըստ տեսչութեանն անհայր՝ եկն փրկել զարարածս: Ձէ հնար եւ սոսկ Աստուծոյ շարշարել, եւ մեռանել չէր հնար. արդ էն Աստուած եկն եւ եղեմ մարդ, եւ մեռաւ եւ փրկեաց զարարածս»<sup>13</sup>:

Միեւնույն ժամանակ Քրիստոսի իբրեւ Աստված խոստովանությունը չի կարող ընկալվել իբրեւ մարդկային բնության կատարելության նվազեցում կամ մարդկային եւ աստվածային ճշմարիտ միության եղծում, այլ՝ Քրիստոսի՝ ի սկզբանե Աստված լինելու իրականության ընդունում, քանի որ աստվածային ու մարդկային միությունը ոչ թե արդեն իսկ ծնված մարդու աստվածացում էր, այլ՝ նախագո Աստծու մարդեղացում. «Միածինն, ի կուսէն ծնեալ Աստուած, եղեալ մարդ... Բանին Աստուծոյ եկեալ յերկիր եւ եղեալ մարդ, եւ մեռեալ իբրեւ զմարդ, այլ ըստ էութեանն Աստուած կոչի, եւ ոչ մարդ. եւ ըստ տեսչութեանն Աստուած մարդացեալ, եւ ոչ մարդ աստուածացեալ: Մարդ յերկինս եւ յերկրի մի եւ նոյն ինքն միացեալ միաւորեալ մարմնով եւ Աստուածութեամբ, ի սրբոյ կուսէն ծնեալ կամաւ Հաւր բան եւ միտք»<sup>14</sup>:

Այս շրջանի հաջորդ երկը, որն իրենից աստվածաբանական յուրահատուկ արժեք է ներկայացնում «Ագաթանգեղոսի պատմությունն» է, որն իր մեջ է ներառում նաեւ «Սբ. Գրիգորի Վարդապետություն» երկը:

Բուն Ագաթանգեղոսի պատմությանը մեջ քրիստոսաբանական առումով առանձնանում են երկու դրվագներ՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի աղոթքը, որը նա արտասանում է իր երկրորդ շարշարանքի ժամանակ<sup>15</sup> եւ «Պատմության» վերջում զետեղված համառոտ հավատո դավանությունը<sup>16</sup>:

<sup>13</sup> Ճառք [Յովհաննու Մանդակունույ Հայոց Կաթողիկոսի], Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 1275:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 1275:

<sup>15</sup> Տե՛ս Ագաթանգեղեայ Պատմութիւն, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Բ., Անթիլիաս–Լիբանան, 2003 (այսուհետեւ՝ Ագաթանգեղեայ Պատմութիւն), էջ 1340–1357: «Ագաթանգեղոսի պատմության» քննական բնագրում սույն աղոթքը, ինչպես նաեւ Սբ. Հովսիսիմեի աղոթքը, որը նա արտասանում է, երբ տեսնում է «չար ամբոխին», որ իրեն պիտի բռնի պալատ տանի (նույն տեղում, էջ 1387–1388), երկուսն էլ պարունակում են աստվածաբանական որոշակի խնդրահարույց դրվագներ, քանի որ երկուսն էլ տեղ-տեղ ներկայացնում են ոչ միայն Որդի Աստծուն խաչված, այլ նաեւ՝ Հայր Աստծուն, ընդորոշում՝ երբեմն անգամ միաժամանակ: Երկի բնագրերի քննությունը ցույց է տալիս, որ աստվածաբանական շփոթը, ամենայն հավանականությամբ, առաջացել է հետագա դարերում եւ խորթ է բնօրինակին: Ավելի մանրամասն տե՛ս FR. M. (D.) SAHAKYAN, Uncovering Theological Inconsistencies in the History of Agathangelos, Matenadaran: Medieval and Early Modern Armenian Studies (MEMAS), 1.1 (2204), Brepols, 2024, էջ 121–136:

<sup>16</sup> Տե՛ս Ագաթանգեղեայ Պատմութիւն, էջ 1733–1735:

Քննելով Սբ. Գրիգորի վերոհիշյալ աղոթքը, մենք տեսնում ենք, որ Պատմության հեղինակը Քրիստոսին ներկայացնում է իբրեւ Աստծու Որդու, որը «մարմին է հանգնում» եւ այդպիսով «մարդկային նմանություն է առնում», քանի որ մարդիկ չէին կարող այլ կերպ տեսնել Աստծուն եւ կենդանի մնալ: Մարդկային կերպարանք առնելով Որդին ինքն իրեն մատնում է չարչարանքների եւ անարգանքի եւ ճշմարիտ կերպով անցնելով այդ ամենի միջով՝ մարդկանց մոտեցնում է Աստծուն: Այսպիսով, Որդին Աստված լինելով մարդանում է՝ կույսից մարմին առնելով, բայց եւ մնում է Աստված, ինչպես էր. «Եկն զգենով զմեւ նմանութիւնս մարմնոյ ի կուսէ անտի, զի զմեզ անդէն առ Աստուածութիւնս յարեացէ իւրով նմանութեամբն, որ իբրեւ զմեզն եղեւ: Ծնաւ ի կուսէն մարմնով եւ մարդացաւ եւ մարմնացաւ իբրեւ զմեզ, այլ կայ եւ մնայ ի փառս Աստուածութեան իւրոյ. եւ ոչ ընկալաւ փոփոխումն յԱստուածութենէ իւրմէ. այլ նոյն է՝ որ էրն»<sup>17</sup>:

Նույն այս պատկերացումները տեսանելի են նաեւ պատմության վերջում գետեղված հավատո դավանության մեջ, մի կարեւոր հավելմամբ: Աստծու Որդին մարդանալով ոչ միայն «հանգնում է մարդկային բնություն», այլեւ՝ «խառնում է այն իր անխառն աստվածությանը», ինչը նախ նշանակում է, որ «հանգնելը» կատարյալ միություն է ենթադրում, եւ երկրորդ՝ որ այդ կատարյալ միությունը, որը բնութագրվում է իբրեւ «խառնումն»՝ անտրոհելի է: Մարդկային բնությունը «խառնվում է անխառն աստվածությանը»՝ միավորվում նրա հետ, բայց չի փոխում այն: Աստվածությունը, հետեւաբար եւ մարդկությունը մնում են այնպիսին, ինչպիսին են բնությամբ, բայց՝ անբաժանելի կերպով միավորված իրար.

«Եւ զԲանն Աստուած Որդի՝ ծնունդ ի Հաւրէ յառաջ քան զյափտեանս, առանց սկզբան ժամանակի. աննառ, առանց բաժանելոյ, անփակ՝ առանց մեկնելոյ. առանց չարչարանաց. առանց միջնորդի. եւ նոյն ծնունդ՝ ի կուսէն մարմնով ծնեալ ի վախճանի:

Առաւելաւ Աստուած յԱստուծոյ Որդի, առ մարմին ի կուսէն, եւ եղեւ մարդ կատարեալ. բովանդակեցաւ ճշմարտութեամբ ի մարմին եւ ճշմարիտ իսկ մարդ եղեւ:

Խոնարհեցաւ եւ խառնեաց զԱստուածութիւնս ընդ մարդկութիւնս եւ զանմեռն ընդ մեռոտս, զի զմարդկութիւնս անփակ արացէ յանմահութենէ Աստուածութեան իւրոյ:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 1343–1344:

Զի որպէս կամեցաւ, զինչ կամեցաւ՝ եւ եղեւ. եւ որպէս կամեցաւ՝ եւ արար. քանզի չիք ինչ անհնարաւորութիւն ի նմա. եւ յամենայնի զարատր է, եւ որ ինչ կամի՝ ո՛չ զանցանէ. եւ զմեր հողեղէն բնութիւնս զգեցաւ եւ խառնեաց յան-խառն Աստուածութիւն իւր եւ յանապականութիւնն:

Վասն մեր էարբ զբաժակն մահու եւ ետ մեզ զբաժակն անմահութեան, եւ զմեռելութիւն արարածոցս կենդանացոյց մահուամբն իւրով, յորժամ յարեալ մարմնովն եւ նստալ ընդ աջմէ ծնողին իւրոյ եւ խառնեաց յԱստուածութիւն իւր միաժինն»<sup>18</sup>:

*Քրիստոսաբանական տեսանկյունից բացառիկ է հատկապէս «Սբ. Գրիգորի վարդապետությունը», որ գետեղված է «Ագաթանգեղոսի պատմության» մեջ: Այստեղ մենք տեսնում ենք, որ Աստծու Որդին գալով աշխարհ՝ սուրբ կույսից մարմին է վերցնում, որով զգեստավորվում է եւ նմանվում է մարդկանց, քանի որ խառնելով այդ մարմինը իր աստվածությանը՝ միավորում է դրանք, դարձնելով անտրոհելի: Այսպիսով նա, որ անսահման էր եւ անբովանդակելի՝ սահմանափակվում է մարդկային մարմնի մեջ եւ դառնում է ճշմարիտ եւ կատարյալ մարդ՝ կատարյալ աստվածությամբ, միաժամանակ հայտնելով մարդկանց ինչպէս իր աստվածային զորությունը, այնպէս եւ՝ մարմնական, մարդկային տկարությունը: Նրանք, որ հավատում են նրա մարդկությանը՝ հաղորդ են դառնում նաեւ նրա աստվածությանը, բայց նրանք, որ գայթակղվում են նրա մարմնով՝ ուրանում են նաեւ նրա աստվածությունը, քանի որ նա միավորեց մարդկայինն ու աստվածայինը՝ ծառայակից դառնալով մարդկանց իր մարմնով եւ անբաժանելի մնալով Հորից իր աստվածությամբ.*

«Բովանդակեցաւ ճշմարտութեամբ ի մարմին, եւ ճշմարիտ մարդ եղեւ, եւ էջ յանարգութիւն, զի զմեզ բարձրացուցէ: Սակայն իւրով Աստուածութեամբն յերկինս է եւ յերկրի՝ առ Հաւր եւ ընդ Հաւր ... Զի թէպէտ զկերպարանս առ եւ զմարմին մարդկան՝ այլ խառնեաց միացոյց ընկղմեաց զմարմինն յԱստուածութեան իւրում ... Որ առ զմարմին անըմբռնելին, եւ շաւափեցաւ եւ ըմբռնեցաւ մարմնովն. եւ զամենայն անցս մարմնոյն յանձն առեալ իւրով կամաւ... զի ցուցցէ զմիաւորական զանգակ զանբաժին ինքնութեանն միութիւն»<sup>19</sup>:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 1734:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 1476–1478, հմմտ. նույն տեղում, էջ 1470–1473, 1478–1480:

Ստորեւ մեջբերում ենք նաեւ որոշ հատվածներ «Վարդապետությունից»՝ ցույց տալու համար հեղինակի քրիստոսաբանական ընկալումների աստիճանը.

ա. «Վասն մարմնածին ծննդեան աստուածորդոյն, հոգեխառն բանիւ՜ գաստուածախառն մարմնոյն. զոր յառաջագոյն Աստուած եցոյց զիրոյ Որդոյն զգալուստ»<sup>20</sup>;

բ. «Արդ՝ առաքեաց Աստուած զՀոգին սուրբ ի կոյսն Մարիամ, եւ առ Աստուածորդին մարմին ի կուսէն. որով կորոյս զշարն՝ դովին մարմնովն պարտաւրեաց զմեղսն աստուածախառն մարմնովն»<sup>21</sup>;

գ. «Երկրաւորաւս գիտասցոյ՜ զմարմինն, եւ երկնաւորաւս ծանիցոյ՜ զԱստուածութիւնն»<sup>22</sup>;

դ. «Ամենատեառնն, որ վասն մերոյ կենաց մարդացաւ եւ մարդակերպ շրջեցաւ, եկեր իբրեւ զմեզ եւ արբ. տանջեցաւ, շարշարեցաւ, խաչեցաւ, բեւեռեցաւ, սպանաւ, թաղեցաւ, կենդանացաւ, յարեաւ, վերացաւ եւ ել նստաւ ընդ աջմէ ծնողին իւրոյ Աստուծոյ»<sup>23</sup>;

ե. «Զի ոչ եթէ յորմէ հետէ ծնունդն ի կուսէն իցէ՝ յայնմ հետէ է սկիզբն անսկզբանն Բանին գոյացութեան. այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս ծնաւ ի Հաւրէ, իսկ արդ վասն մեր էջ եւ մարմնով ծնաւ ի կուսէն. այլ այնր ծննդոյ Հաւր որ զնայն ծնաւ՝ նա միայն գիտէ: Իսկ երկրորդ ծնունդն շնորհիւ իւրով ի մէջ մարդկան. վասն զի կեցուցէ զմարդիկ, եւ արհմեցէ յառաջին անիծից անտի գերկիր»<sup>24</sup>;

զ. «Զնշմարիտ կերպարանս բերեալ ի սուրբ կուսէն, եւ ոչ առ աչաւ ինչ տեսիլ: Զի սկիզբն առնու անսկզբնականն»<sup>25</sup>;

է. «Վասն զի տեսին զՏէրն եւ զԱրարիչն արարածոց, զի խոնարհեցաւ ի բաժակ խոնարհութեան մահու անարգութեան՝ ինքնակամ իւրով կամաւ, եւ արբ զհամբերութիւն շարշարանաց բաժակին ինքնայաւժար խոնարհութեամբն... զի զմեր անարգութիւնս բարձցէ եւ զմեր շարշարանս յանձն առցէ եւ մերում մահուն հաւասարեցէ հանութեամբ կամաց իւրոց. զի որպէս կամեցաւ, զինչ կամեցաւ՝ եւ եղեւ, եւ որպէս կամեցաւ՝ արար: Զի զմեր հողեղէն բնու-

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 1474:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 1480:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 1481:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 1482:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 1482–1483:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 1487:

թիւնս զգեցաւ, եւ խառնեաց յանխառն Աստուածութիւնն, զի տացէ մեզ զիւր անմահութիւնն եւ զանվշտութիւնն եւ զանշարշարութիւնն: Զապականացու մարմինս խառնեաց յանապականութիւն Աստուածութեանն, զի զբնութիւնս մեր անապականս գործեսցէ»<sup>26</sup>:

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք ասել, որ «Ագաթանգեղոսի պատմութեան» մեջ («Սբ. Գրիգորի Վարդապետութեանը» ներառյալ) Աստծու Որդու մարդեղացումը բնորոշվում է երկու՝ «զգենումն» եւ «խառնումն» եզրույթների կիրառմամբ, որոնցից առաջինի կողքին մենք հաճախ հանդիպում ենք «մարմնի նմանութեան», «կերպարան», «նկարում», «տիպավորում», «մարդկային պատկեր» արտահայտությունները<sup>27</sup>: Վերջիններս, սակայն, երեւութականութեան չեն կարող ենթադրել<sup>28</sup>, քանի որ նրանց կողքին հեղինակը ներկայացնում է Քրիստոսին իբրեւ ճշմարիտ մարդ: Երկու՞ Քրիստոսի մարդկային եւ աստվածային կատարելությունը շատ հստակ է ու շեշտվում է եւ մարդկության խառնումը Աստվածութեանը եւ Աստվածութեան խառնումը մարդկությանը, ինչն ընդգծում է բնութայինների հավասար եւ կատարյալ միությունը<sup>29</sup>: Եւ ավելին՝ մարմնի «խառնումը» տեղի է ունենում «յանխառն Աստուածութիւնն»<sup>30</sup>, ինչը եւս մեկ անգամ ընդգծում է, որ «խառնումն»-ն իրենից չի ենթադրում շփոթում կամ ձուլում, այն՝ աստվածայինի եւ մարդկայինի անքակ եւ անտրոհելի միություն է:

Այս շրջանի վերջին երկու հեղինակները, որոնցով փակվում է Ե. դարի քրիստոսաբանական մտքի ուսումնասիրությունը՝ Սբ. Մովսէս Խորենացին եւ Ղազար Փարպեցին են, որոնք իրենց երկերի բնույթով պայմանավորված թեեւ խորապես չեն ներկայացնում իրենց քրիստոսաբանական ընկալումները, այդուհանդերձ, հստակ անդրադարձ են կատարում Քրիստոսին եւ ուղղափառ վարդապետությանը: Նրանցից առաջինը՝ Խորենացին, իր «Պատմութեան» շրջանակներում խոսում է արիոսականների եւ նեստորականների մասին<sup>31</sup>, որոնք մերժում էին հավատալ Քրիստոսին

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 1539–1540, հմմտ. նույն տեղում, էջ 1583:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 1343–1345, 1353, 1476, 1478, 1490, 1581, 1619–1620:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 1478, 1487, 1734:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 1472, 1473, 1477, 1479–1481, 1734: Հեղինակը նաեւ բազմիցս օգտագործում է «աստուածախառն մարմին» արտահայտությունը (տե՛ս նույն տեղում, էջ 1474, 1480, 1602):

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 1539, 1734:

<sup>31</sup> Տե՛ս Հայոց Պատմութիւն յերիս հատուածս ասացեալ Մովսիսի Խորենացոյ ի խնդրոյ Սահակայ Բագրատունոյ, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Բ., Անթիլիաս–Լիբանան, 2003,

իբրեւ Աստծու, եւ ինքը խոստովանում է, որ Քրիստոս Աստված է եւ Աստծու Որդի, որին հրեաները խաչեցին «առանց իրիք յանցանաց»<sup>32</sup>: Երկրորդը՝ Փարպեցին, նույնպէս անդրադառնում է Քրիստոսի աստվածութեանը եւ խոստովանում:

«Մի ի սրբոյ Երրորդութենէդ ծնար ի սուրբ կուսէն Մարիամայ, եւ զամենայն կարիս բարձեալ Բոյին մարմնովդ, զոր ի սուրբ եւ յաստուածածին կուսէն առե՛ր՝ տաւեալ բեւեռեցեր ի խաչին փայտի. յորում հեղեալ զսուրբ արիւնդ Բ՛ն՝ ազատեցեր զաշխարհս ի ծառայութենէ մեղաց անիծից. մեռար, թաղեցար եւ յարեար, եւ վերացեալ յերկինս՝ ետուր աւետիս խոստման՝ տանել առ Բեզ զամենեսեան, որ խոստովանին առ Բեզ, Աստուած ճշմարիտ, թագաւոր թագաւորաց եւ տէր տէրանց: Եւ մեք վկայեմք եւ խոստովանիմք զԲեզ Աստուած աստուծոց եւ տէր տէրանց, Աստուած Բափշ մեղաց մեռոց»<sup>33</sup>:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Ե. դարի բոլոր հեղինակները, անկախ իրենց երկերի բնույթից, ունեն քրիստոսաբանական տեղիներ, որոնց մեծամասնութիւնը ծառայում է Քրիստոսում աստվածային եւ մարդկային միութիւնը բացատրելու նպատակին: Նրանց քրիստոսաբանական հայացքների ուսումնասիրութիւնը յուրահատուկ ընկալումներ է մեր առջեւ բացում: Մենք տեսնում ենք, որ նրանց երկերում Հիսուս Քրիստոս ներկայանում է իբրեւ Աստված եւ Աստծու Որդի, որ խոնարհվելով հագնում է մարդկային բնութիւն՝ ճշմարտապէս մարդ դառնում եւ իրար խառնելով աստվածային ու մարդկային բնութիւնները՝ միավորում դրանք անտրոհելի եւ անշփոթելի կերպով, ներկայանալով մարդկանց իբրեւ կատարելապէս մարդ դարձած կատարյալ Աստված:

Աստծու Որդու մարդեղացումը նրանք բացատրում են մի շարք եզրույթներով, որոնցից ամենահաճախակի կրկրնվողները «զգենումն» եւ «խառնումն» են: Եզրույթներից առաջինն առկա է գրեթե բոլոր հեղինակների երկերում, իսկ երկրորդի կիրառութիւնը ավելի քիչ է: Եր-

էջ 1990, 2097:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 1901, հմմտ. նույն տեղում, էջ 1904, 1906, 2009:

<sup>33</sup> Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2258, հմմտ. Թուղթ Ղազարայ Փարպեցւոյ մեղադրութիւն ստախաւ աբեղայից յառաջաբան թղթոյս առաքեալ ՅԱՄԻԹ քաղաքէ, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2381, 2390:

բեմն երկու եզրույթները հանդիպում են անգամ միասին՝ բնորոշելով մի գործընթաց՝ Աստծու Որդին վերցնում է այն, ինչն իրենք չէր (մարմին՝ մարդկային բնությունը) եւ դարձնում իրենք: Իր մարմինը (մարդկային բնությունը) դառնում է «աստվածախառն» իսկ ինքն Աստծու Որդին՝ «մե-րունակերպախառն», որով մատնանշվում է աստվածային եւ մարդկային բնությունների հավասար, կատարյալ եւ անքակտելի միությունը:

Այս շրջանի բոլոր հեղինակները խոսում են երկու բնությունների՝ աստվածայինի եւ մարդկայինի գոյության մասին, որոնք միավորված են Հիսուս Քրիստոսով եւ բնորոշում են մի եւ նույն մարդացյալ Աստծուն: Քրիստոսում որեւէ երկվություն չի կարող լինել՝ բաժանում Աստծու եւ մարդու միջեւ, ինչի դեմ առաջին անգամ խոսում են Սբ. Սահակն ու Սբ. Մեսրոպ Մաշտոցը: Միեւնույն ժամանակ, անհերքելի է, որ Հիսուս Քրիստոս կատարյալ Աստված է, որ դարձել է նաեւ կատարյալ մարդ: Եզնիկ Կողբացին անվանում է Քրիստոսին «Աստված եւ մարդ», իսկ Սբ. Կույսին՝ «Աստվածածին եւ Տիրածին»: Մամբրե Վերծանողը, մերժելով որեւէ երկվություն Քրիստոսում, ներկայացնում է նրան իբրեւ «մի անձ, երկու ներգործությամբ»՝ աստվածային եւ մարդկային: Նման պատկեր տեսանելի է նաեւ Սբ. Եղիշեի երկերում, որտեղ հեղինակը խոսելով Քրիստոսի «ըստ աստվածության» եւ «ըստ մարդկության» հայտնվելու մասին, նշում է Նրա «մի անձ եւ մի բնություն» ունենալը, ցույց տալով, որ մի բնությունը չի ենթադրում երկու բնություններից եւ որեւէ մեկի ազավա-ղում, այլ՝ կատարյալ միությունը մեկ Հիսուս Քրիստոսում:

Այսպիսով, Ե. դարի սկզբնախբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայոց Եկեղեցու համար Հիսուս Քրիստոս Աստված է եւ Աստ-ծու Որդի, որ մարդացել է եւ դարձել կատարյալ մարդ, մնալով կատարյալ Աստված, այլ կերպ ասած՝ մարդացած Աստված:

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աստված, քրիստոսաբանական տեղիներ, «կերպարան», «նկարում», «տիպավորում», «մարդկային պատկեր»

## РЕЗЮМЕ

Настоящая статья посвящена исследованию христологической мысли Армянской Церкви V века с особым акцентом на осмысление единства божественной и человеческой природ в Иисусе Христе в трудах армянских церковных отцов. Автор проводит всесторонний анализ широкого круга первоисточников, включая труды таких выдающихся армянских богословов, как Григорий Просветитель, Саак Партев, Месроп Маштоц, Езник Кохбацци, Павстос Бузанд, Егисше, Мамбрэ Толкователь, Анания Переводчик, Иоанн Мандакуни, Агафангел, Мовсес Хоренаци и Лазарь Парпеци.

Особое внимание уделяется тому, как Армянская Церковь сформировала уникальное христологическое учение, основанное на специфической терминологии, отражающей её самобытную богословскую традицию. В статье рассматриваются ключевые концепции, такие как «*облачение*» и «*смещение*», которые в армянском богословском дискурсе выражают совершенное и нераздельное единство божественного и человеческого во Христе.

Статья детально раскрывает основные аспекты богословской мысли Армянской Церкви V века, подчёркивая глубину её христологических представлений, незыблемость догматической ортодоксии и её вклад в развитие христианской богословской традиции.

## SUMMARY

This study investigates the development of Christological thought within the Armenian Church during the 5<sup>th</sup> century, with a particular emphasis on the theological articulation of the unity of divine and human natures in Jesus Christ as expounded by Armenian Church Fathers. The research undertakes a systematic analysis of an extensive corpus of primary sources, encompassing the works of eminent Armenian theologians such as Gregory the Illuminator, Sahak Parthev, Mesrop Mashtots, Eznik of Kolb, Faustus of Byzantium, Eghishe, Mambré the Interpreter, Anania the Translator, John Mandakuni, Agathangelos, Moses of Khoren, and Lazarus of Parpi.

Special attention is accorded to the distinctive Christological paradigm formulated within the Armenian ecclesiastical tradition, which is predicated upon a conceptual framework reflecting its unique theological discourse. The study

examines fundamental doctrinal constructs such as “clothing” and “mixing,” which, in the Armenian theological lexicon, encapsulate the ontological and soteriological dimensions of the perfect and indivisible hypostatic union of the divine and human natures in Christ.

By offering a critical examination of the principal trajectories of Armenian theological thought in the 5<sup>th</sup> century, this study underscores the doctrinal profundity of its Christological formulations, the theological coherence and resilience of its dogmatic orthodoxy, and its enduring contribution to the broader landscape of patristic Christological discourse.



ՀԱՍՄԻԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

## ԾՈՍԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ (ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)

Սկիզբը՝ թիվ Ա.

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Ծոմապահությունը Մեծ պահքի ընթացքում: Վերը տեսանք, որ եկեղեցական ծիսակարգի համաձայն՝ Առաջավորաց եւ Մեծ պահքից բացի, մյուս պահքերը ծոմ չունեն<sup>1</sup>, սակայն պատկերն այլ է ժողովրդական տոնացույցում: Եթե Սբ. Սարգսի եւ Սբ. Հակոբի ծոմապահքերին գերազանցապես երիտասարդներն ու կանայք են հետեւել, ապա Մեծ պահքի ընթացքում այլ թե կին, ծեր ու մանուկ մինչեւ ճաշի ժամը (մինչեւ ճաշու ժամերգությունը) միաժամ կամ անսվաղ ծոմ են պահել: Տարբեր են եղել ծոմապահության ժամկետները՝ մինչեւ ճաշու ժամը կամ մինչեւ երեկո<sup>2</sup>, Մեծ պահքի ողջ ընթացքում<sup>3</sup>, Մեծ պահքի ընթացքում՝ երկու շաբաթ, հատկապես՝ հիվանդները, հղի կանայք եւ երեխաները<sup>4</sup>, երբեմն՝ առաջին եւ վերջին շաբաթներին<sup>5</sup>, շաբաթվա ընթացքում՝ երեք կամ հինգ օր<sup>6</sup>, շաբաթական մեկ, երկու կամ երեք օր<sup>7</sup>, Ավագ հինգշաբթի օրը<sup>8</sup>, Ավագ Հինգշաբթիից

<sup>1</sup> Տես ՄԱՊԱՔԻԱ ԱՔՐ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ծիսական բառարան, էջ 24:

<sup>2</sup> Ա. ԱԹԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 178, Կ. ԳԱՔԻԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 277–278, Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ, Մուսա լեռան ազգագրությունը, Երեւան, 2001, էջ 236, 254:

<sup>3</sup> Տես, օրինակ, Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Զաւարթ, Նշանաւոր տօներ, ԱՀ, գր. Բ., էջ 266, ՎԱՀԱՆ ՎՐԳ. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 109, Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ, Հոս կինը, Ժողովածու երկերի. հտ. Գ., Բոստոն, 1948, էջ 65–66, Ա. ԱԼՈՅԱՃԵԱՆ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտ. Բ., էջ 1747–48, Գ. ԳԵՐԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 466, 436, ՎԱՀԷ ՀԱՅԿ, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 688:

<sup>4</sup> Տես Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 253, Գ. ԳԵՐԳԵԱՆ, Դզլար, ՀԱՐ, պր. 10, Երեւան, 1980, էջ 69:

<sup>5</sup> ՎԱՀԷ ՀԱՅԿ, նշ. աշխ., էջ 688:

<sup>6</sup> Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ, Պատմութիւն Մալաթիոյ հայոց. տեղագրական, պատմական եւ ազգագրական, Սեւան, 1961, էջ 1136: Ինչպես վերը տեսանք, եկեղեցական ավանդույթի համաձայն՝ Մեծ պահքի ընթացքում ծոմ հրամայված է շաբաթվա հինգ օրերին՝ առանց շաբաթի եւ կիրակիի:

<sup>7</sup> Պատմագիրք Կիրինի, պատասխանատու խմբագիր՝ Պ. ՄԻՆԱՍԵԱՆ, Պէյրութ, 1974, էջ 386:

<sup>8</sup> Կ. ԳԱՔԻԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 673, հմմտ. Պատմագիրք յուշամատենան Սեբաստիոյ..., էջ 383, ԵՐ. ՄՈՎՍԻՍԵԱՆ, Զարչարանքի շաբաթ (Շիրակի գիւղական կենսաբից), Ա. Զիք-շորեք-

մինչև Ավագ շաբաթ օրը<sup>9</sup>, Ավագ շաբաթվա ընթացքում<sup>10</sup>, Ավագ շաբաթ օրը<sup>11</sup>: Ավագ կամ Ութի (Հուդայի) ուրբաթի հետ կապված հանդիպում են եւ ծոմ չպահելու, եւ պահելու օրինակներ: Ավագ շաբաթվա ուրբաթ ցերեկը ծոմ պահելն արգելված է եղել՝ Հուդային եւ սատանային ճաթեցնելու համար<sup>12</sup>: Ութի ուրբաթ օրը կանայք մատնիչ Յուդայի ջիգրու ծոմ են պահում<sup>13</sup>:

Եթե Սբ. Սարգսին նախորդող շրջանում հիմնականում ծոմ են պահել երիտասարդները, մասնավորաբար՝ աղջիկները, ապա Մեծ պահքի ընթացքում բոլորն են պահել, սակայն մեծահասակները գերակշռել են, ովքեր ամբողջ ընթացքում ծոմ են պահել: Սա բացատրելի է նրանով, որ Մեծ պահքն ընդհանրական ապաշխարության շրջան էր, իսկ պահքը, իր դրսևորումներով, ապաշխարության ընթացքի մաս է կազմում<sup>14</sup>:

Սբ. Ծնունդ: Ծոմ էին պահում Սբ. Ծննդյանը նախորդող ութօրյա պահքի ընթացքում՝ հիմնականում հունվարի 5-ին՝ երեկոյան Ճրագալույցի պատարագին հաղորդվելու ականակիքով<sup>15</sup>: Այս պահքի ընթացքում նաեւ երեք կամ հինգ օր էին ծոմ պահում, բայց որպես Նավակատիք այն հիմնականում լուծվում էր ձկով, յուղով եփված փլավով<sup>16</sup>, կաթնամթերքի հումքով պատրաստված կերակուրներով, օրինակ՝ թարխանայի (չորաթանի<sup>17</sup>) ապուրով<sup>18</sup>, կաթնահունցով, բիկեղով (յուղով, կաթով խմորեղեն<sup>19</sup>)<sup>20</sup>,

շաբթի, Ավագ-հինգշաբթի, Յուդի-ուրբաթ, Զատիկ-շաբաթ, «Արարատ», էջմիածին, 1899, թիւ Գ.-Դ., էջ 147:

<sup>9</sup> Ս. ԱՎԱԳՅԱՆ, Շարուր, Երեւան, 1998, էջ 43:

<sup>10</sup> ՀԱԻ արխ., Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ֆոնդ, էջ 32, Հաճընի ընդհանուր պատմութիւն եւ շրջակայ Գօգան-Տաղի հայ գիւղերը, երկասիրեց՝ Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, Լօս Անճէլլա, 1942, էջ 202:

<sup>11</sup> Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Սիսիան, Նշանաւոր տօներ, ԱՀ, գք. Գ., էջ 256, Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Զանգեզուր, Նշանաւոր տօներ, ԱՀ, գք. Դ., Թիֆլիս, 1898, էջ 111, Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Բորչալուի գաւառ. Նշանաւոր տօներ, ԱՀ, գք. Ժ., էջ 263, ՍՏ. ԼԻՍԻՅԱՆ, Զանգեզուրի հայերը, Երեւան, 1969, էջ 272, Մ. ՃԻՆՊԱՇԵԱՆ, Ֆրնտըճագ Ֆրնտըճօխ, Մոնթէվիտէօ, 1949, էջ 20:

<sup>12</sup> Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ, Պատմութիւն Մալաթիոյ հայոց..., էջ 1141:

<sup>13</sup> Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ, նշ. աշխ., 1948, էջ 67:

<sup>14</sup> Այս մասին տես, օրինակ, Ա. ՏԵՐ-ՄԻՔԵԼՅԱՆ, Հայաստանյայց Սբ. Եկեղեցու քրիստոնեականը, Ս. էջմիածին, 2007, էջ 417–438, տե՛ս նաեւ Վ. ՄԱՇԹՈՅ, Նախնեաց կանոնական ապաշխարութիւնը, «Մասիս», Կ. Պոլիս, 1896, թիւ 10, էջ 302–307:

<sup>15</sup> ՏԵՍ, օրինակ, Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Վարանդա. Նշանաւոր տօներ, ԱՀ, գք. Գ., էջ 339:

<sup>16</sup> Անդ:

<sup>17</sup> ՏԵՍ ՀԼԲԲ, հտ. Բ., էջ 87, Ա. ՍԱՐԳՅԱՆ, նշ. աշխ., 598:

<sup>18</sup> ՏԵՍ Ե. ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 128:

<sup>19</sup> ՏԵՍ ՀԼԲԲ, հտ. Ա, էջ 194:

<sup>20</sup> ՏԵՍ Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ, նշ. աշխ., էջ 246:

նաեւ՝ տապակած բանջարով<sup>21</sup>: Աշտարակում չամուսնացած աղջիկներն ու տղաները միաժողով ծոմ էին պահում եւ Զրօրհնեքի կամ Թաթախման օրը՝ վաղ առավոտյան, գնում էին եկեղեցի՝ մասնակցելու պատարագի, ապաշխարում էին եւ հաղորդություն ստանում<sup>22</sup>:

Աբ. Ծննդյան եւ Հարություն պահքերը կամ ծոմապահքերը, ըստ եկեղեցական եւ ժողովրդական ծիսակարգերի, լուծվում էին երեկոյան՝ Նավակատիքի կերակրով:

Ծոմապահության այլ ժամկետներ: Ծոմապահել են Տաղավար տոների շաբաթապասերին<sup>23</sup>, սրբերի տոներին ընդառաջ<sup>24</sup>, տարբեր պասերի ընթացքում<sup>25</sup>, տարվա կեսից ավելին<sup>26</sup>:

Տոնածիսական ժամկետներից զատ, ծոմապահությունը հանդիպում է նաեւ կենցաղային դրվագներում՝ տարբեր ժամկետներով եւ նպատակներով՝ երաշտից ազատվելու<sup>27</sup>, քահանայական ձեռնադրությունից հետո<sup>28</sup>, քահանայի անեծքից արձակվելու<sup>29</sup>, օժիտն ավելացնելու կամ հարսանանալու<sup>30</sup>, անհատական ուխտի<sup>31</sup>, առողջության<sup>32</sup>, պանդուխտի վերադարձի<sup>33</sup> եւ այլն: Ծոմապահության այս դրվագների ժամկետները տարբեր են՝ մեկից մինչեւ քառասուն օր: Դրանք լինում են ինչպես անհատական, այնպես եւ հավաքական (օրինակ՝ երաշտից ազատվելու նպատակով պահ-

<sup>21</sup> Տէս Ե. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 128:

<sup>22</sup> Ք. ՊԱՊԻՅԱՆ, Աստվածահայտնության կամ Մկրտության տոնը ուշ միջնադարյան աղբյուրներում, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Երեւան, 2015, էջ 334:

<sup>23</sup> Տէս, օրինակ, Գ. ԳԵՈՐԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 430, 466:

<sup>24</sup> Գ. ԳԵՈՐԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 436, ՆԱՐ-ԴՈՍ, Ինչպես բժշկեցին, «Մեր թաղը» պատմվածաշար, Երկերի ժողովածու, հտ. Ա., Երեւան, 1989, էջ 30–31:

<sup>25</sup> Ա. ԱԼՊԵՍԱՃԵԱՆ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտ. Բ, էջ 1747–1748, Յ. Ա. ՊԵՆՆԵԱՆ, Մեծ պահքի առթիւ, Կարգ մը սովորութիւններ Մալաթիոյ մէջ, «Բիւրակն», 29 փետրվար, 1900, էջ 125:

<sup>26</sup> Ա. ԱԼՊԵՍԱՃԵԱՆ, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտ. Բ., էջ 1747–48:

<sup>27</sup> Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, Բ., ԱՆԱՆՈՒՆ ԵԳԵՍԱՅԻ, Ժամանակագրություն, թարգմանությունը բնագրից, առաջաբանը եւ ծանոթագրությունները Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, Երեւան, 1982, էջ 176:

<sup>28</sup> Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, 663:

<sup>29</sup> ՄԿՐՏԻՋ ԱԻԱԳ ՔԶՅ. ՄՈՒՐԱՏԵԱՆ, Սասնոյ Մատնէ վանքը, «Հասկ», Անթիլիաս, 1948, թիւ 6–7, էջ 161:

<sup>30</sup> Ա. ԱԼՊԵՍԱՃԵԱՆ, Պատմութիւն Մալաթիոյ հայոց, էջ 1136–37:

<sup>31</sup> Բ. ԺԱՄԿՈՋԵԱՆ, նշ. աշխ., էջ 78:

<sup>32</sup> Լ. ՍԻՄՈՆՅԱՆ, Տոմարային ծիսաշար, հտ. Ա, Տոմար. Զմեռ. Նորի տարի եւ Աբ. Ծնունդ, Երեւան, 2006, էջ 59:

<sup>33</sup> ԽՈՒՓՍԵՅԻ, նշ. աշխ., էջ 122–123:

վող ծոմը) նպատակներով: Ծոմը եղել է նաեւ պատժի ձեւ՝ պասը խախտողին տան ավագը պատժել է՝ երեք օր ծոմ պահելով<sup>34</sup>:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Ա. Եթե եկեղեցական ավանդույթում ծոմապահքը ջրից եւ սննդից հրաժարումն է, ապա ժողովրդական տոնացույցում եւ կենցաղում հանդիպում է ծոմի երեք տեսակ՝ միաժամ (օրական մեկ անգամ սնվել), անսվաղ (միայն ջուր խմել) եւ առանց սննդի ու ջրի ծոմ: Բ. Ինչպես եկեղեցական ավանդույթում, այնպես եւ ժողովրդական տոնացույցում ծոմի հիմնական ժամկետները Առաջավորաց (կամ Սբ. Սարգսի) եւ Մեծ պահքերն են, սակայն ժողովրդական տոնացույցում ծոմը, իր երեք տեսակներով, հանդիպում է նաեւ Սբ. Հակոբի տոնին նախորդող շաբաթապահքի եւ Սբ. Ծննդյան տոնին նախորդող ութօրյա պահքի, տաղավար եւ որոշ սրբերի տոներին նախորդող շաբաթապահքերի եւ այլ պահքերի շրջաններում: Գ. Առաջավորաց հնգօրյա ծոմապահքն ունեցել է երեք ժամկետ՝ առաջին կամ վերջին երեք օրերին կամ ամբողջ հինգ օրվա ընթացքում: Այս ծոմն ունեցել է լուծման երկու եղանակ՝ ժողովրդական եւ եկեղեցական: Առաջին դեպքում ծոմը լուծվել է խաչմեր՝ օրհնված ջուր խմելով, հատիկեղեմի հումքով պատրաստված փոխինդ (եւ/կամ հալվա) կամ մատաղ ճաշակելով, երկրորդ դեպքում՝ Սբ. Պատարագից հետո Սբ. Հաղորդույթուն ստանալով: Դ. Սբ. Սարգսի եւ Սբ. Հակոբի տոներին նախորդող շաբաթապահքերն ունեն հետեւյալ ընդհանրությունները, ա) դրանք կարող են տեւել մեկ, երեք կամ հինգ օր եւ ուղեկցվել ծոմապահությունամբ, հիմնականում՝ անսվաղ, բ) ծոմը լուծվել է խաչմեր խմելով կամ փոխինդ (եւ/կամ հալվա) ճաշակելով, գ) երկուսին էլ բնորոշ է եղել ծոմբացի սովորույթը: Ե. Ծոմապահության եւ ծոմալուծության ժողովրդական սովորույթի համապատկերում դիտարկելով Սբ. Սարգսի եւ Սբ. Հակոբի ծոմապահքերի ժամկետները (առաջինը՝ հունվար-փետրվարին, երկրորդը՝ դեկտեմբերին) եւ ջրի շեշտադրումն այդ ծոմապահքերում՝ տեսանելի է, որ առաջինը սերտորեն առնչվում է գյուղատնտեսական աշխատանքներին նախորդող, երկրորդը՝ դրանց ավարտի շրջանին, որի բարեհաջող արդյունքը մեծապես պայմանավորված էր նաեւ հունվարի-փետրվարին

<sup>34</sup> ՀԱԽ արխ., Գ. ՀԱԼԱՋՅԱՆԻ ֆոնդ, էջ 1168–1169:

տեղացած ձյան, հետեւաբար՝ ջրի անհրաժեշտ քանակի առկայությամբ: Զ. Ծոմապահույթյուն հանդիպում է նաեւ կենցաղային դրվագներում ինչպես անհատական, այնպես եւ համայնքային նպատակների իրականացման ակնկալիքով: Է. Քանի որ պահքը լուծվում է Սբ. Հաղորդույթյուն ստանալով, իսկ Սբ. Հաղորդույթյուն ստանալու նախապայմաններից է ծոմապահույթյունը, հետեւաբար՝ բոլոր պահքերը, անկախ այն հանգամանքից՝ ընթացքում ծոմ ունեն, թե ոչ, ավարտվում են ծոմի ամենախիստ դրսևորմամբ՝ սննդից եւ ջրից հրաժարվելով:

### ՀԻՄՆԱԲԱՆԵՐ

Ծոմ, պահք, Առաջավորաց պահք, Սբ. Սարգիս, Սբ. Հակոբ, տոն, Խաչմեր, Խաչավա, օրհնված ջուր, եկեղեցական տոնացույց, ժողովրդական տոնացույց:

### РЕЗЮМЕ

Данная статья посвящена одному из видов поста, который называется говение (цом). Рассматриваются народные проявления цома, в частности даты, виды цома, продолжительность и способы разговения, сравнивая их с традицией Армянской Апостольской Церкви. Если в церковной традиции цом - это отказ от воды и пищи в течении определенного времени, то в народном праздничном календаре и в быту различаются три вида цома: миажум цом (прием пищи один раз в день), ансваг цом (питье только воды) и цом без еды и воды. Согласно традиции Армянской Апостольской Церкви, основными периодами цома являются все дни от понедельника до пятницы следующих постов — Арачаворац (или пост Св. Саркиса) и Великий пост. В народном календаре, кроме указанных дат, цом соблюдается также в течении предшествующих постов пяти главных праздников (Рождество, Пасха, Преображение, Воздвижение Креста Господня, Успение Пресвятой Богородицы) и во время разных постов. Рассматривая народные обычаи цома и разговения в контексте постов Св. Саркиса и Св. Иакова (первый в январе-феврале, второй — в декабре) очевидно, что первый тесно связан с периодом, предшествующим сельскохозяйственным работам, а второй — с периодом после их завершения. Цом также встречается в разных

жизненных ситуациях, как в ожидании достижения индивидуальных, так и в общественных целях. Поскольку пост заканчивается принятием Причастия, а цом является одним из обязательных условий для принятия Причастия, следовательно все посты, независимо от того, включают ли они цом или нет, заканчиваются самым строгим проявлением цома — воздержанием от пищи и воды.

## SUMMARY

This article is devoted to one of the types of fasting, which is called tsom. In the article are examined the types, dates and the ways of breaking the tsom in armenian folk tradition, comparing them with the tradition of The Armenian Apostolic Church. In the Armenian Apostolic Church tradition tsom is abstinence from water and food for a certain period of time, but in the folk feast calendar and in everyday life, three types of tsom are distinguished: miazhum tsom (to eat once a day), ansvag tsom (to drink only water) and tsom without eating and water. According to the tradition of The Armenian Apostolic Church, the main periods of tsom are all the days from Monday to Friday of the following fasts — Arachavorats (or the Fast of St. Sarkis) and Great Lent. In the Armenian folk calendar, tsom is not only observed during Arachavorats and Great Lent, but during the preceding fasts of the five Major feasts of The Armenian Apostolic Church (Christmas, Easter, Transfiguration, Exaltation of the Holy Cross, Dormition of the Mother of God) and during various fasts also. Considering the folk customs of tsom and breaking the tsom in the context of the fasts of St. Sarkis and St. Jacob (the first in January-February, the second in December), it is obvious that the first is closely connected with the period preceding agricultural works, and the second — with the period after its completion. Tsom is also found in various life situations, for realizing individual and social goals. As the fast ends with The Reception of Holy Communion, and tsom is one of the important prerequisites for The Receiving of Holy Communion, therefore all fasts, they include tsom or not, end with the strictest manifestation of tsom — abstinence from food and water.



ՅԱԿՈԲ ՔԵՕՍԵՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. դոկտոր

## ՊԱԽԻԹ ՔՈՐԱՅՐԵՑՈՒՄ ԵՍԱՅՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ<sup>1</sup>

Աղգրկուն է բազմաբնույթ է ԺԲ.—ԺԳ. դդ. հայ մեծանուն հեղինակ Դաւիթ Քորայրեցու մատենագրական ժառանգությունը, մեկնություններ, պատճառներ, դաւանաբանական, սրբախօսական երկեր, ներբողներ, որոնց մեջ դրսևորում է նրա գիտելիքն ու հմտությունը<sup>2</sup>: Դաւիթ Քորայրեցին հեղինակ է Նսայու մարգարէութեան ու Յոբի գրքի խմբագիր մեկնությունների: Դրանք տակաւին մասնաւոր քննութեան նիւթ չեն դարձել: Մինչդեռ այդպիսի մի քննությունը հնարաւորություն կտար վերհանել ժառանգորդութեան այն ոգին, որ ներկայ է նրա աստուածաշնչական մեկնություններում, սուրբգրային մեկնարուեստի բազմադարեան աւանդների հետ նրա կենդանի կապը:

Դաւիթ Քորայրեցուն Նսայու մեկնությունը մեզ յայտնի է երկու ձեռագրով. Երուսաղէմի թիւ 1758 (=Ա, ժամանակ՝ 1281 թ.<sup>3</sup>), Վենետիկի թիւ 656 (=Բ, ժամանակ՝ 1291–1302 թթ.<sup>4</sup>): Բնագրային հպանցիկ քննությունն իսկ ցոյց է տալիս, որ Բ-ն ընդօրինակուած է Ա-ից, ինչի մասին վկայում են նոյնիսկ լուսանցային սրբագրումների կրկնությունը (օր. Բ 72բ) եւ ուղղագրությունը (խուլերի ձայնեղացում):

<sup>1</sup>\* Ստացվել է՝ 6.12.2024, գրախոսվել է՝ 31.12.2024:

էլ. հասցե՝ hakob\_qeoseyan1951@mail.ru:

<sup>2</sup> Նրա մատենագրական ժառանգութեան վերաբերեալ տե՛ս Ա. ԶԱՄԻՆԵԱՆ, Հայ գրականութեան պատմություն, մասն Ա., Նոր Նախիջեւան, 1914, էջ 175, չ. Ն. ԱԿԻՆԵԱՆ, Մատենագրական հետազոտություններ, Ա., Վիեննա, 1922, էջ 48–68, Ն. ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 266–267, Պ. ՄՈՒՐԱԴԵԱՆ, Դաւիթ Քորայրեցին եւ նրա «Պատճառներ», «Գանձասար». Աստուածաբանական հանդէս, 1994, էջ 158–168, Յ. ՔԵՕՍԵՅԱՆ, Ներածություն հայ եկեղեցական մատենագրութեան, Երեւան, 2018, էջ 425–426:

<sup>3</sup> Նկարագրությունը տե՛ս

<sup>4</sup> Նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Զ., Պատմագիրք-Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհաւի, Ներսէս Լամբրոնացի, Աղօթագիրք, հտ. Զ., կազմեց հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանը, Վենետիկ, 1996, էջ 618–622:

Դաւիթ Քոբայրեցու խմբագիր մեկնութիւնը բովանդակող ձեռագրերի լուսանցքներում արձանագրուած են հիւրընկալուած հատուածների հեղինականիշ համառօտագիր անունները. Յհ (= Յովհան Ոսկեբերան), Կիւր (= Կիւրեղ Ալեքսանդրացի), Փ (= Յփրեմ Ասորի), Փիլ (= Փիլոն Եբրայեցի/ Ալեքսանդրացի/), Այլ, Այլուստ (= հաւանաբար Դաւիթ Քոբայրեցի)<sup>5</sup>: Յիշեալ հեղինակներից Հայ մեկնողական մատենագրութեան մէջ առաւել ճանաչում եւ կիրառութիւն է ունեցել Յովհան Ոսկեբերանի անունով յայտնի Եսայեայ մեկնութիւնը: Ինչպէս եւ Եսայու միւս հայ մեկնութիւններում այստեղ եւս հայ մեկնիչի գլխաւոր աղբիւրը այդ մեկնութիւնն է: Կիրառուած հատուածների՝ աղբիւրի նկատմամբ ունեցած յարաբերութիւնը ցոյց տալու նպատակով համադրենք դրանցից մի քանիսը: Դա կօգնի մեզ վերհանել խմբագրման որակն ու առանձնայատկութիւնները.

<sup>5</sup> Ի դէպ, մեկնութիւնը բովանդակող Երուսաղէմի թիւ 1758 ձեռագրի 201 էջից յետոյ ի լուսանցս բացակայում են խմբագրուած հատուածների հեղինականիշ համառօտագիր անունները: Այս մասին գրիչը տարակոյսով գրում է. «Բայց զի երկուցն սրբոց բանքն՝ Կիւրղի եւ Յոհաննու ոչ կայ (Ա. ՁԵՌ. ԳԱ) (ձեռագրի լուսանցքներում բացակայում է ոչ միայն «Կիւրղի եւ Յոհաննու», այլեւ Յփրեմի անունը) ի յաւարտ գրոցս, որպէս ցուցանէ յիւրաքանչիւրսն զկայն առեալ, զոր մեք նշանագրեցաք զտեղիսն, անգիտանամք զպատճառն»: Գրիչը հարկ է համարում սա արձանագրել, որպէսզի չկարծուի, թէ «այլ ոք գծելով զսա, ոչ է գրել զերկուցն բանսն զինչ եւ իցէ պատճառ», որովհետեւ նոյն թերոյթը առկայ է նաեւ միակ նախագաղափար օրինակում, որ գրչագրուած է Դաւիթ Քոբայրեցու աշակերտի եւ ազգականի՝ Մխիթար վարդապետի ձեռքով, որ «նորին հրամանաւ սրբագրել է զնորին երկն աշխատութեան»: Սակայն ըստ այլոց կարծիքի այդ թերոյթը գալիս է տուեալ վանքում առկայ հեղինակային ինքնագրից, ուր, ինչպէս եւ ներկայ ձեռագրի սկզբում է, նշուած են եղել հեղինակների անունները, բայց Քոբայրեցու մահուան պատճառով դա անաւարտ է մնացել: Սակայն ձեռագրի Բարսեղ գրիչը, հենուելով Դաւիթ Քոբայրեցու յիշատակարանի վրայ, հերքում է նաեւ այս կարծիքը, բայց եւ միւս կողմից խորհում, որ եթէ մերժենք այս տեսակէտը, ապա պիտի կարծենք, որ հեղինակային յիշատակարանը Դաւիթին չէ, այլ իրապէս Մխիթարին, որ երկիւղած բարեպաշտութեամբ յիշատակարանը վերագրում է իր մեծանուն ուսուցչապետին՝ «զիւր աշխատութիւն ի նորայն խառնելով ի նորայն անուն եւ զյիշատակարանն գրէ»: Այսուամենայնիւ, չմերժելով այս կարծիքներից մէկի կամ միւսի հաւաստիութիւնը՝ Բարսեղ գրիչը նկատում է, թէ իրականութիւնն «անգիտելի է, բայց յիշատակ նոցա՝ արհնութեամբ եւ աղաւթ նոցա ի վերայ ամենայն քրիստոնէից» (էջ 494):

| Ոսկերեան                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           | Քոբայրեցի                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ա) Զամենեսեան, ասէ, կոչեցէի ի վկայութիւն, եւ ամենեցուն ցուցէի հանդէս, քանզի ոչ ինչ ամաշեմ, այլ կոչեմ համարձակ զամենեսեան (էջ 141) <sup>6</sup> :                                                                                                                                                                                                                                                                                   | ա) Զամենեսեան ի վկայութիւն կոչեցէի այս հանդիսի առանց ամաւթոյ եւ պատկառանաց, զի բարձրացաւ պատրուակ ամաւթոյն, որ ի մեղացն էր, եւ յայսմ հետէ նոր փրկութեամբն պարծեցոմք, թէպէտ եւ յիմարութիւն թոյի բան խաշին կորուսեցն, այլ մեզ զաւրութիւն Աստուծոյ (հմմտ. Ա. Կորնթ.Ա. 18), որով կոխեցաւ բռնազբաւսիչն, եւ բնակէ ի մեզ Աստուած սիրով իւրով (էջ 198 <sup>7</sup> ): |
| բ) Ակիւղաս. եւ ետու հրաման սրբելոցն իմոց, այսինքն՝ եթէ ես առաջնորդեցից զաւրացն եւ զաւրավարացն. եւ քանզի ինքն իմն յորդորեաց զկիրոս. թագաւորէ ասէ (էջ 142):                                                                                                                                                                                                                                                                          | բ) Կամ զնոսա ասէ սուրբս, զորս կոչէ ի վերայ Բաբելոնի, վասն զի ինքն յորդորեաց զկիրոս (էջ 198):                                                                                                                                                                                                                                                                  |
| գ) Տէ՛ս զինչ ասեն, զի ի տեղեացն պանծալին զհաղաքին փրկութիւն, եւ շառնէին ինչ ի ներս ա՛յլ զգուշութիւն, այլ մեք ոչ պարտիմք ի տեղեաց ակն ունել փրկութեան, այլ յԱստուծոյ ազնականութենէ: Զայս ասէ, զի արժանի հաւատալոյ արասցէ զմարգարէութիւնն, եւ զի մի՛ զարհուրիցին. Այլ տէ՛ս զահն նոցա՝ որչափ ինչ էր: Զի ոչ միայն զի ուսանիցին զգաւութիւնն, վասն այնորիկ հարկանէր զայլազգիսն, այլ զի եւ նոքա զգաստանայցեն եւ լինիցին պիտանիք (էջ 167): | գ) Զայս կրեսցեն ի կորստեան դամասկացոցն ապաստանին իւրեանց, քանզի տեղեան այլ ոչ Աստուծով պարծէին: Զայս ասելով արժանահաւատ զմարգարէութիւնս ցուցանէ, որովք եւ զնոսա զգաստս պատրաստէ, զի մի՛ զմամաւորէն կրիցեն անցս (էջ 215):                                                                                                                                      |
| դ) Վասն այսորիկ առաջի հեթանոսաց, զի տեսանիցեն եւ վկայեսցեն, եւ նմին նմանող եղիցին (էջ 459):                                                                                                                                                                                                                                                                                                                                        | դ) ...եւ հեթանոսս, որ առանց արինաց յերկիր կորդ, որ բխէ զծաղիկս... զի ամենայն տեսողք նախանձաւորք նոցա եղիցին եւ նմանակիցք (էջ 465):                                                                                                                                                                                                                            |

<sup>6</sup> Տէս «Երանելոյն Յովհաննու Ոսկերեանի մեկնութիւն Եսայեայ մարգարէի», աշխտ. հ. Ե. Տայեանի, Վենետիկ, 1880:

<sup>7</sup> Տէս Երուսաղէմ, ձեռ. 1758:

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                                                                                                                                |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>ե) «Եւ միմեանց ձայն տայցեն յիդիմ»: Սիմաֆոս ասէ. Քրարֆոս, Թէոդիտովն՝ Եւբարբառկիիմ: Երայեցիին՝ Իւ անիմ» (էջ 149):</p>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | <p>ե) «...եւ թէ գազանք ինչ եւ թռչունք են անապատի՝ սակաւուց տեսեալ եւ անծանաթք յոլովից: Սակայն աւերման նշանակք են այսոքիկ (էջ 203):</p>                                                                                         |
Յերկեղէ նոցա ի կռոցն մի՛ երկնչիցիք, որ զաւրութեան ձեռին ընդդէմ դառնան պահողին զԵրուսաղէմ, եւս արդարք ի միջի դորա, մի՛ խաւսիք զխստութիւն իբր զոմանց իշխանացն Յուդայ, որ բանս եղին ընդ Հռասիմայ: Այլ զՏէր սուրբ արասջիք, եւ նա եղիցի երկիւղ ի միտս ձեր: Եւ եթէ յուսայք ի նա՝ եղիցի սրբութիւն տանդ Յուդայ (էջ 154):

«Եւ եթէ ասիցեն զձեզ, խնդրեցէք զվհուկս եւ զգետնակոչս...» (Ը. 19). Մինչ ոչ հասանէին մարգարէից նոցա, առ դիւթսն եւ առ ստախաւսսն երթաին հարցանել, զորս խրատեաց ոչ յանզգայսն երթալ, այլ յաւրէնսն Աստուծոյ, որ պատմեալ լինէր մարգարէէն առանց կաշառաց (էջ 159):

«Եւ ոչ դարձաւ սրտմտութիւն, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է» (Թ. 12). Զայս վասն Իսրայէղի ասէ, զի զկնի Թակղաթիփաղասարու հօնս ի վերայ նոցա զՍաղմանասար յամի վեցերորդի թագաւորութեան Ախազու, որ է ամ չորրորդ թագաւորութեան Ուսիայ, որ թագաւորեաց զԹ. (9) ամ ի Շամրին, յորոյ վերայ էլ Սաղմանասար եւ պաշարեաց զերիս ամս: Եւ յամին չորրորդին Եզեկիայ, որ է ամ Թ. (9) երրորդ Ուսիայ առ Սաղմանասար զՍամարիա, եւ զերեաց զնա ի նմանէ: Վասն այնորիկ ասէ Ժողովուրդն ոչ դարձաւ մինչեւ վիրաւորեցաւ (էջ 172):

«Եւ եղիցին ասէ, որ երանեն ժողովրդեանս, որպէս զի մոլորիցին եւ մլորեցուցանիցեն, զի կլանիցեն զնոսա» (Թ. 16). Եւ զինչ աւգուտ ի տիոցն իցէ եւ ի զաւրութենէ, յորժամ զնա ոչ յուղղութիւն վարիցէ որպէս ծառայք ուրուք այսր անդր զառածանիցին ի չարիս: Ոչ ոք ուրախանա ի նոսա, թէ եւ մարմնով յաղթիցեն, այլ ի մտաց պակասեալ են, որոց ոչ բարին առանձին բարի իցէ կամ երեւիցին եւ ոչ չարն՝ չար, զի այն հասակ երկուցն ընդունակ է: Եւ զի ուժգնապէս ի չարն վարեցան՝ զհզաւրապէսն ընկալցին պատուհաս (էջ 173)<sup>14</sup>:

Այս վկայութիւններն ինքնին ցոյց են տալիս, որ տակաւին ԺԲ.-ԺԳ. դդ. հայ իրականութեան մէջ կենցաղավարել է Եփրեմ Ասորու Եսայու մեկնութեան ընդարձակ տարբերակի մի հայերէն թարգմանութիւն: Հետագայում կորստեան է մատնուել ոչ միայն ասորերէն բնագրի ընդարձակ տարբերակը, այլեւ դրա հայերէն թարգմանութիւնը:

<sup>14</sup> Այս հատուածը ներկա է նաեւ Մուշի որդի Յովհաննէսի մեկնութեան մէջ հետեւեալ բնագրային կերտուածքով. «Քանզի կոտորին նոքա, զի զինչ աւգուտ ի տիոցն եւ ի զաւրութենէն: Յորժամ ոչ ոք յուղղութիւնս վարիցէ զհասակն եւ զզաւրութիւնն, զի թէպէտ եւ մարմնովն յաղթանդամք իցեն եւ ի մտացն ապականեալք, ուստի ամենայն պատճառք չարեաց լինին». անդ, էջ 90:

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ


Բնագիր, գրաբար, յունարեն, ասորերեն, մեկնություն:

## РЕЗЮМЕ

В настоящей статье подробно анализируются источники толкования на Книгу пророка Исаии, использованные выдающимся армянским книжником XII–XIII вв. Давидом Кобайреци. Особое внимание уделяется отцам Церкви, на которых он опирался – Иоанну Златоусту, Ефрему Сирину и Кириллу Александрийскому. Исследуются принципы и приёмы применения этих источников, что позволяет реконструировать логику и особенности метода библейской интерпретации армянского толкователя. На основе конкретных текстологических данных обосновывается, что вплоть до XII–XIII вв. в армянской церковной литературе широко циркулировали полные версии толкований на Книгу Исаии, приписываемые Ефрему Сирину и Кириллу Александрийскому, которые впоследствии были утрачены. Об этом, в частности, свидетельствуют толкования на ту же книгу, дошедшие под именами Ованнеса, сына Муша, и Геворка Скевраци.

## SUMMARY

This study provides a comprehensive examination of the exegetical sources employed by the eminent Armenian scholar of the 12<sup>th</sup>–13<sup>th</sup> centuries, Davit‘ of Kobayr, in his commentary on the Book of the Prophet Isaiah. Special emphasis is placed on the patristic authorities he drew upon—John Chrysostom, Ephrem the Syrian, and Cyril of Alexandria. The article explores the interpretative strategies and methodological approaches through which these sources were integrated, thereby enabling a reconstruction of the underlying logic and distinctive features of Davit‘’s exegetical practice. On the basis of concrete textual evidence, it is argued that, up to the 12<sup>th</sup>–13<sup>th</sup> centuries, complete versions of commentaries on Isaiah attributed to Ephrem the Syrian and Cyril of Alexandria were in wide circulation within the Armenian ecclesiastical tradition, though they have since been lost. This claim is further corroborated by extant commentaries on the same prophetic book transmitted under the names of Hovhannes, son of Mush, and Gevork of Skevr.



Doi: 10.56737/2953-7843-2025.02-43

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ

## ԳՐԱԲԱՐԵԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ Ե (Ē) ՁԱՅՆԱԽՈՐԻ ՀՆՉՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ<sup>1</sup>

Վին հայերէնի է (ē) հնչոյթի առնչութեամբ հայերէնագիտութեան մէջ արտայայտուել է երեք տեսակէտ. ա) է (ē)-ն եւ (e)-ին հակադրուել է, ինչպէս փակ ձայնաւորը բացին, բ) է (ē)-ն եղել է երկբարբառակերպ, գ) է (ē)-ի եւ եւ (e)-ի տարբերութիւնը քանակական էր, հետեւաբար նրանք հակադրուել են որպէս միեւնոյն ձայնաւորի երկար եւ կարճ տարբերակներ:

Է (ē)-ի՝ որպէս փակ ձայնաւորի վարկածը գալիս է Ա. Մեյէից<sup>2</sup>: Ա. Մեյէն, հնարաւոր համարելով է-ի ծագումը *oy (/oi/)* (ոյ)-ին զուգահեռ գոյութիւն ունեցած աւելի հին \**ey* (\*եյ) երկբարբառից, գրաբարեան փուլում է-ն համարել է «պարզ ձայնաւոր» («la voyaelle simple ē»)<sup>3</sup>: Ա. Մեյէի տեսակէտը իւրովի հիմնաւորելու փորձ է արել Հր. Աճառեանը<sup>4</sup>: Նա հին հայերէնի է (ē) եւ եւ (e) ձայնաւորների տարբերութիւնը դիտարկել է ժամանակակից ֆրանսերէնի երկու e-երի՝ բաց՝ *è* (հմմտ. *très* [trɛ] «շատ», *après* [apʁɛ] «հետո», *mère* [mɛ:r] «մայր», *père* [pɛ:r] «հայր») եւ փակ՝ *é* (հմմտ. *année* [a-ne] «տարի», *thé* [te] «թէյ», *été* [e-te] «ամառ», *passé* [pa-se] «անցեալ»), ունեցած հնչարտաբերական եւ դիրքային տարբերութիւնների հետ զուգահեռի մէջ, համապատասխանաբար՝ եւ (e)-ն համարելով բաց, իսկ է (ē)-ն՝ փակ ձայնաւոր (հմմտ. «...մեր այս երկու գրերի տարբերութիւնը Ե. դարում կայանում էր լոկ բերանի բացուածքի մէջ.

<sup>1</sup>\* Ստացուել է՝ 23.03.2025, գրախօսուել է՝ 25.03.2025: Էլ. հասցէ՝ vz.petrosyan@mail.ru:

<sup>2</sup> Տէս A. MEILLET, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, էջ 44–45:

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>4</sup> Տէս Հր. ԱՃԱՌԵԱՆ, *Հայոց գրերը, Երեւան, 1984*, էջ 573–575:

ե կարտասանուէր աւելի բաց, է կարտասանուէր աւելի գոց»)<sup>5</sup>: Ըստ Հր. Աճառեանի՝ այդ զուգահեռն արդարացուում է նաեւ նրանով, որ ինչպէս ֆրանսերէնում բառը չէր կարող ունենալ *é* վերջը, «այլ միայն *e*», այդպէս եւ հին հայերէնում «բառերի ծայրին գրեթէ չկայ ե եւ բացառապէս գտնուում է է»<sup>6</sup>: Այդ տեսակէտն ընդունել են Մ. Աբեղեանը, Գ. Ղափանցեանը եւ Ս. Ղազարեանը<sup>7</sup>: Ըստ էութեան՝ այդ տեսակէտին է յարել նաեւ Ա. Ղարիբեանը<sup>8</sup>: Հ. Հիւրշմանի կարծիքն այս առումով թէական է<sup>9</sup>:

Գրաբարեան հայերէնի է (ē)-ին երկբարբառային (/երկբարբառակերպային) արտաբերութիւն՝ [եյ/եի] ([ej/ei]), են վերագրել էդ. Աղաւթեանը, Գ. Զահուկեանը, Հ. Մուրադեանը, է. Թումանեանը, Յու. Գաբրիէլեանը, Վ. Կատուալեանը եւ Վ. Համբարձումեանը<sup>10</sup>: Մասնաւորապէս. 1) Վ. Կատուալեանը է (ē)-ն համարել է «փակուող երկբարբառակերպ»՝ տարբերակելով նաեւ ե «բացուող երկբարբառակերպ», որոնց տարբերութիւնը դրսեւորուում է միայն շեշտուած վանկում<sup>11</sup>, 2) ըստ Վ. Համբարձումեանի՝ «է-ն երկբարբառակերպ ձայնաւոր» էր<sup>12</sup>: է (ē)-ին երկ-

<sup>5</sup> Տէս Հր. Աճառեան, նշ. աշխ., էջ 574–575:

<sup>6</sup> Տէս Հր. Աճառեան, նշ. աշխ., էջ 575:

<sup>7</sup> Տէս Մ. Աբեղեան, Գրաբարի քերականութիւն, Երեւան, 1936, էջ 9, Գ. Ղափանցեան, Հայոց լեզուի պատմութիւն. հին շրջան, Երեւան, 1961, էջ 241, Ս. Ղազարեան, Հայոց գրական լեզուի պատմութիւն, Երեւան, 1961, էջ 171: Ըստ Գ. Ղափանցեանի՝ է-ն «առաջ (իմա՝ նախագրաբարեան փուլում – Վ. Պ.) եղել է» երկբարբառ, բայց հետո վերածուել է «առաջնալեզուային միջին բարձրացման փակ ձայնաւորի» (տէս Գ. Ղափանցեան, նշ. աշխ., էջ 241):

<sup>8</sup> Ա. Ղարիբեանի կարծիքով՝ գրաբարեան է-ն եղել է «չտաքցիայի ենթարկուած եւ քմայնացած...», որի արտասանութիւնը մօտ է երկբարբառայինին» (տէս Ա. Ղարիբեան, Հայ բարբառագիտութիւն, Երեւան, 1953, էջ 110):

<sup>9</sup> «Հայերէնի ձայնաւորների հնչյունափոխութեան օրէնքների ժամանակագրութիւնը» աշխատութեան մէջ Հ. Հիւրշմանը հնարաւոր է համարել, որ է-ն «ե. դարում կարճ, բաց “e” էր, ուրեմն նա միայն իր որակով (որպէս բաց e) էր տարբերուում կարճ փակ «ե»-ից», բայց եւ չի բացառել, որ այդ ժամանակ էլ է-ն «երկար է եղել, ինչպէս երբեմն նախկինում՝ յամենայնդէպս գոնէ նախնադարեան ժամանակներում իր ստուգաբանութեան համաձայն (= հնդեւր. *ei* կամ *oi*) այն պէտք է որ երկար եղած լինի» (Հ. Հիւրշման, Հայագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 2004, էջ 395):

<sup>10</sup> Տէս է. Աղաւթեան, Գրաբարի քերականութիւն, հ. I, Հնչյունաբանութիւն, Երեւան, 1964, էջ 134–140, Գ. ԴՋԱՅԿՅԱՆ, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, էջ 27, Հ. Մոմրուկեան, Հայոց լեզուի պատմական քերականութիւն, հ. I, Երեւան, 1982, էջ 142, Ե. ԿԱՐԱՅԵԱՆ, Древнеармянский язык, Москва, 1971, էջ 32, Յու. Գաբրիէլեան, Հայերէնը եւ նախահնդեւրոպական լեզուն, Երեւան, 2001, էջ 146, Վ. ԿԱՏՈՒԱԼԵԱՆ, Հայ բարբառագիտութեան հարցեր, Երեւան, 2014, էջ 175–179, Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, Գրաբարի ձեւնարկ, Երեւան, 2018, էջ 15:

<sup>11</sup> Տէս Վ. ԿԱՏՈՒԱԼԵԱՆ, նոյն տեղում:

<sup>12</sup> Տէս Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, նոյն տեղում:

բարբառային բնույթ վերագրող տեսակետը գալիս է, թերեւս, Հ. Հիւբշմանից, ըստ որի՝ է = ē (հմմտ. աղուէս, յուն. *ἄλωπις*), է = e (հմմտ. աղուեսու, յուն. *ἄλωπεκος*), է = ei, oi (?) (հմմտ. գէտ (> գիտ-եմ), յուն. οἶδα (< հ.-ե. \**uoid-*)) եւ է = հայ. ե+յ (ի-ից կամ է-ից) (հմմտ. մէջ, միջոյ-սնսկ. *madhyas*, լատ. *medius*, բերէ «բերում է, կրում է» – սնսկ. *bharatī* եւ այլն)<sup>13</sup>: Այս տեսակետի հիմքում ընդհանուր առմամբ հետեւեալ փաստարկներն են. 1) Հին հայերէնում ձայնաւորների կիրառութիւնը բառավերջի դիրքում ունէր որոշակի սահմանափակումներ. մասնաւորապէս. ա) բառավերջը բացառուած դիրք էր ե (e)-ի եւ ը (ə)-ի համար. բ) ա (a) եւ ո (o) ձայնաւորները բառավերջի դիրքում հանդիպում են հրամայական եղանակի եզակի թուի ձեւերում (հմմտ. հասո՝ (= հասցրո՛ւ. հասուցանել-ից), մատո՛ (= մօտեցրո՛ւ. մատուցանել-ից), գրեա՛ (= գրի՛ր. գրել-ից), ծանեա՛ (= ճանաչի՛ր. ծանեա-ից) եւ այլն), որոշ անձնական եւ ստացական դերանունների կազմում (հմմտ. նա, նորա, նմա, սա, սոցա, քո եւ այլն), ահա, ապա բառերում եւ փոխառեալ յատուկ անունների ուղիղ ձեւում (հմմտ. Ասիա, Ագարիա, Զաֆարիա, Կեսարիա, Կիլիկիա, Շաղիտա, Սամարիա եւ այլն). գ) ի (i)-ն չի ունեցել որեւէ սահմանափակում, այդ թւում՝ բառավերջի դիրքում, ինչպէս բառերի ուղիղ ձեւում (հմմտ. աղանի, աղի, արի «քաջ, կտրիճ», բարի «գովելի, ազնիւ», դի «դիակ», թի «թի», լի «լեցուն», կարի «շատ, խիստ», մի «մէկ», տարի «տարի» եւ այլն), այնպէս էլ ե լծորդութեան որոշ բայերի կրաւորաձեւ խոնարհման յարացոյցում՝ եզ. թ. Յ-րդ դ. ձեւում (հմմտ. առափի (= ուղարկում է), բեկանի (= կոտրում է), շարժի (= շարժում է), սիրի (= սիրում է))<sup>14</sup>. 2) Ե լծորդութեան բայերը սահմանական ներկայի եզ. թ. Յ-րդ դէմքում պիտի ունենային -յ վերջը, ինչպէս որ ա լծորդութեան բայերը (հմմտ. \*արկանեյ «նետում է», \*շարժեյ «շարժում է», ինչպէս որ՝ աղայ «աղում է», ընթանայ «ընթանում է»), բայց ունեն -է վերջը (հմմտ. արկանէ, շարժէ). այստեղից եզրակացութիւն է արուում, որ հին հայերէնի է-ն համարժէք էր «ե+յ»-ի. 3) Ի լծորդութեան բայերը սահմանական եղանակի ձեւում վերջում -յ չեն ստանում, որովհետեւ ի-ն եւ յ-ն լծորդակից հնչիւններ էին,

<sup>13</sup> Տե՛ս Հ. Հ. ԻՒԲՇՄԱՆ, նշ. աշխ., էջ 224–225:

<sup>14</sup> Նշուած իրողութիւնները փաստում են, որ է-ի երկբարբառային բնույթը հիմնաւորելու նպատակով է. Աղայեանի արտայայտած միտքն այն մասին, թէ գրաբարեան հայերէնում «բառը ձայնաւորով վերջանալ չէր կարող», անզգոյշ ձեւակերպում է (տե՛ս է. Գ. ԱՂԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 135):

միմեանց նկատմամբ գտնուել են լրացուցիչ բաշխման յարաբերութեան մէջ. նրանք ոչ միայն չեն կարող հանդէս գալ միեւնոյն հնչիւնական միջավայրում, այլեւ չեն կարող մէկը միւսին անմիջաբար յաջորդել. նրանց միջեւ հակադրութիւնը բաւարար չէ անմիջական յաջորդականութիւն կազմելու համար. 4) Ու լծորդութեան բայերը սահմանական ներկայի եզ. թ. 3-րդ դէմքում -յ վերջնահնչիւն չունեն, որովհետեւ ունեն ւ (ւ) ձայնորդը, այսինքն՝ մի կողմից՝ արդէն իսկ կայ բառը փակող բաղաձայն հնչիւն, միւս կողմից՝ յ եւ ւ կիսաձայնները եւս չեն կարող անմիջաբար միմեանց յաջորդել: Բայց այն հանգամանքը, որ անկատար անցեալում բաղաձայնին, այն է՝ ր (r) ձայնորդին նախորդող դիրքում առկայ է յ, նշանակում է, որ ւ-ն եւ յ-ն հերթագայական լծակիցներ են եւ կարող են մէկը միւսին փոխարինել (հմմտ. կիզու «կիզում է» – կիզոյր «կիզում էր», ջեռնու «տաքանում է» – ջեռնոյր «տաքանում էր»): Ինչպէս առհասարակ թեքական լեզուներում, գրաբարում եւս հերթագայութիւնը բառաձեւակազմութեան գործուն միջոց էր:

Երկրորդ վարկածի համար, թերեւս, լրացուցիչ փաստարկ կարող էր լինել նաեւ այն հանգամանքը, որ՝ 1) հ.-ե. \*ei եւ \*oi երկբարբառները հայերէնում ունեցել են ինչպէս է (հմմտ. \*k'eiro- > սէր, \*k̥oi-nā / [\*k̥uei-] > քէն եւ այլն), այնպէս էլ ի (հմմտ. \*goigar-on > ծիծառն, \*(s)leigh- > լիզ-եմ եւ այլն) զարգացումը, 2) հին հայերէնում եւս գործել է է // ի շեշտափոխական հնչիւնափոխութիւնը (հմմտ. դէ՛գ-դիզի՛, կէ՛ս-կիսո՛յ, շէ՛ն-շինակա՛ն եւ այլն):

Չնայած վերոյիշեալ փաստարկումներին՝ այս տեսակէտը, մեր կարծիքով, ամենից անընդունելին է, որովհետեւ հակասում է այբուբենի Մաշտոցեան սկզբունքին: Այդպիսի մեկնաբանութիւնը ենթադրում է ոչ թէ պարզապէս այբուբենը ստեղծողի հնչիւնական սուր զգացողութիւն, որի առնչութեամբ կասկածներ չկան, այլ հնչոյթաբանական գիտելիքներ, իսկ հնչոյթաբանութեան՝ որպէս լեզուաբանական գիտակարգի մասին, ինչպէս գիտենք, Մաշտոցի ժամանակներում (ինչպէս եւ դրանից շատ ու շատ դարեր յետոյ)<sup>15</sup> դեռեւս պատկերացում չկար: Բացի այդ՝ եթէ ու

<sup>15</sup> Հնչոյթ եզրի առաջին կիրառութիւնը վերագրուում է 19-րդ դ. վերջի ֆրանսիացի լեզուաբան Ա. Դիւֆրիշ-Դեթենէտտին (1873), իսկ հնչիւնի եւ հնչոյթի՝ որպէս հնչաբանական տարբեր միաւորների առաջին բնորոշումներն առաջարկել են լեհ լեզուաբան Ի. Ա. Բոգուլէն դը Կուրտենէն եւ շուէյցարացի լեզուաբան Ֆ. դը Սուիւրը 19-րդ դ. 80-ական թթ.: Հնչոյթաբանական գիտակարգի ձեւաւորումը տեղի է ունեցել 20-րդ դ. 30-ական թթ. (տես Лингвистиче-

(օւ)–ի դէպքում ենթադրութիւն է արւում, որ նախքան Ե. դ. յունական օւ [ou]–ն վերածուել էր պարզ ձայնաւորի եւ Մաշտոցն էլ, ինչպէս առհասարակ Հայոց այբուբենի, այնպէս եւ հայերէնի ու (օւ)–ի գրութեան հարցում հիմնականում հետեւել է յունական գրութեան սկզբունքին, ապա է (է)–ի դէպքում նոյնիսկ այդպիսի ենթադրեալ հիմնաւորում չի կարող լինել, որովհետեւ յայտնի է, որ այդ ժամանակներում ինչպէս յունարէնում, այնպէս եւ լատիներէնում, որի այբուբենը նոյնպէս Մաշտոցն ունեցել է աչքի առաջ, յստակ տարբերակուել են երկար եւ կարճ *e*-եր (համապատասխանաբար՝ η, ē եւ ε, e):

Ինչ վերաբերում է ֆրանսերէնի օրինակով լայն եւ նեղ *e*-երի տարբերակման գաղափարին, ապա պիտի ասել, որ դա ֆրանսերէնի ձայնաւորական համակարգի իւրայատկութիւնն է<sup>16</sup>, տիպաբանօրէն բնորոշ չէ հնդեւրոպական լեզուների ձայնաւորական համակարգերի հնչոյթաբանական զարգացմանը, հետեւաբար հին հայերէնի երկու տիպի է (ē) / ե (e)–երի մեկնաբանութիւնը դրանց օրինակով հաւանական չէ: Մանաւանդ, որ այդպիսի երեւոյթ չի դրսեւորուել ո՛չ գրական հայերէնի զարգացման որեւէ փուլում, ո՛չ իսկ բարբառներում:

Երրորդ տեսակէտն առաջադրել ենք մենք<sup>17</sup>: Մեր համոզմամբ առնուազն մինչեւ Ե. դարի վերջը հին հայերէնի է (ē)–ն եղել է երկար ձայնաւոր: Ինչպէս արդէն տեսանք, է (ē)–ն հին հայերէնի միակ ձայնաւորն էր, որը չունէր պարզ ձայնաւորական ծագում<sup>18</sup>: Իսկ երկբարբառի պարզեցումը գոնէ սկզբնական շրջանում տալիս էր երկար ձայնաւոր, որն աւելի ուշ կարող էր վերածուել կամ չվերածուել համապատասխան կարճի:

Այն, որ է (ē)–ն եւ ե (e)–ն առնուազն Ե. դարում երկու տարբեր հնչոյթներ էին, վկայում են նրանց իմաստատարբերակիչ հակադրութիւններն

ский энциклопедический словарь, Москва, 1990, էջ 552–554, 555–557, Общее языкознание (под общ. ред. А. Е. Супруна), Минск, 1983, էջ 287–288):

<sup>16</sup> Բացութեան եւ փակութեան աստիճանով ձայնաւորների իմաստատարբերակիչ հակադրութիւնը ֆրանսերէնում հին երեւոյթ է՝ գալիս է դեռեւս հին շրջանից՝ Ժ.–ԺԱ. դդ. (տե՛ս Н. КАТАГОЩИНА, М. ГУРЫЧЕВА, К. АЛЛЕНДОРФ, История французского языка, М., 1976, էջ 48–52):

<sup>17</sup> Տե՛ս В. ПЕТРОСЯН, Диахроническая типология фонем ɛ в древнеармянском и ѣ в старославянском языках // «Հայագիտութեան հարցեր», Երեւան, 2016, թիւ 1(7), էջ 128–141:

<sup>18</sup> Բացառութիւն է \*(ə)lōpeku- / \*alōpeku- > աղուէս (սեռ. աղուեսու) բառը. պիտի ենթադրել, որ սեռականում պահպանուել է նախնական ձեւը՝ աղուէս, իսկ -է-ով տարբերակն առաջացել է -ուէ- յաջորդականութիւն պարունակող բառերի համաբանութեամբ (հմտ. նուէր, պատուէր) կամ էլ պարզապէս գրչագրական զուգաձեւութիւն է:

ինչպէս այլ հնչոյթներին եւ հնչոյթային զրոյի հետ, այնպէս եւ մէկը միւսի հետ: Ընդ որում՝ բոլոր երեք դիրքերում:

1) բառասկզբի. ա) *է ~ ա/օ (զրո)* (հմմտ. էակն (էակ-ի «արարած. Աստուած» որոշեալ առումը) ~ ակն (ական) «աչք. գոհար», էլի «աստուած իմ» (եբր. էլ «աստուած» ձեւից) ~ լի (լիոյ) «լցուած, լիքը», էութիւն «գոյացութիւն. լինելութիւն» ~ ութիւն (գոյականակերտ վերջածանց) (է ~ օ), էջ «իջնելը» ~ աջ (-ոյ/-ու) «աջ ձեռքը. աջ կողմը» (է ~ ա), բ) *ե ~ ա* (հմմտ. եռ «եռալը» ~ առ «առնելը. գրաւելը», եզն (եզին) «ցուլ» ~ ազն (-զին) «ազգ, ժողովուրդ», եղիճ «եղինջ (բոյսը)» ~ աղիճ «բոզ, պոռնիկ», եղծ «եղծելը. հերքում» ~ աղծ «1. աղտ. կեղտ, 2. աղ»<sup>19</sup>, եղն «եղնիկ» ~ աղն (-ունք) «աղտ, կեղեւն», երդ «երդիկ. օջախ, տուն» ~ արդ (-ու) «1. յարգարանք. 2. այժմ» (ե ~ ա)). գ) *է ~ ե* (հմմտ. էլ «աստուած» (եբր.) ~ ել (-ի) «դուրս ելնելը. անցք»):

2) բառամիջի. ա) *է ~ ա* (հմմտ. գէր (գիրի) «պարարտ, չաղ» ~ գար «ծուռ, կոր», շէն (շինի) «բարեկարգ. բնակեցուած» ~ շան (շուն-ի սեռ. տր. հլ.), պէտ «պէտք, կարիք» ~ պատ «պատելը, պատում», վէր «վէրք. խոց» վար «1. հող վարելը, 2. կիրառելը», սէր «(սէր) զգացմունքը» ~ սար «1. լեռան գագաթ, 2. զէնուզարդ», վէտ «ջրի մեղմ ալիք, ծփանք» ~ վատ (-ի) «վատթար. չար», խէշ «կողքին, մօտ» ~ խաշ «խաշափայտ. չարչարանք»), բ) *է ~ ե* (հմմտ. գէտ (> գիտ-) «իմանալ» ~ գետ (-ոյ) «գետ (ջուր)», գէր (գիրի) «պարարտ, չաղ» ~ գեր (նխգր.) «վերին, բարձր», դէն (ձ.) «ցնծութեան բացականչութիւն» ~ դեն (-ի) «կրօն, հաւատ», գէն «զէնք» ~ գեն «զոհ», սէր «(սէր) զգացմունքը» ~ սեր «կաթի սեր», խէթ (խիթի) «խղճի խայթ, խղճմտանք» ~ խեթ (խեղ)<sup>20</sup> «շեղական, շիւ», վէր (վիրի) «վէրք. խոց» ~ վեր «վերելը, վերելի մասը»), գ) *է ~ ի* (հմմտ. իւթ «խղճի խայթ, խղճմտանք» ~ իւիթ «ցաւ, վէրք. խուլթ. քարանձաւ», իւէլ «կողմ» ~ իւիլ «որոնում, փնտրտուք»), դ) *է ~ ո* (հմմտ. իւէշ ~ իւոշ «խոշընդոտ, արգելք»):

3) բառավերջի. *է ~ ի* (հմմտ. աղէ՛ (հրամայական-յորդորական բացականչութիւն) «ապա՛, դէ՛, օն՛» ~ աղի «շատ աղ պարունակող», գրէ «կռունկ

<sup>19</sup> Տէս Հ. ՀԻԻԲԾՄԱՆ, ՀՔ, էջ 414, ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), Ի, Երեւան, 1973, էջ 132, Գ. Զահուկեան, Հայերէն ստուգաբանական բառարան (այսուհետեւ՝ ՀՍԲ), Երեւան, 2010, էջ 38:

<sup>20</sup> Տէս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (այսուհետեւ՝ ԱԲՀԼ), Անթիլիաս, 1988, էջ 575:

թռչունը»<sup>21</sup> ~ գրի «գրողում է» (գրեմ «միտքը գրի առնել» բայի սահմ. նրկ., եզ. թ., 3-րդ դ., կրաւորաձեւ խոնարհում)<sup>22</sup>);

Առանձին դէպքերում է՛ն ազատ փոփոխական յարաբերութիւնների մէջ է ե-ի եւ ի-ի հետ (հմմտ. եղամ «կամարակապ սրահ») // էղամ (եբր.)<sup>23</sup>, իսէժ «իսէժ, թանձր հիւթ» – խեժ (/խիժ), կէտ (կիտի) «ծովային կաթնասուն խոշոր կենդանի» – կեա (նոյնը), իսէլ «կողմ» – իսի («եզր» – ԲՀ)<sup>24</sup>);

է (ē)-ի հնչաբանական (phonematic / фонематический) բնութագրերի ամբողջական եւ արժանահաւատ պատկեր ստանալու համար, ըստ երեւոյթին, անխուսափելի է համաժամանակեայ եւ տարաժամանակեայ հայեցակերպերի զուգակցուած քննութիւնը: Հստ այդմ.

1) Հր. Աճառեանը նկատել է, որ յունարէն-հայերէն տառադարձումներում յուն. η (ē)-ի դիմաց հայերէնում, որպէս կանոն, հանդիպում է է (հմմտ. Κυριακή > կիրակէ, ὕλη > հիւլէ, καθολική > կաթողիկէ «ընդհանրական» եւ այլն), իսկ ε (e)-ի դիմաց ե (հմմտ. ἀνγλος > անգլոս «հրեշտակ», ἐπίσκοπος > եպիսկոպոս, θέμα > թեմ եւ այլն): Իհարկէ, կան նաեւ յուն. η (ē) > հյ. ե (e) (հմմտ. ἡγήνη > եփենէ (թռչուն), ἡγεμών [he:gemon] > հեգեմոն «կուսակալ» եւ այլն) եւ, ընդհակառակն, յուն. ε (e) > հյ. է (ē) համապատասխանութիւններ<sup>25</sup>, սակայն, նախ, երկրորդ կարգի օրինակները խիստ սակաւաթիւ են, բացի այդ, վերջին կարգի անցումներից, ըստ իս, օրինաչափ պիտի համարել յունարէնի շեշտակիր կարճ ε (e)-ի անցումը հյ. է (ē)-ի (հմմտ. Ἀνδρέας > Անդրէաս), որովհետեւ շեշտի տակ գտնուող ձայնաւորը անշեշտ ձայնաւորից աւելի երկար տեւողութիւն է ունենում<sup>26</sup>: Նշուած իրողութիւնները, մեր կարծիքով, հին հայերէնի՝ ե եւ է գրերով նշանակուած հնչիւնների քանակական (= հնչոյթաբանական) տարբերութիւնների վկայութիւններ են:

<sup>21</sup> Ավելի հին ձեւն է համարվում գրեայ-ն (տէս Գ. ՋԱՆՈՒԿԵԱՆ, ՀՄԲ, 177):

<sup>22</sup> Տէս Ա. ԱՐԲԱՆԱՄԵԱՆ, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 110–111:

<sup>23</sup> Տէս Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004, էջ 388:

<sup>24</sup> Տէս Գ. ՋԱՆՈՒԿԵԱՆ, ՀՄԲ, էջ 329:

<sup>25</sup> Յունական փոխառութիւններն ըստ Հր. ԱճԱՌԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն (այսուհետեւ՝ ՀԼՊ), Երեւան, 1951, հ. II, էջ 10–34: Գ. Զահուկեանի կազմած յունական փոխառութիւնների ցանկում բացակայում են անգլոս, եփենէ եւ թեմ բառերը (տէս Գ. ՋԱՆՈՒԿԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետեւ՝ ՀԼՊՆԺ), 1987, էջ 617–621):

<sup>26</sup> Ա. Ռեֆորմատսկին այդպիսի երեւոյթ է մատնանշում մասնաւորապէս արդի ուսուրէնում (տէս А. РЕФОРМАТСКИЙ, Введение в языковедение, Москва, 1967, էջ 155):

2) Հին հայերէնին խորթ չէր նաեւ է // ե հերթագայութիւնը (հմմտ. աղուէս–աղուեսու, եղէգն–եղեգան, պատնէն–պատնենի): Որպէս կանոն, է (ē)-ն հանդիպում է բառի ուղիղ, իսկ ե (e)-ն՝ թեք եւ բաղադրեալ ձեւերում (հմմտ. աղուէս, բայց՝ աղուեսադրոշմ, աղուեսակերպ, աղուեսաւում, աղուեսենի, եղէգն, բայց՝ եղեգնաբոյս, եղեգնախումկ, եղեգնախոի, եղեգնաշամբ, եղեգնաշէն, եղեգնուտ, եղեգնեայ եւ այլն): Ըստ իս՝ է (ē) > ե (e) անցումը բառային շեշտի դէպի աջ՝ վերջին ձայնաւորը, տեղաշարժի հետեւանք է, որի արդիւնքում շեշտից զրկուած երկար ձայնաւորը թուլանում է եւ վերածուում կարճի (հմմտ. աղուէ՛ս–աղուեսո՛ւ, եղէ՛գ(ը)ն–եղեգա՛ն): Իհարկէ, կան առանձին բացառութիւններ, երբ բաղադրեալ կազմութիւնները գրական յուշարձաններում հանդիպում են զուգաձեւութիւններով (հմմտ. եղեգնաձեւ // եղէգնաձեւ, եղեգնիկ // եղէգնիկ): Ըստ ամենայնի, դրանց է-ով ձեւերը գրչագրական վրիպակներ են կամ կարող են բացատրուել լեզուի խօսակցական տարբերակների՝ բարբառների ազդեցութեամբ<sup>27</sup>:

3) Հ.–ե. ցեղակիցների հետ տիպաբանական զուգահեռները եւս վկայում են է-ի՝ որպէս երկար ձայնաւորի մասին: Որպէս կանոն՝ եթէ ցեղակից լեզուն չի պահպանել նախալեզուի երկբարբառային ձեւը, ապա վերածել է երկար ձայնաւորի (հմմտ. \*deik- «ցոյց տալ, ասել» > յուն. δεικνอยμι, գոթ. ga-teihan «յայտարարել, հանրայնացնել», բայց՝ լատ. dīcō, հ. վ. գերմ. zīhan «մէկին մի բան հաղորդել, մէկին մեղադրել»,– \*keigh – «ցատկէլ, աշխոյժ, առոյգ» > հյ. սէգ, սնսկ. sīghrā- «աշխոյժ, արագ», անգսք. hīgian «շտապել, առաջանալ»,– \*xēida / \*xōida- «գիտենալ» > հյ. գէտ-, յուն. (F)οἶδα, բայց՝ սնսկ. vēda «գիտեմ», հայաւ. թեծ «գիտեմ»,– \*ei-ti «նա գնում է» > յուն. εἶσι «(նա) գնում է», լիտ. eit(i), բայց՝ սնսկ. ēti,– \*sneigūh – «ձիւն է գալիս» > յուն. νείφετ, հլատ. nīvit, հ. վ. գերմ. snīwan եւ այլն): Իհարկէ, երբեմն սպասելի երկբարբառի կամ երկար ձայնաւորի փոխարէն առկայ է կարճ ձայնաւոր (հմմտ. \*ei-ti > լատ. it), սակայն դրանից օրինաչափութիւնը չի խախտում: Այն, որ հին հայերէնի երկբարբառային ծագում ունեցող է (ē)-ն եղել է երկար ձայնաւոր եւ ոչ թէ երկբարբառակերպ, անուղղակիօրէն կարող են վկայել նաեւ հետեւեալ տիպաբանական տուեալները. ա) հ.–ե. \*ei երկբարբառն ընդհանուր կելտերէնում տուել է ē. «լատիններէնից փոխառուած բառերում եւս

<sup>27</sup> «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» բառարանում բաղադրեալ կազմութիւնները եւս ունեն բացառապէս է-ով տարբերակներ (տե՛ս ԱԲՀԼ, էջ 260):

ē է զարգացել նաեւ նոր կելտերէնում»<sup>28</sup>, բ) գերմանական լեզուներում ē է տուել հ.-ե. երկար \*ē+\*i երկբարբառային կապակցութիւնը<sup>29</sup>: Իսկ որ հին հայերէնի է (ē)-ն եղել է երկար ē-ի, այլ ոչ թէ երկար ī-ի գրային նշանը (նկատի ունենալով, որ հ.-ե. \*ei-ն հայերէնում տուել է նաեւ ի), երեւում է նրանից, որ աշխարհաբարեան հայերէնում հին է-ն բառի ուղիղ ձեւում անցել է ե-ի, այլ ոչ թէ ի-ի (հմմտ. գէս > գես, կէս > կես, ծէս > ծես, հանդէս > հանդես, շէն > շեն եւ այլն):

4) Հին հայերէնի է-ի հնչաբանական արժէքը որոշելու առումով կարելի է նշանակութիւն ունեն նաեւ իրանական փոխառութիւնները: Դրանցում դիտարկուում են հետեւեալ համապատասխանութիւնները.

ա) հին պարսկերէնի ai / աւեստայի aē երկբարբառներ, միջին պարսկերէնի ē ձայնաւոր > հյ. է (հմմտ. իրան. \*apa-vēn, աւ. apa- (հյ. ապա-) vaēna- «նայել» > հյ. ապաւէն,– իրան. \*gēs, մպրսկ. gēs > հյ. գէս «մաղ»,– իրան. gōmēš, մպրսկ. gāvmēš > հյ. գոմէշ (-ո / ի-ա),– իրան. \*dēm, մպրսկ. dēm > հյ. դէմ,– իրան. \*zēn, աւ. zaēna-, մպրսկ. zēn > հյ. զէն(-ք),– իրան. \*handēs, աւ. daēs > հյ. հանդէս,– իրան. \*hēn, հպրսկ. hainā, աւ. haēnā, մպրսկ. hēn «թշնամի բանակ» > հյ. հէն «աւազակ»,– իրան. \*hravēd, աւ. fravaēd- «նկատել» > հյ. հրաւէր,– իրան. \*yāvēž, աւ. yavaēji- «մշտակեաց» > հյ. յաւէժ (/ յաւէրժ),– իրան. yāvēt, աւ. yavaētāt, մպրսկ. yāvēt «յաւիտեան» > հյ. յաւէտ,– իրան. \*nikārēn > հյ. նկարէն «նկարուած, գունազեղ»,– իրան. nivēd, աւ. ni-vaēd, մպրսկ. nivēdēm > հյ. նուէր «տաճարին կամ աստծուն նուիրաբերուած իր»,– իրան. \*pardēz, աւ. pairi-daēza- > հյ. պարտէզ,– իրան. \*šēn, սողդ. šēn > հյ. շէն,– իրան. \*(a)xšēt, աւ. xšaēta- «փայլուն», մպրսկ. šēt «փայլ. կարմիր» > հյ. աշխտ «կարմիր, հնագոյն»,– իրան. \*pēs, աւ. paesa- «զարդարանք» > պէս,– իրան. \*pēt «գնալ», մպրսկ. apāyēt > հյ. պէտ(-f),– իրան. \*vēg, աւ. vaēya «հարուած». > հյ. վէգ «վէճ, կռիւ»,– իրան. \*vēž, աւ. vaeg-, մպրսկ. vēž «թափահարել, նետել» > հյ. վէժ (վիժել) «վիժում, թափուելը»,– իրան. \*vēč > հյ. վէն «վէճ»,– իրան. vēm, աւ. vaēmā «ժայռածերպ», մպրսկ. vēm «վեմ, քար» > հյ. վէմ «վէմ, կարծր քար»,– իրան. \*virēp > հյ. վրէպ «շեղում. թիւր»,– իրան. \*tēγ, աւ.

<sup>28</sup> Shtu G. Льюис, Х. Педерсен, Краткая сравнительная грамматика кельтских языков, Москва, 1954, էջ 35:

<sup>29</sup> Shtu Сравнительная грамматика германских языков, т. II, Москва, 1962, էջ 80: Իսկ երկար ī-ն համարուում է հ.-ե. \*ei երկբարբառի հետագայ հնչոյթափոխութիւնը գերմանական լեզուներում (նշ. աշխ., էջ 74):

*taēya*– «սուր, սայր» > հյ. աէգ «նիզակի ծայրի սուր երկաթ»,– իրան. \**kēš*, մպրսկ. *kēš* > հյ. ֆէշ «գրադաշտական կրօն»).

բ) միջին պարսկերէնի երկար *ē* / կարճ *e* > հյ. ե (*e*). *ē* > ե (հմմտ. *avēr* > աւեր «քանդուած. աւերում», *apēniyaz* > ապենիազ «կարիք չունեցող. անսպառ», *dēh* > դեհ «կողմ», *dēhkan* > դեհկան «կուսակալ», *dēn* > դեն «կրօն, հաւատ», *dēspan* > դեսպան, *dēv* > դեւ «չար ոգի. կուռք»,– *dušxēm* > դոխեմ,– *frēštak* > ֆրէշտակ, *kēšt* > կէշտ «կրօն».) *e* > ե (հմմտ. *šep* > շեպ «զառիվայր», *pet* > պետ «մեծաւոր. սկիզբ», *veh* > վեհ «վսեմ, ընտիր»).

գ) միջին պարսկերէնի երկար *ē* > հյ. ի (*i*) (հմմտ. *apēkam* > ապիկամ «անկամ, ծոյլ»<sup>30</sup>, *apēdat* > ապիրատ «անտեղի. անիրաւ», *dēmak* > դիմակ «դէմք, կերպարանք»,– մպրսկ. *dēpāk* > դիպակ «մետաքսեայ ոսկեթել գործուածք»,– *andēman* > յանդիման «դիմաց. Դէմ առ դէմ», *nēzak* > նիզակ, *vēžak* > վիժակ «ջրի հոսք», *tāčikēnak* > տանկինակ «ծեծի գաւազան»).

դ) իրանական *a* > հյ. ե (*e*) (հմմտ. \**āhrakan* «կրակային» > ահեկան (հայկական տոմարի 9-րդ ամիսը),– հպրսկ. *aruvasta*– «առոյգութիւն» > արուեստ,– իրան. \**gar* > գեր «ողբ, լաց, կոծ»,– իրան. \**dahakān* (?) > դեկան<sup>31</sup>,– մպրսկ. *darzīk* > դերձակ,– մպրսկ. *karp* «կերպարանք, կերպ» > կերպ).

ե) իրանական (/աւեստա, մպրսկ.) *i/ī* (/a) > հյ. ի (*i*) (հմմտ. \**amīč*, մպրսկ. «որսի մսով կերակուր» *amīč* > ամի՛ն «մսեղէն կերակուր»,– իրան. \**hakīrč*, մպրսկ. *hakīrč* > հակիրճ,– իրան. \**hērīk*, մպրսկ. *hērīk* > հիրիկ «մի ծաղիկ»,– իրան. \**mišt-*, աւ. *mišti-* > միշտ,– իրան. \**parīštā*, մպրսկ. *parist-*

<sup>30</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետեւ՝ ՆՀԲ) եւ «Առձեռն ....» բառարաններն ունեն ապիմակ «ինքնագլուխ, անզգամ» ձեւով (տե՛ս ՆՀԲ, հ. I, 1979, էջ 276, ԱԲՀԼ, 1988, էջ 106), բայց չր. Աճառեանն ուղղում է ապիկամ՝ համարելով փոխառութիւն միջին պարսկերէնից (տե՛ս Չ. ՍՃԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, 1971, էջ 235): Նրան հետեւում են նաեւ Գ. Զահուկեանը եւ Ռ. Ղազարեանը (տե՛ս Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀՍԲ, էջ 69, Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, 2004, էջ 165):

<sup>31</sup> Ըստ Հ. Հիւրշմանի՝ իրանական *dahgān*-ից, որն էլ իր հերթին՝ *dah* «տասը» նշանակող ձեւից (տե՛ս Հ. ՀԻՒՐՇՄԱՆ, Հայերէնի քերականութիւն (այսուհետեւ՝ ՀՔ), Երեւան, 2003, էջ 133): Չր. Աճառեանը համարում է փոխառութիւն հին պարսկերէնից. նախնական ձեւն էր դահեկան, «որ բուն նշանակում էր «Դարեհական, Դարեհի նշանով դրամ», ամփոփուելով դարձել է դեկան, բայց բուն ձեւը չի նշում (տե՛ս Չ. ՍՃԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, 1971, էջ 614–615, 645–646): Ըստ Գ. Զահուկեանի՝ իրան. \**dahakān* (?) ձեւից, որի պարսկերէն տարբերակն է *dahgani*– «տասանոց» (*dah* «տասը» բառից), որ հին ոսկէ դրամ էր (տե՛ս Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 522):

(/parast-) «պաշտող» > պարիշտ (ամ-պարիշտ, ամ-բարիշտ «անհաւատ, անաստուած»),— իրան. \*vīn, մպրսկ. vīn > վին «մի տեսակ քնար»):

Գրաբարեան հայերէնի է (ē)-ի՝ [եյ] հնչիւնական արժէքով երկբարբառակերպ լինելու տեսակէտն ամէնից հետեւողականօրէն պաշտպանել է ակադ. էդ. Աղայեանը: Որպէս այդ տեսակէտի լրացուցիչ հիմնաւորում, քննելով իրանական փոխառութիւններում դրսեւորուած՝ վերոյիշեալ առաջին երեք՝ ա), բ), գ), կէտերում ներկայացուած հնչիւնական անցումները, ի հաստատումն իր տեսակէտի, նա սահմանում է հնչիւնական երկու կանոն, ըստ որոնց՝ 1) հայերէնի բառամիջի է-ն ստացուել է հին պարսկերէնի ai (= աւեստայի aē) երկբարբառից, 2) այդ երկբարբառի արտացոլումն են նաեւ ի-ով անցումները, 3) ե-ն ստացուել է միջին պարսկերէնի (ըստ Աղայեանի՝ «պահլաւական») e-ից<sup>32</sup>: Այս սկզբունքների նախագաղափարը տուել էր դեռեւս Ա. Մէյէն [MEILLET 1936, 44–45]<sup>33</sup>:

Ամենեւին չվիճարկելով վերոյիշեալ կանոնների հաւաստիութիւնը՝ հարկ ենք համարում նշել հետեւեալը. 1) Վերոյիշեալ համապատասխանութիւնները վերաբերում են տարածամանակեայ հայեցակերպին եւ չեն արտացոլում գրաբարեան հայերէնի համաժամանակեայ պատկերը: Եթէ նոյնիսկ բառամիջում է ունեցող բառերը փոխառուել են հին պարսկերէնից կամ աւեստայից, դեռեւս չի նշանակում, որ յաջորդող հարիւրամեակների, աւելի ճիշտ՝ շուրջ հազար տարուայ ընթացքում (Ք. ա. 2-ից մինչեւ Ք. յ. 6. դդ.)<sup>34</sup> դրանց արտասանութիւնը մնացել էր նոյնը, հետեւաբար է-ն պահպանել էր իր երկբարբառային բնոյթը: Այն, որ է-ն Ե. դարում եւ նրանից առնուազն մի քանի դար առաջ այլեւս երկբարբառ չէր, վկայում են միջին պարսկերէնից կատարուած փոխառութիւնները, որոնցում գրաբարեան հայերէնի դիմաց միջին պարսկերէնն ունէր երկար պարզ ē ձայնաւոր: Կարելոր է նաեւ այն, որ իրանական փոխառութիւնների մեծ մասը կատարուել են հէնց միջին պարսկերէնից<sup>35</sup>: Միջին պարսկերէնը ոչ

<sup>32</sup> Տէս է. Գ. ԱՂԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 136–139:

<sup>33</sup> Տէս Ա. MEILLET, նշ. աշխ., էջ 44–45:

<sup>34</sup> Հին պարսկերէնը գործառւել է Ք. ա. 2-դ. դդ., իսկ աւեստայի լեզուին վերագրուում է աւելի վաղ կազմաւորում, թերեւս՝ Ք. ա. 10-դ. (տե՛ս Основы иранского языкознания (древнеиранские языки), Москва, 1979, էջ 12, Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 32):

<sup>35</sup> Տէս Հ. ՀԻՒՐԵՄԱՆ, ՀՔ, էջ 12–13, Հ. ր. ԱՃԱՌԵԱՆ, ՀԼՊ, հտ. I, 1940, էջ 235–236, Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, ՀԼՊՆԺ, էջ 493, 507: Եւ Հ. Հիւբշմանը, եւ Հ. ր. Աճառեանը հայերէնի իրանական փոխառութիւնների մեծ մասը վերագրում են յատկապէս պարթեւների տիրապետութեան ժամանակաշրջանին՝ Ք. ա. 256–226 թթ. (նոյն տեղում):

միայն ժամանակագրորէն աւելի մօտ էր գրաբարեան հայերէնին, քան հին պարսկերէնը եւ աւեստայի լեզուն, այլեւ նրա 2-րդ ենթաշրջանը համընկնում է գրաբարի առաջին ենթաշրջանին (Ք. ա. Դ. – Ք. յ. է.–Լ. դդ.)<sup>36</sup>, ուստի տրամաբանական է, որ այդ շրջանի փոխառութիւններն աւելի հարազատօրէն արտացոլուէին հայերէնում, մանաւանդ որ լեզուական շփումները եւս կրել են անմիջական բնոյթ: 2) Այն, որ միջին պարսկերէնի ինչպէս երկար  $\bar{e}$ -ն, այնպէս եւ կարճ  $e$ -ն հայերէնում կարող էին արտացոլուել  $\bar{e}$ -ով (իմա՛ կարճ  $e$ -ով), ըստ իս՝ կարող է լինել երկու կարգի բացատրութիւն. ա) հաւանական է, որ է ( $\bar{e}$ )-ի եւ է ( $e$ )-ի հնչիւնական (իմա՛ հնչոյթային) տարբերութիւնը Ե. դ. կէսերից արդէն իսկ տարընկալումների տեղիք է տուել, բ) եւ ( $e$ )-ով գրութիւնները հետագայ դարերի սխալ գրչութիւնների դրսեւորումներ (իմա՛ վրիպակներ) են, երբ այդ երկու հնչոյթների տարբերութիւնն այլեւս ամբողջութեամբ ջնջուած էր, եւ գրիչը (= ձեռագիր արտագրողը), հետեւելով իր ժամանակի արտասանութեանը, գրել է  $\bar{e}$ -ով. 3) իրան.  $a > \text{հյ. է } (e)$ , իրան. (/աւեստա, մպրսկ.)  $i/\bar{i}$  (/a)  $> \text{հյ. է } (i)$  անցումները եւս վկայում են, որ գրաբարեան հայերէնին անմիջականօրէն նախորդող դարերում իրանական պարզ ձայնաւորն է վերածուել հայերէնի պարզ ձայնաւորի, այլ ոչ թէ՛ երկբարբառը:

Հետեւաբար, հայ-իրանական հնչոյթային առնչութիւնները նոյնպէս վկայում են գրաբարեան հայերէնի է ( $\bar{e}$ )-ի՝ որպէս պարզ երկար ձայնաւորի հնչոյթային կարգավիճակի մասին<sup>37</sup>:

Այժմ, երբ ակնյայտ է, որ գրաբարեան հայերէնում է ( $\bar{e}$ )-ն՝ 1) երկար պարզ ձայնաւոր էր եւ է ( $e$ )-ի հետ նրա հակադրութիւնն ունէր քանակական բնոյթ, 2) բառավերջի դիրքում է ( $\bar{e}$ ) ձայնաւոր կարող էր լինել ոչ միայն բայի որոշ խոնարհուած ձեւերում (եւ լծորդութեան բայերի սահմ.

<sup>36</sup> СЕУ Основы иранского языкознания (среднеиранские языки), Москва, 1981, էջ 6:

<sup>37</sup> Պատկերացնելու համար, թէ ինչ աստիճանի փոփոխութեան կարող էր ենթարկուել հին հայերէնի հնչոյթային համակարգը շուրջ հազար տարուայ ընթացքում, կարելի է համեմատել Ե. դ. գրաբարեան հայերէնի եւ, օրինակ, ԺԳ.–ԺԴ. հարիւրամեակների միջին հայերէնի, մասնաւորապէս վերջինիս առաւել կանոնարկուած տարբերակը համարուող Կիլիկեան հայերէնի հնչոյթային համակարգերը, որոնց տարբերութիւններն զգալի են: Կարծում ենք՝ բաւական է միայն ասել, որ, օրինակ, գրաբարեան հայերէնի բարդ հնչոյթները՝ երկբարբառային, եռբարբառային եւ քառբարբառային կազմութիւնները, միջին հայերէնում ամբողջութեամբ ենթարկուել էին պարզեցման՝ վերածուելով պարզ ձայնաւորների կամ երկհնչիւնների (տես ՅՕ. ՎԱՐՍՏ, Կիլիկեան հայերէնի պատմական քերականութիւն, Երեւան, 2002, էջ 24–116, Ս. ՂԱԶԱՐԵԱՆ, Միջին հայերէն, գ. Ա., Երեւան, էջ 135–290, Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, հտ. Ա., Երեւան, 1972, էջ 58–168):

նրկ., եզ. Թ., 3-րդ դ.-ում, հրամ. եզ. ձեռում), այլեւ գոյականի ուղիղ ձեռում (հմմտ. մարգարէ, բազէ, բոպէ, միջաւրէ (< միջաւրեայ), աշտէ (< աշտեայ) եւ այլն),— պիտի պատասխանել եւս մէկ հարցի. է (ē)-ն եւ Ե (e)-ն կարո՞ղ էին գտնուել նաեւ լրացուցիչ բաշխման յարաբերութեան մէջ, այսինքն՝ որոշակի դիրքում հանդէս գալ իբրեւ միեւնոյն հնչոյթի կիրառական տարբերակներ, որովհետեւ գրաբարեան բառը չէր կարող աւարտուել Ե (e)-ով: Ըստ իս՝ պատասխանն ակնյայտ է. ո՛չ, որովհետեւ վերոյիշեալ քննութիւնը պարզեց, որ երկուսն էլ ինքնուրոյն հնչոյթներ էին՝ բառասկզբի եւ բառամիջի դիրքերում իմաստատարբերակիչ գործառնոյթով: Ճիշտ է՝ բաղաձայնով սկսուող միավանկ բայերն անցեալ կատարեալում բառասկզբում ստանում էին Ե նախադասելուածը (հմմտ. *եգիտ* «(նա) գտաւ», *եթող* «(նա) թողեց», *եհաս* «(նա) հասաւ», *եդ* «(նա) դրեց», *եա* «(նա) տուեց» եւ այլն), իսկ ձայնաւորով սկսուողները՝ է (հմմտ. *էանց* «(նա) անցաւ», *էառ* «(նա) առաւ», *էաւծ* (Λξοδ) «(նա) օծեց» եւ այլն), սակայն նախ՝ դա ձեւաբանական մակարդակի իրողութիւն է, ապա՝ հարցի էութիւնը փոխել չի կարող, որովհետեւ է (ē)-ն եւ Ե (e)-ն ոչ միայն ազատօրէն կիրառուում են բառասկզբում՝ բաղաձայնանախորդ դիրքում (հմմտ. *եզր*, *եղէգն*, *եռ* «եռում, եռացող բան», *երգ*, *երդ*, *երկն*, *էգ*, *էշ*, *էջ*, *էփիմերտէ* (Եփրեմ-վերդի) «գուշակութեան գիրք» եւ այլն), այլեւ, ինչպէս տեսանք, այդ դիրքում եւս իրականացնում են իմաստատարբերակիչ (= հնչոյթաբանական) գործառնոյթ:

Ուշագրաւ է, որ, իբրեւ կանոն, բառավերջի դիրքում է (ē) ունեն փոխառեալ բառերը, ընդ որում՝ փոխատու լեզուում բառերի մեծ մասը, մասնաւորապէս իրանականներն այդ դիրքում չունեն երկար ձայնաւոր կամ երկբարբառ, որն օրինաչափօրէն հայերէնում վերածուէր է (ē)-ի (հմմտ. ապաղարէ «մետաղեայ աման» (< պրսկ. *ābχōra*)<sup>38</sup>, բազէ «գիշակեր թռչուն» (< մպրսկ. *bāz* (*bāz*)), պրսկ. *bāz*, *bāza*)<sup>39</sup>, մարգարէ «մարգարէ, գուշակ» (իրան. < *mārēgar* (պրթեւ.), *mārkarēk* (սողդ.)<sup>40</sup>, բոպէ «ակնթարթ, բոպէ» (< յուն. *ῥοπή*)<sup>41</sup> եւ այլն): Ինչպէս տեսնում ենք, նշուածներից

<sup>38</sup> Տէս Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, էջ 227, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 67:

<sup>39</sup> Տէս Հ. ՀԻՒԲՇՄԱՆ, ՀՔ, էջ 114, Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. I, էջ 375, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 110:

<sup>40</sup> Տէս Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. III, էջ 276–277, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 515:

<sup>41</sup> Տէս Հ. ՀԻՒԲՇՄԱՆ, ՀՔ, էջ 386, Հ. ր. ԱճԱՌԵԱՆ, ՀԱԲ, հ. III, էջ 444, Գ. ՋԱՀՈՒԿԵԱՆ, ՀԱԲ, էջ 739:

միայն երկուսը՝ իրանական մարգարէ (սողդիական *mārkarēk* տարբերակով) եւ յունական բռալէ բառն են հարազատօրէն արտացոլուել հայերէնում, իհարկէ, եթէ նկատի չունենանք, որ՝ ա) յունական ῥοπή-ն բառասկզբում պիտի հնչէր հր (= ρ [hr])՝ հրոպէ<sup>42</sup>, իսկ սողդիական *mārkarēk*-ն էլ վերջում ունի կ (k), որը չունի հայերէն ձեւը:

Անշուշտ, ենթադրելի է, որ երկբարբառային ծագում ունեցող է (ē)-ն երկար պարզ ձայնաւորի է վերածուել երկբարբառակերպի միջանկեալ անցումային օղակով, բայց այդպիսին այն եղել է նախագրաբարեան ինչ-որ փուլում: Պարզեցման գործընթացի միտումը շարունակուել է նաեւ գրաբարեան հայերէնի շրջանում՝ ի վերջոյ հանգեցնելով երկար՝ է (ē) եւ կարճ՝ ե (e) ձայնաւորների քանակական (= հնչոյթային) տարբերութեան չէզոքացման, որը, սակայն, չի արտացոլուել գրութեան մէջ: Այդ երկու լեզուական միաւորների հնչոյթային նոյնականացման պատճառ կարող էր լինել այն, որ հայերէնը չէր պահպանել միեւնոյն ձայնաւորի երկար եւ կարճ տարբերակները՝ որպէս ինքնուրույն հնչոյթների հ.–ե. համակարգը: Ըստ այդմ՝ է (ē)-ի եւ ե (e)-ի հնչոյթային հակադրութիւնը գրաբարեան հայերէնում արդէն իսկ ոչ օրինաչափ (= հակահամակարգային) երեւոյթ էր, հետեւաբար նրա պահպանման լեզուական հիմքերը թոյլ էին: Հնարաւոր է, որ է-ի եւ ե-ի քանակական տարբերութեան չէզոքացումը սկիզբ է առել գրաբարեան հայերէնի սկզբնական շրջանում, օրինակ՝ Ե.–է. դարերում:

Կատարուած քննութիւնը բաւարար հիմքեր է տալիս ասելու, որ՝ 1) երկբարբառային ծագում ունեցող է (ē)-ն նախքան Ե. դ. վերածուել էր երկար պարզ ձայնաւորի, հետեւաբար այն գրաբարեան հայերէնի ձայնաւորական հնչոյթային համակարգի լիիրաւ անդամ էր. 2) է (ē)-ն հնչոյթային հակադրութիւններ է ձեւաւորել բոլոր երեք դիրքերում, իսկ ե (e)-ի հետ՝ միայն բառասկզբի եւ բառամիջի դիրքերում, որովհետեւ բառավերջում ե (e)-ն չի գործառուել. 3) բառավերջի դիրքում ե (e)-ի գործածութեան անհնարին լինելը, որը պայմանաւորած էր առհասարակ գրաբարեան

<sup>42</sup> Ուշագրաւ է, որ յունարէնում բառասկզբում թաւ արտաբերութիւն ունեցող ῥήτιν-ն [hretine] հայերէնում արտասանուել է առանց թաւ շնչի՝ ռետին, իսկ ῥήτωρ-ը [retor]՝ թաւ շնչով՝ ռետոր (/ռետոր) «ճարտասան», այն դէպքում, երբ երկու բառերում էլ ռ (r) հնչիւնական միջավայրը նոյնն է: Նկատի ունենալով այդ բառերի բնոյթը (= գրքային բառապաշարի)՝ քիչ հաւանական ենք համարում խօսակցական լեզուի (= բարբառային) ազդեցութեամբ բացատրելը:

հայերէնի բառակազմութեան իւրայատկութեամբ, հիմք չէ այդ դիրքում նրանց միջեւ լրացուցիչ բաշխման (= այլահնչակային) յարաբերութիւն ճանաչելու համար. 4) է (ē)-ի եւ է (e)-ի՝ որպէս ինքնուրոյն հնչոյթների հակադրութիւնն ունէր քանակական բնոյթ, մի բան, որը օրինաչափ չէր գրաբարեան հայերէնի հնչոյթային համակարգի համար, եւ, թերեւս, հենց դա էլ աւելի ուշ եղել է նրանց հնչոյթային տարբերութեան չէզոքացման հիմնական պատճառը. 5) առանձին դէպքերում կարող է խօսք լինել նաեւ ազատ փոփոխական յարաբերութիւնների մասին մի կողմից՝ է (ē)-ի, միւս կողմից՝ է (e)-ի եւ ի (i)-ի միջեւ:

### ՀԻՄՆԱԲԱՌԵՐ


Գրաբարյան հայերեն, երկար ձայնավոր, երկրարբառակերպ, փակ ձայնավոր, Ա. Մելե, Հ. Աճառյան, Է. Աղայան, հնչոյթաբանական բնութագիր, համաժամանակյա հայեցակերպ, իրանական փոխառութիւններ

### РЕЗЮМЕ

В арменоведении относительно фонологических характеристик древнеармянского է (ē) высказывались две точки зрения: 1) это был закрытым гласным, который противопоставлялся է (e) как открытому гласному (Мейе, Ачарян, Капанцян и др.); 2) это был дифтонг с фонетическим значением [tj/ei] (Агаян, Джаукян, Туманян и др.). В данной статье предлагается третья гипотеза, согласно которой древнеармянский է был долгим гласным, а его отличие от է было количественным. По существу, для обоснования новой точки зрения достаточны лишь аргументы синхронического анализа, но решение проблемы становится более убедительным при параллельном применении диахронических аргументов. В частности, заимствования среднеперсидского языка в древнеармянский, в котором армянский язык в основном имеет фонема է (ē) вместо долгого ē среднеперсидского языка, показывает, что է (ē) древнеармянского языка, скорее всего, был долгим гласным.

## SUMMARY

In Armenian Studies, two major views have been proposed regarding the phonemic nature of the OA (Grabar) sound "ե" (ē). a. One view states that it was a vowel with a closed articulation, contrasting with "է" (e), which was an open vowel (Meillet, Acharyan, Ghapantsyan, etc.). b. another view suggests that it was a diphthong [tʰ/ei̯], representing a distinct sound (Aghayan, Jahukyan, Toumanyan, etc.). The present article introduces a third perspective, proposing that the OA "ե" (ē) was a long vowel, with its difference from "է" being of a quantitative nature. In fact, this new view can easily be supported by the results of synchronic analysis. However, the argument becomes more convincing when supported by diachronic evidence. Specifically, the borrowing of words from Middle Persian into OA, where the long "ē" of Middle Persian corresponds to the Armenian (ē) phoneme, suggests that the OA (ē) was most likely a long vowel.



## ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՒՐԱՅԱՆԻ «ԳԵՒՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊԻ ԽՈՍՔԱՐՎԵՍՏՈՒՄ՝

«Գեւորգ Մարզպետունի» պատմավեպի գրականագիտական ուսումնասիրությունների<sup>2</sup> տարբեր հատվածներում մի քանի նախադասությունամբ կամ մի քանի էջով հպանցիկ անդրադարձումներ կան նաեւ հեղինակի խոսքարվեստի որոշ առանձնահատկություններին: Թեեւ Արսեն Տերտերյանի աշխատության մեջ նույնիսկ առանձին ենթաբաժին է նվիրված վեպի ոճական քննությանը (էջ 267–271), բայց այն հիմնականում կազմված է գեղեցիկ արտահայտությունների, դարձվածքների եւ թեւավոր խոսքերի մեջբերումներից, որովհետեւ անցյալ դարի 30–40-ական թվականներին հայ բանասիրության մեջ ոճագիտությունը՝ որպես ինքնուրույն գիտաճյուղ գեղեւս չէր տարանջատված: «Գեւորգ Մարզպետունի» վեպի լեզվաոճական յուրահատկությունների որոշակի, բայց ոչ ամբողջական վերլուծություն է պարունակում միայն Լ. Եզեկյանի «Գրական աշխարհաբարը եւ արեւելահայ պատմավեպի լեզուն» աշխատության չորրորդ գլուխը<sup>3</sup>, որում ոչ մի խոսք չկա աստիճանավորման (եւ ոչ միայն աստիճանավորման) մասին: Այսինքն՝ այս վեպի լեզվի շատ առանձնահատկություններ տակավին ուսումնասիրված չեն: Այս հոդվածի նպատակադրումները եւս սահմանափակ են՝ ցույց տալ, թե վեպում գործածված աստիճանավորումները որքանով են նպաստել գլխավոր հերոսների հոգեբանական բացահայտումներին եւ կերպարների տիպականացմանը:

<sup>1\*</sup> Ստացվել է՝ 27.10.2024, գրախոսվել է՝ 27.11.2024:

Էլ. հասցե՝ terminasyanashot@gmail.com:

<sup>2</sup> Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆ, *Մուրացան, Եր., 1971*: Մ. ՄԿՐՅԱՆ, *էջեր հայ վիպասանության պատմությունից, Եր., 1957*: Ս. ՍԱՐԻՆՅԱՆ, *Մուրացան, Եր., 2004*: Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, *Հայ պատմավեպի պոետիկան, Եր., 1986*: Վ. ՍԱՖԱՐՅԱՆ, *Գրողի եւ կերպարի անհատականությունը, Եր., 2001* ևւն:

<sup>3</sup> ՏԷՄ ԼԵՒՈՆ ԵԶԵԿՅԱՆ, *Գրական աշխարհաբարը եւ արեւելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 402–437*:

Մինչև բուն խնդրին անցնելը հակիրճ անդրադառնանք «Գեւորգ Մարգպետունի» վեպի մտահղացմանը եւ հեղինակի աշխարհայացքին:

Նշենք, որ մենք եւս հետեւել ենք որոշ գիտնականների կիրառած եղանակներից մեկին. այն է՝ Մուրացանի գործերը մեկնաբանելիս երբեմն օգտվել նաեւ նրա կենսագրական թեկուզ մեկ-երկու մանրամասներից, որոնց լույսի տակ առավել տեսանելի է հեղինակի աշխարհայացքը: Նման սկզբունքը որոշակի հնարավորություն է տվել վեպը ուսումնասիրողներին՝ նաեւ իրարից տարանջատելու գաղափարախոս եւ գեղագետ Մուրացաններին, որոնց նպատակադրումները երբեմն հակասում են միմյանց:

Ավելացնենք նաեւ, որ հնարավորինս խուսափելով նախորդ ուսումնասիրողների կարծիքները վերաշարադրելու ավանդույթից՝ մենք պարզապես փորձել ենք որոշ լրացումներով առավել տեսանելի հիմնավորել ընդունված այն տեսակետը, որ Մուրացանը ազգի փրկության եւ պահպանման գործում առանձնակի կարեւորում է Հայ Առաքելական Եկեղեցու եւ բարոյապես ամուր ընտանիքի դերը<sup>4</sup>: Բավական է հիշել, որ Մինաս Բերբերյանին ուղարկած ինքնակենսագրության մեջ վիպասանը խոստովանում է, թե Հայ Առաքելական Եկեղեցու բացառիկ նշանակությունն ընդգծելու համար նույնիսկ երկու վեպ է գրել՝ «Իմ կաթոլիկ հարսնացուն» եւ «Հայ բողոքականի ընտանիքը»<sup>5</sup>: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է Մուրացանը «Գեւորգ Մարգպետունի» վեպում այնքան անբարեհաճ Հովհաննես Դրասխանակերտցի Հայոց կաթողիկոսի եւ հրաշալի պատմիչի պատմական կերպարի հանդեպ, որի մասին վեպի հերոսները խոսում են քամահորանքով, որի գործողությունները քննադատում են բոլորը... Ենթադրելի է, որ վեպը գրելիս գաղափարախոս Մուրացանին առաջին հերթին անհրաժեշտ են եղել անձնականը հայրենիքին զոհաբերելուն անպատրաստ հերոսներ, որոնց պատճառով երկիրը մեծ աղետների է ենթարկվել: Իսկ այդ ծանր վիճակից հայրենիքը փրկելու համար անձնագոհ հերոսներ ստեղծելը համեմատաբար ավելի դյուրին է: Եւ որքան բարձր դիրք ունենան անձնապաշտ հերոսները, այնքան հեշտ կլինի հիմնավորել, որ հենց նրանց պատճառով է երկիրը հայտնվել աղետալի վիճակում: Եւ ահա,

<sup>4</sup> Այս տեսակետը առաջին անգամ հիմնավորել է Ա. Տերտերյանը իր նշված գրքի «Մուրացանի աշխարհայացքը» գլխում. էջ 11–27:

<sup>5</sup> Տե՛ս Մ ՈՒՐԱՑԱՆ, Երկերի ժողովածու յոթ հատորով, հտ. 7, Եր., 1965, էջ 137–138: Այս յոթհատորյակի գրքերից հետագա քաղվածքները կնշվեն (Մ., հտ..., էջ... ձևով):

Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» գրքի էջերում հայտնաբերում է մի քանի դրվագներ, որոնցում կաթողիկոս-պատմիչն անկեղծորեն խոստովանում է, որ արաբների հետապնդումներից ու գերեվարվելուց խուսափելու համար հաճախ է ստիպված փախուստի դիմել... Ահա եւ գաղափարախոս Մուրացանի առաջին «զոհ»... Վիպասանը միտումնավոր գրեթե անտեսում է Հովվապետի համեստ, ոչ անձնամեծար նշումները՝ իրար դեմ առճակատող հայ իշխաններին հաշտեցնելու իր ջանքերի եւ հայրենանվեր այլ գործերի մասին<sup>6</sup>: Սակայն նկատենք, որ Մուրացանը, քննադատելով կաթողիկոսին, նպատակ ունի ոչ թե նսեմացնելու, այլ հակառակը՝ առավել ընդգծելու մեր ժողովրդի ինքնության եւ գոյապայքարի գործում Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա առաջնորդի բացառիկ կարեւորությունը: Պատահական չէ, որ Մարգարտունին ընդամենը քսան կամավորների հետ Բեշիրի բանակի դեմ մարտի գնալուց առաջ, քանի որ այդ պահին կաթողիկոսը բացակայում էր Գառնիից, պահանջում է, որ այդ քաջերը իրենց սրերը դնեն Մաշտոց կաթողիկոսի շիրմաքարին ու երգվեն լինել «անձնվեր զինվոր եւ նահատակ՝ հայրենիքի փրկության»: «Ձեր սրերը թող օրհնե սուրբ Մաշտոցը, — ասում է իշխանը, — եւ ձեր ուխտին ու երդման թող վկա լինին նրա նշխարները» (Մ., հտ. 4, էջ 294): Գաղափարախոս Մուրացանին, հոգեւոր առաջնորդից բացի, պետք է եղել անձնականը հայրենիքի շահերից վեր դասելու պատճառով երկիրը պառակտած ու թշնամու արշավանքների եւ ավերածությունների պատճառ դարձրած եւս մեկ գլխավոր անձ: Եւ վեպում այդ անձը հայոց պատմության ամենանշանավոր ու փառապանծ արքաներից մեկն է՝ Աշոտ Երկաթը... Բայց ինչպե՞ս համոզիչ դարձնել մի «փաստ», որը գոնե քիչ հակասի պատմական ճշմարտությանը: Պատմիչը նշում է, որ երկիրը պառակտել էին իրար դեմ կռվող, իրարից ամրոց ու կալվածքներ խլող իշխանները, որոնց մեջ կային նաեւ արքայի դեմ ապստամբածներ: Իսկ ի՞նչ պատճառով կարող էին իշխանները, նույնիսկ իր աները դուրս գալ արքայի դեմ: Գաղափարախոս Մուրացանն առաջարկում է նաեւ այս հարցի «լուծումը»: Քանի որ ազգապահպանման հիմքը Հայ Առաքելական Եկեղեցին ու բարոյապես ամուր ընտանիքն են, ուրեմն հարմար կլինի Աշոտ Երկաթի ձախողումներն էլ պայմանավորել նրա բարոյապես ան-

<sup>6</sup> Տե՛ս ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ, Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 296, 301, 308, 312 եւն:

հաստատ ընտանեկան կյանքով: Մանավանդ որ պատմիչը գրում է, որ Աշոտ Երկաթի անհաջողությունները պայմանավորված էին «...այն ողջախոհությունը, որ նա սկզբից էր ստացել, անմաքուր բղջախոհությամբ<sup>7</sup> փոխակերպելով...»<sup>8</sup>: Բղջախոհություն... Բայց չէ՞ որ պատմիչը նշում է, որ արքայի դեմ ապստամբել է նաեւ Ուտիքի վերակացու Յլիկ Ամրամը: Կարծես թե կապը հայտնի է: Ուրեմն թող Հայոց արքան սիրային կապի մեջ լինի հենց Ուտիքի վերակացու Յլիկ Ամրամի կնոջ հետ եւ իր անբարո վարքագծի պատճառով դժբախտություններ բերի երկրին ու ժողովրդին:

Եւ ի՞նչ. գաղափարախոս Մուրացանին հաջողվում է հասնել իր նպատակին: Այս հարցին պատասխանելու համար հարկ է ծանոթանալ մյուս՝ ոչ թե գաղափարախոս, այլ մարդկային հոգեկերտվածքների նրբին գեղածեւման վարպետ Մուրացանին, որին անշափ սիրելի են իր ժողովրդի պատմության նշանավոր հերոսների կերպարները, նույնիսկ ազգի խորհրդանիշ դարձած վայրերը: Հիշենք՝ ինչպիսի հուզումնալից ապրումներ է ունեցել առաջին անգամ Սեւանա լիճը տեսնելիս, եւ հետո՝ նավակով դեպի կղզի գնալիս, հենց նավակի միջից ինչպես է կատարել դպրոցական տարիների իր ուխտը՝ հայոց սրբազան ավագանից մեկ բաժակ ջուր խմելը: «Եւ առաջանում էի սրտատրոփ. մի ինչ-որ քաղցր եւ գողտր զգացմունք մղում էր իմ սիրտը դեպի այս ծովակը...ինձ թվում էր, թե Գեղամա ծովակի մեջ ինձ անծանոթ, բայց հոգվույս ընտանի շատ նորություններ կան, որոնց պիտի տեսնեի, թե անցյալ դարերի շատ անցքերի պատմություններ նրա ալիքների մեջ պիտի կարդայի...» (Մ., հտ. 7, էջ 64): «Ինքս էլ լցրի բաժակս այդ վճիտ ու քաղցրահամ ջրով եւ ախորժանոք խմեցի: Սա էլ իմ ուխտերից մին էր, որ կատարեցի: Բայց ի՞նչ ուխտ. աշակերտական ժամանակի, անկեղծ զգացմունքների եւ սուրբ ոգեւորության ուխտ...»<sup>9</sup>: Այսպիսի ներաշխարհի տեղ գեղագետը պետք է որ դեմ լիներ իր մյուս կեսի՝ գաղափարախոսի արարքներին: Կարծում ենք՝ թեեւ գաղափարախոս Մուրացանի նպատակադրումն ազնիվ է, բայց ի տարբերություն գեղագետի՝ իրագործումը այնքան էլ համոզիչ չէ: Դժվար չէ նկատել, որ գաղափարախոս Մուրացանը համեմատաբար անկաշկանդ է հատկապես վեպի առաջին հատվածներում, երբ գործողության մեջ չկա

<sup>7</sup> Բղջախոհ – վավաշոտ, ցանկասեր, տոփասեր, ժամանակակից հայոց լեզվի բառարան, հտ. 1, եր., 1969, էջ 325:

<sup>8</sup> Հովհ. ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ, նշ. գիրքը, էջ 225 :

<sup>9</sup> ՄՈՒՐԱՑԱՆ, հտ. 7, էջ 68:

Հայոց արքան, եւ նրա արարքների մասին պատմում են ուրիշները: Այսպես՝ հենց առաջին գլխում Սահականուշի եւ իր դայակի զրույցի ընթացքում աստիճանաբար սկսում են զծագրվել անպատասխան սիրուց տառապող հավատարիմ կնոջ եւ նրա հանդեպ այնքան անիրավ ամուսնու կերպարները: Ճիշտ է՝ թագուհին հիացմունքով է խոսում նաեւ իր սիրեցյալի բազում քաջագործությունների, նրա առնական գեղեցկության եւ վեհանձն կեցվածքի մասին, սակայն նրա հոգեկան տվյալառնքների համապատկերում Աշոտ Երկաթի կերպարն ընթերցողի համար, մեղմ ասած, այնքան էլ գրավիչ չէ:

Գաղափարախոս Մուրացանը ջանք չի խնայում նաեւ Սահակ Սեւադայի եւ Յլիկ Ամրամի հանդեպ արքայի գործած անիրավությունները թվարկելիս: Առաքինի մարդկանց համար բարոյապես ամուր ընտանիք չունեցող դյուցազունն անգամ մի նենգ ու երախտամոռ չարագործ է, որին պատժելու համար ապստամբել են նույնիսկ բարեկամներն ու երբեմնի հավատարիմ զինակիցները: Սակայն, երբ ոչ թե պատմվում է Աշոտի մասին, այլ արքան ինքն է հայտնվում վիպական գործողությունների կենտրոնում, ականատես ենք լինում մեկ այլ կերպարի: Գաղափարախոս Մուրացանը, ասես զգալով Աշոտ Երկաթի պատմական կերպարի հանդեպ իր մեղանշումները, տեղը զիջում է մյուս՝ պատանեկան ուխտը կատարելու համար Սեւանա լճից ջուր խմող Մուրացանին, որը փորձում է փրկել Հայոց պատմության ամենասիրված հերոսներից մեկի կերպարը: Ընթերցողին է ներկայանում մի հերոս, մի առյուծասիրտ զորավար, որը բազում քաջագործությունների համար արժանիորեն վաստակել է Երկաթ մականունը, բայց չի կարողացել պատենշ դառնալ արքայի եւ մարդու միջեւ: Մարդ, որը չի կարողացել իր մեջ խեղդել մահկանացուին բնորոշ ամենաբնական ու ամենանվիրական զգացմունքներից մեկը՝ սերը: Այս երկու Մուրացանների «բախումից» ծնունդ է առել հոգեբանական խորը մի կերպար, որպիսին քիչ է հանդիպում նույնիսկ համաշխարհային ճանաչում ունեցող երկերում: Ավելացնենք, որ վեպի որոշ դրվագներում գեղագետ Մուրացանը փորձում է փոքր-ինչ մեղմել նաեւ գաղափարախոս Մուրացանի՝ Հայոց կաթողիկոսի կերպարը միակողմանի մատուցելու մղումը: Նշում է, որ Հովվապետը մեծ ցավ էր ապրում երկրին ու ժողովրդին պատուհասած աղետներից, բայց ավելի հաճախ գրեթե կրկնում էր այն միտքը, թե՝ «Նրա բարեկազմ, հաղթանգամ եւ արտաքուստ զորավոր մարմնի մեջ ապրում էր մի տկար սիրտ եւ երկշոտ հոգի» (Մ., հտ. 4, էջ 202): Եւ

նման փոքրիկ դրվագները չեն բարձրանում գրական հերոսի հոգեկան ներքին ողբերգության խորքային պատկերման մակարդակի, որից էապես կշահեր վեպի գեղարվեստականությունը:

Ոճագիտությանը նվիրված ձեռնարկներում սովորաբար խոսքի արտահայտչականությունը պայմանավորող միջոցները տարանջատում են պատկերավորման (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում են) եւ արտահայտչական (կրկնություն, աստիճանավորում, հակադրություն են) տեսակների: Բայց մեզ առավել ընդունելի է այն մոտեցումը, որ «...այդ տեսակները դիտարկվում են միասնաբար՝ որպես պատկերավորման կամ արտահայտչական կամ պարզապես՝ պատկերավորման-արտահայտչական միջոցներ: Բոլոր դեպքերում, տարաբնույթ անվանումներից ու դասակարգումներից լեզվական այդ միջոցների բնույթն ու բովանդակությունը եւ դրանց նկարագրությունը չեն փոխվում»<sup>10</sup>: Աստիճանավորմանն առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ռուս լեզվաբանների տասնյակ ուսումնասիրություններում, որոնցում փորձ է արվում բացահայտել այս արտահայտչամիջոցի իմաստային, դարձվածքային, քերականական եւ այլ առանձնահատկությունները<sup>11</sup>: Սակայն մենք չենք անդրադառնա այդ տեսական դրույթներին, քանի որ, ինչպես նշել ենք, սույն հոդվածի բուն խնդիրն է ցույց տալ, թե «Գեւորգ Մարգալետունի» վեպում օգտագործված աստիճանավորումները որքանով են նպաստել պատկերային համակարգի հարստացմանը եւ հերոսների կերպարների տիպականացմանը: Կարծում ենք, որ հերոսների հոգեկերտման ու տիպականացման, ինչպես նաեւ աստիճանավորման նրբին կիրառումների առումով առավել տպավորիչը այն դրվագներն են, որոնք ներառված են Աշոտ Նրկաթի, Սահականույշի, Սահակ Սեւադայի, Յլիկ Ամրամի, որոշ դրվագներում նաեւ Գեւորգ Մարգալետունու վերհուշերի, երկխոսությունների եւ խոհերի պատկերներում: Ճիշտ է՝ վերջինիս գործողություններն ու մտածելակերպը համեմատաբար հեշտրենկալի էն, որովհետեւ ունենալով բարոյապես ամուր ընտանիք՝ նա զերծ է անձնական ծանր ապրումներից ու տառապանքներից եւ ամբողջովին նվիրված է հայրենիքի փրկության գործին, բայց վեպում մի քանի գեղեցիկ

<sup>10</sup> ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ Եւ ուրիշներ, Հայոց լեզու եւ խոսքի մշակույթ, դասագիրք հումանիտար եւ բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար, Եր., 2019, էջ 132:

<sup>11</sup> Տե՛ս <https://cyberleninka.ru/article/n/gradatsiya-kak-stilisticheskij-priem-hudozhestvennoy-rechi>:

հատվածներ կան, որոնցում Մուրացանը բացահայտել է նաեւ գլխավոր հերոսի հոգու զգայուն ծալքերը: Դրանցից ամենահաջողվածը նշանավոր մարտին նախորդող գիշերը խաղաղ քնած որդուն տեսնելու հուզառատ ապրումների նկարագիրն է.

«Գուցե իմ նախածեռնությունը հաճելի չէ Աստծուն, գուցե նա բարկանում է, որ ես հանդուգն մտքեր եմ հղանում եւ խաղաղ քուն վայելող արարածների վրա անակնկալ հարձակումն եմ գործում... Գուցե նա ինձ պատժելու համար հագարացիներից մեկի սուրը մխե իմ այս միամոր որդու կողը եւ նրա կենաց արեւը խավարեցնե... Եւ ես հավիտյան զրկվեմ նրանից... իմ կյանքի այս միակ մխիթարությունից... Օ՛հ, եւ տեսնեմ նրան արյունաշաղախ, ժպիտը գեղեցիկ դեմքի վրա սառած եւ սիրուն աչքերը հավիտյան փակված... Ո՛չ, անկարելի է. ո՞ր Աստվածը այնուհետեւ կարող է իմ կսկիծը փարատել... Եւ ի՞նչ լուր տանեմ ես նրա մորը. ի՞նչ երեսով նրան երեւամ... Արդյոք մի անգուլթ, մի բարբարոս չեմ ես...» (Մ., հտ. 4, էջ 328–329):

Մուրացանն ընդհանրապես նախընտրում է հերոսների խոսքը շարադրել հռետորական հարցեր, բացականչություններ եւ հուզական-զգացմունքային բառեր պարունակող նախադասությունների աստիճանավորումով, որոնց կազմում սովորաբար կան նաեւ լեզվի ու պատկերավորման ամենատարբեր արտահայտչամիջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն եւն: Սակայն այս պատկեր-խոհում աստիճանավորումից ու հռետորական հարցերից բացի այլ արտահայտչամիջոցներ չկան: Օգտագործած բառերն էլ առանձին վերցված ոճական հարուստ լիցքեր չպարունակող, համագործածական միավորներ են: Այսպիսի սահմանափակ «զինանոցով» այսքան տպավորիչ գեղարվեստական խոսք ձեւավորելը Մուրացանի մեծ տաղանդի խոստուն վկայություններից է:

Սակայն, ինչպես կտեսնենք, աստիճանավորման գործածության ոճական բազմազանությունամբ առավել ուշագրավը վեպի մյուս՝ անձնական ողբերգություններից տառապող հերոսների կերպավորման հատվածներն են, որոնք հիմնականում երբեմնի երջանիկ օրերի, ապա հիասթափության ու խորտակված անուրջների նկարագրություններ են կամ իրենց ապրած ողբերգությունների համար ինքնադատապարտման ու ինքնաձաղկման արտահայտություններ: Սկսենք թագուհու՝ երջանիկ օրերի հուշապատումների առավել պատկերավոր եւ գեղարվեստական լիցքերով հարուստ աստիճանավորումներից:

«Երբ առաջին անգամ հայրս հայտնեց, թե Հայոց իշխանները վրաց թագավորի եւ աբխազաց Գուրգենի հետ միասին պիտի ժողովեն Աշոտ արքայորդուն թագավոր պսակելու... ինչպե՞ս ցանկանում էի, որ բոլոր իշխանազն կանանց մեջ ամենից բարձր հանդիսանայի ես, որ ամենքի աչքերն ինձ վրա նայեին, որ ամենքը ինձմով զբաղվեին, եւ որ այդ ամենը Աշոտ Երկաթը տեսներ...» (Մ., հտ. 4, էջ 58–59): «Ձեմ կարող նկարագրել, թե ինչպիսի՜ անձկությամբ էի փափագում տեսնել երիտասարդ թագավորին, որ այնքան կարճ ժամանակում ընկճեց, խորտակեց թշնամու զորությունը, մաքրեց երկիրը բռնավորներից, ազատեց ժողովուրդը ստրկությունից, գրավեց ու գերեց իշխանների սիրտը եւ նրանց բոլորին ոգեւորեց այնքան, որ միմյանց դեմ ունեցած ամեն գժտություն մոռանալով՝ եկան-ժողովվեցան յուր շուրջը, արքայական թագով յուր արժանավոր գլուխը պսակելու» (նույն տեղում, էջ 60):

Նկատենք, որ թագուհու եւ դայակի զրույցում հանդիպող այս եւ ուրիշ դրվագներում թեեւ երբեմն հանդիպում են միայն բառային հոմանիշներով կամ բառակապակցություններով կազմված աստիճանավորումներ, օր.՝ «...ամբողջ Դվինը մի աչք, մի շունչ եւ մի հոգի դարձած՝ յուր թագավորի ելնելուն էր սպասում...: Որոտում էին հրապարակները, բուրգերը, աշտարակները եւ մինչեւ անգամ քաղաքից դուրս գտնվող մարտկոցները» (նույն տեղում, էջ 65), սակայն ավելի հաճախ այդ հիշողություններն ու մտորումները կերտված են այնպիսի ստորադասական խնդիր- նախադասությունների հաջորդականությամբ, որոնց նախորդում է նպատակ, իղձ, երազանք արտահայտող որեւէ բայածեւ՝ ցանկանում էի, փափագում էի, երազում էի եւն: Ոչ հաճախ նրա հոգեկան ապրումների եւ բռնկուն հույզերի աստիճանավորումներն ամփոփված են նաեւ հեղինակային խոսքին բնորոշ պատմողական նախադասություններում, որոնք աչքի են ընկնում գեղարվեստական խոսքին բնորոշ ամենատարբեր արտահայտչամիջոցների հագեցվածությամբ: Ասվածը հիմնավորենք եւս երկու մեջբերումներով: «...Այո՛, դուք ընդունում էիք թագավորին: Գարգմանը երիտասարդացել էր. լեռներն ու բլուրները հրճվում էին, ժողովուրդը շլանում էր Հայոց իշխանապետության փառահեղ պերճություն... իսկ Էս, Սեդա՛, ես ընդունում էի ոչ միայն Հայոց թագավորին, Հայոց իշխանապետության պարծանք Աշոտին, այլեւ... նրան, որ բերում էր յուր հետ իմ վարդաժին հույսերի պսակը, իմ անսահման երջանկությունը, իմ երանության երկինքը... Ընդունում էի նրան, որ կրում էր յուր մեջ իմ սիրապատար սիր-

տը, իմ սիրատենչ հոգին... որի հայացքը հափշտակում էր իմ էությունը, որի ձայնը հնչում էր իմ ականջին ինչպես քերովբեների մեղեդին... Եւ այդ դյուցազնը, այդ գերբնական արարածը, Սեդա՛, իմ փեսան, իմ ամուսինն էր...» (նույն տեղում, էջ 80–81):

«Եթե համոզված չլինեի, որ այս շլացուցիչ փառքին հաղորդ պիտի լինեմ ես, եթե չիմանայի, որ ինձ է պատկանում այն անձը, որին ամենքն աշխատում են մոտենալ, որի հայացքը այնպես ճգնում են հափշտակել, եւ ես միեւնույն ժամանակ տեսների ինձ այնքան նրանից հեռու, աշտարակի մեջ բանտարկյալ, օ՛, գուցե այդ բարձրությունից իսկ գլորեի ինձ ներքեւ... բայց երբ մտածում էի, թե նա իմն է, թե այդ բազմամբոխ զորքի ու ժողովրդայն հրամայողը իմ ապագա ամուսինն է, երբ տեսնում էի, որ երբեմն իմ ձեռքը խնդրող իշխաններն այժմ անհուն մեծարանքով ու ակնածությունմբ գլուխ են խոնարհում նրա առաջ, եւ այդ բոլորը ես տեսնում եմ, ներքին հրճվանքից սիրտս կամենում էր դուրս թռչիլ... Եւ այդ միեւնույն սիրտը, եթե գտնվեր այդ բոպեին իմ ձեռքում, հավատացիր, իմ բարի՛ Սեդա, ես կգլորեի նրան այդ դյուցազնի ոտքերի առաջ...» (նույն տեղում, էջ 83):

Այս հուշապատկերներում շքեղորեն միահյուսված են անձնավորումն ու փոխաբերությունը (Սիրտս կամենում էր դուրս թռչել, Գարգմանը երիտասարդացել էր, լեռներն ու բլուրները հրճվում էին, ...սիրտս... կգլորեի այդ դյուցազնի ոտքերի առաջ), նրբակերտ մակդիրները (փառահեղ պերճություն, իշխանապետության պարծանք, վարդաժին հույսեր, երանության երկինք), չափազանցությունը (գերբնական արարած), համեմատությունը (որի ձայնը հնչում էր ...ինչպես քերովբեների մեղեդին), բայց կարծում ենք՝ ակնբախ է, որ այս գեղապատկերների գլխավոր առանցքը աստիճանավորումն է:

Իսկ երբ Թագուհին պատմում է իր ապրած ողբերգությունների մասին, նրա թախծոտ մտորումները նկարագրող դրվագներում արդեն Մուրացանը շարահյուսական այլ կառույցներ է կիրառում: Այսպես՝ պատահմամբ ամուսնու դավաճանությանը ականատես լինելու մասին հիշողությունը, որում վիրավոր հոգու ցավատանջ ապրումներն են, արտահայտված է հեռտորական հարցերով աստիճանավորված կարճ, բայց տարողունակ բացականչական նախադասություններով: Հայտնի է, որ հուզական խոսքում կարող են լինել նաեւ խոսակցական ոճին հատուկ շարահյուսական շեղումներ, որոնք հատկանշվում են «...պարզ, համա-

ռոտ նախադասությունների, ինչպես նաև թերի նախադասությունների առատ գործածությամբ, ոչ թե շաղկապով, այլ շարահյուսությամբ կապակցություններով, անհետեւողականության զանազան դրսեւորումներով: Վերջինս արտահայտվում է նրանով, որ նախադասության տարբեր մասերի միջև ենթադրվող կապը խզվում է, նախադասության հաջորդ մասը բացակայում է եւ միայն մտովի է ենթադրվում<sup>12</sup>: Մեջբերենք թագուհու հոգեկան տվյալտանքներն արտահայտող այդպիսի դրվագներից մեկը: «...եւ ի՛նչ տեսա, Սեդա... Օ՛ր, ինչպե՛ս այդ ժամանակ շնչասպառ չեղա ես, ինչպե՛ս չմեռա... Ասպրամ իշխանուհին, Սեդա՛... թագավորի գրկում... Այո՛. իմ Աշոտը, իմ անսահման սիրո եւ երջանկության թագավորը գրկախառն Յլիկ Ամրամի կնոջ հետ... Ա՛խ, Սեդա՛, զգո՛ւմ ես արդյոք, թե ի՛նչ հարված էր սա ինձ համար... Ո՞ր շանթը, ո՞ր կայծակը կարող էր մարդկային սիրտն ավելի անողորմ կերպով հարվածել...» (նույն տեղում, էջ 93):

Մուրացանագետները՝ մասնավորապես Ս. Սարինյանը, Զ. Ավետիսյանը եւ Վ. Սաֆարյանը, նկատել են, որ իր կնոջ՝ Ոսկեհատի դավաճանության եւ անպատասխան սիրուց տառապող Մուրացանը շատ հաճախ հենց ի՛ր անձնական ապրումներն է շարադրել Սահականուշի խոսքերում: Համեմատենք Սահականուշի վերոբերյալ խոսքերը Մուրացանի՝ 1891 թ. ապրիլի 18-ին կնոջը գրած պատասխան նամակի տողերի հետ, որոնք նույնպես շարադրված են աստիճանավորման միջոցով եւ ավարտվում են վիրավոր հոգուն հասցված ցավի եւ կայծակի հարվածի համեմատությամբ. «Կարդացի եւ սարսուցա: Ոչ մի շանթ, ոչ մի կայծակ չէր կարող հարվածել հինավուրց կաղնին այնպես անողորմ, ինչպես քո հեռագիրը»: (Մ., հտ. 7, էջ 372): Հետաքրքիր է նաեւ, որ վիպասանը, այնուամենայնիվ, շարունակում է սիրել Ոսկեհատին, նույնիսկ արդարանալ՝ նրա դավաճանական արարքը հավանաբար խիստ խոսքերով դատապարտելու համար. «Երեկ մի նամակ եմ գրել քեզ, որի բովանդակությունից շատ քիչ բան եմ հիշում. բայց այսքանը գիտեմ, որ խիստ հուզված դրության մեջ եմ եղել եւ քեզ վրդովելու համար բավական անզգույշ... Քո մի ավուր ուրախության համար ես պատրաստ եմ ամեն տեսակ վշտեր տարիներով տանելու՝ միայն թե այդ վշտերի մեջ քեզնից չսիրված լինելու հզոր վիշտը չլիներ... այդ կետն է ահա մոլորեցրել իմ առողջ դատողությունը, ես զղջում եմ»:

<sup>12</sup> Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ակնարկներ հայոց լեզվի ոճագիտության, Եր., 1984, էջ 223:

(նույն տեղում, էջ 371–372): Ուշադրության արժանի է «...քեզնից չսիրված լինելու հզոր վիշտը չլիներ...» արտահայտության ստորոգյալի բացական ժամանակաձևը. ոչ թե չլինի, այլ չլինեա: Այսինքն՝ միանշանակ է, որ կինը խոստովանել է նաեւ, որ չի սիրում ամուսնուն: Բայց նույնիսկ այդ խոստովանանքից հետո Մուրացանը զղջում է իր գրած խիստ խոսքերի համար... Հոգեբանական այս բարդույթը նա վերարտադրել է Սահականուշի կերպարում: Աշոտ Երկաթի դավաճանությունից խոցված թագուհին Սեւանա կղզում ասում է նրան. «...ես եկա Կաքավաբերդ: Բայց քո սառն ընդունելությունը ինձ վշտացրեց... Եւ դրա հետեւանքն եղավ այն, որ ես քո սիրտը ցավեցնել ուզելով՝ պատմեցի, թե ինչպէս մեր բոլոր աշխարհը գիտակ է քո հանցավոր սիրուն, թե զորքն ու ժողովուրդը գրգռված են քո դեմ, ...թե հոգեւորականությունը դատապարտում է քո վարմունքը... Ավա՛ղ, ես կարծում էի, թե այս հայտնություններով պիտի զգաստացնեմ քեզ... բայց չարաչար սխալվեցա: Խոստովանում եմ՝ ես գործեցի իբրեւ թույլ կին, իբրեւ սիրող սրտի տեր: ... Ես ճանաչեցի իմ սխալը. տեսա իմ անխորհուրդ վարմանց հետեւանքը եւ չարաչար զղջացի...» (Մ., հտ. 4, 305–306): Հեղինակի եւ Սահականուշի կերպարների ընդհանրության մանրամասն հիմնավորումը տրված է Զ. Ավետիսյանի նշված աշխատությունում (161–69), որտեղ իր դիպուկությամբ առանձնանում է հատկապես հետեւյալ ձեւակերպումը՝ «Մուրացանը Ֆլոբերի նման կարող էր ասել՝ Սիրանուշը— դա ես եմ»<sup>13</sup>:

Վիպասանի անձնական ողբերգությունների որոշ արձագանքներ նկատելի են նաեւ Յլիկ Ամրամի կերպարում, որը եւս անպատասխան սիրո եւ դավաճանության զոհ է: Սակայն, ի տարբերություն թագուհու, նրա տառապանքի դրսեւորումներն ավելի առարկայական են: Նա ոչ միայն նախատում, այլեւ զնդան է նետում դավաճան սիրեցյալին եւ ապստամբում է թագավորի դեմ: Մարտադաշտում կատարած քաջագործությունների համար Յլիկ մականունն ստացած այս անվեհեր ռազմիկը անսահման ջերմությամբ սիրել ու երկրպագել է իր կնոջը: Նույնիսկ դաժան պատիժների ենթարկելիս հույս է ունեցել դրանով վերադարձնել նրան ու վերագտնել ընտանեկան երջանկությունը: Որոշ ժամանակ անց նույնիսկ որոշել է ներել եւ ազատել նրան պատժից, բայց Ասպրամն արդեն ինքնասպան էր եղել: Այս մասին Ամրամը պատմում է Մարգպետունուն

<sup>13</sup> Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հայ պատմավեպի պոետիկան, Ե., 1986, էջ 165:

իրենց երկրորդ հանդիպման ժամանակ, երբ պատրաստվում էր իր կալվածքներն օտարի հետ փոխանակել եւ հեռանալ այն ամրոցից, որտեղ պատահել էր այդ ողբերգությունը: «Ինչո՞ւ համար եմ ուշանում, ազատենք վերջապես թշվառին», մտածեցի ինքս ինձ եւ վեր թռա տեղից: ...Շտապ-շտապ դիմեցի դեպի աշտարակը... ներս մտա եւ ի՞նչ տեսա, Աստված իմ... Իմ կիներ, իմ սիրած Ասպրամը կախված առաստաղից... Այդ տեսարանը զարհուրեցրեց ինձ, երկինքը կարծես փլավ իմ գլխին, եւ դժոխոց ոգիները պատեցին իմ շուրջը իրենց արհավիրներով... Մի վայրկյան միայն տեսա ես զարհուրելի պատկերը, մռնչացի ինչպես անապատի առյուծը, որ գոռում է հսկայի հարվածն առնելուց. իմ ձայնը որոտաց դղյակի կամարներում, մարդիկ իրար անցան, իսկ ես հափշտակեցի նրան, սեղմեցի կրծքիս եւ խեղագարի նման դուրս փախա աշտարակից... Մի վայրկյան ինձ այնպես թվաց, թե նա կենդանի է. թե շուտով պիտի խոսե իմ ականջին. թե յուր լուսավիր աչքերը պիտի բանա... Ավա՛ղ, այդ միայն ցնորք էր...» (Մ., հտ. 4, էջ 426–427):

Դարձյալ նկատելի են նույն հոգեվիճակն ապրող հերոսների խոսքի ոճավորման ընդհանրությունները՝ հոգետորական, ընդհատվող արտահայտություններ, հուզական բացականչություններ (Աստված իմ..., Ավա՛ղ...), որոնց հաջորդում են արդեն գնալով հոգեկան տառապանքը ավելի խորացնող աստիճանավորումով նախադասություններ: Սակայն վեպում հանդիպող աստիճանավորումները հիմնականում ամփոփված են նման իրադրությունների պատկերման համար առավել կիրառելի արտահայտչամիջոցի՝ հակադրության կազմում՝ արտահայտված հակադարձ հիմունքի կամ զիջման պարագա պարունակող ստորադասական նախադասություններով: Դրանք եւ հերոսների հոգեկերտման, եւ գեղարվեստական խոսքի կատարելության ինքնատիպ գեղաքանդակներ են: Վիրավոր հոգու գալարումների պատկերավոր նկարագիրներ կան նաեւ Ամրամի եւ Մարզպետունու առաջին հանդիպման զրույցի տողերում, երբ սեպուհին հայրենակործան ապստամբությունից հետ կանգնեցնելու համար Գեւորգ իշխանն ասում է. «Բայց եթե կարողանայիր մի վայրկյան սառն ուղեղով դատել, եթե երիտասարդական անփորձ եռանդը տեղի տար խոհեմության եւ իմաստության... վրեժխնդրության փոխարեն վառվեր քո սիրտը հայրենիքի սիրով... այն ժամանակ հավատացած եմ, չէիր կամենալ մի կնոջ պատճառով հայրենյաց դավաճանի անունը վաստակել» (Մ., հտ. 4, էջ 163): Այս ոչ նրբանկատ խոսքերը ավելի են բորբոքում առանց

այդ էլ հոգեկան գալարումներից տառապող սեպուհի զայրույթը: Նրա պոռթկուն պատասխանը դարձյալ աստիճանավորման ու հակադրության միասնական կիրառությունը ձեւավորված մի սքանչելի գեղապատկեր է:

«Մի կնոջ պատճառով, ասացիր... Օհ, ինչպե՞ս կկամենայի, որ մենք մի անծանոթ դաշտի վրա լինեինք, եւ ես այդ խոսքը լսեի քեզանից այնտեղ եւ ոչ թե իմ վրանում... Հավատա՛ ինձ, Մարգարետունի՛ իշխան, որքան էլ դու հզոր, որքան էլ քաջամարտիկ, բայց ես իմ սրով կպատռեի քո կուրծքը, եթե նա մինչեւ անգամ ծածկված լիներ պողպատե լանջապանով... Դու կարողանում ես ասել մի կին՝ այն արարածին, որ իմ տան թագուհին, իմ սրտի աստվածուհին էր մինչեւ այսօր...» (նույն տեղում, էջ 164):

Մարգարետունին ճարահատյալ որոշում է մի վերջին փորձով մեղմել Ամրամի զայրույթը եւ հորդորում է հետեւել Սահակ Սեւադայի օրինակին, որը, չնայած Աշոտ երկաթի հրամանով կուրացվել էր, այնուամենայնիվ, հանուն հայրենիքի փրկության՝ իր մեջ ուժ էր գտել իջեցնելու ապստամբության դրոշմը: Բայց այդպիսի համեմատությունն անընդունելի է այն մարդու համար, որի ոչ թե աչքերը, այլ սիրտն է կուրացել: Թեեւ Յլիկ Ամրամի պատասխանը կառուցված է հրամայական եղանակի բայաձեւերի աստիճանավորումով, բայց կորցրածը հետ բերելու անհուսական ճիշդ է, ասես աշխարհին ուղղված աղերսի ու բողոքի աղաղակ, որին ոչ ոք չի արձագանքում. «Ո՛հ, ի՞նչ անեմ. ինչպե՞ս հավատացնեմ քեզ, թե որքան տարբեր է իմ վիշտը Սեւադայի վշտից... հանեցե՛ք եւ իմ զույգ աչքերը, առե՛ք ինձանից իմ իշխանությունը, իմ հարստությունը, իմ կալվածքները, բոլոր անձնական բարիքները, բայց վերադարձրե՛ք ինձ ա՛յն, ինչ որ Աշոտը խլեց ինձանից. վերադարձրե՛ք ինձ իմ պատիվը, իմ Ասպրամը...» (Մ., հտ. 4, էջ 170):

Մինչեւ Յլիկ Ամրամի բանակատեղին այցելելը Մարգարետունին եղել էր արքայի դեմ ապստամբության գլխավոր կազմակերպչի՝ Սահակ Սեւադայի ամրոցում, ականատես եղել նրա անմխիթար վիճակին, լսել Աշոտ երկաթի հասցեին ուղղված նրա ցասման ու վրիժառության խոսքերը, որոնցում նույնպես նկատելի է հեղինակի՝ հատկապես աստիճանավորման միջոցով կերպարների հոգեկերտման հմտությունը: «Տե՛ր Մարգարետունի... երբ դու հեռանաս, եւ ես մնամ միայնակ, երբ այս ահագին սրահի մեջ չղջիկները գան ինձ ընկերանալու, երբ առավոտյան արեւը բերե ինձ նույն խավարը՝ ինչ որ բերել էր գիշերը... Երբ լսեմ իմ թշվառ հարսի տխուր երգերը կամ կույր ամուսնու սեւ բախտը լացող նրա ողբե-

րը... Երբ Գրիգորի որդին՝ փոքրիկ Սեւադան, գա հարյուրերորդ անգամ ինձ հարցնելու, թե՝ «Պապիկ, դու ծերացար, Աստված քեզ կուրացրեց. իսկ իմ հայրը ինչո՞ւ համար է կույր...», .... երբ այս բոլորը գան եւ աղմկեն ուղեղս, խռովեն հոգիս, երբ սիրտս անընդհատ գոռա՝ «վրեժ, վրեժ անգգամին...», ի՞նչ անեմ ես այն ժամանակ...» (նույն տեղում, էջ 141):

Իհարկե, նման հոգեցունց պատկերներով կարծես գաղափարախոս Մուրացանին հաջողվում է ապացուցել, որ բոլորի ողբերգության միակ մեղավորը Աշոտ Երկաթն է, բայց արդյո՞ք միակ: Այս հարցին պատասխանելուց առաջ նախ պետք է պատասխանել հետեւյալ հարցերին: Ինչո՞ւ են Սեւադան եւ Ամրամը ապստամբել արքայի դեմ, ինչո՞ւ է անպատասխան սիրուց ու դավաճանությունից տառապում թագուհին: Ըստ գաղափարախոս Մուրացանի՝ որովհետեւ արքան հավատարիմ ամուսին չէ եւ սիրել է ու շարունակում է սիրել ոչ թե իր կնոջը, այլ Ասպրամին: Այն դեպքում ամենակարեւոր հարցը՝ իսկ ինչո՞ւ է Սահականուշի հետ ամուսնացել: Պատասխանն ակնհայտ է ու միանշանակ՝ որովհետեւ Սահակ Սեւադան, չնայած գիտեր Աշոտի եւ Ասպրամի սիրո մասին, այնուամենայնիվ, փառասիրությունից դրդված եւ օգտվելով այն հանգամանքից, որ Աշոտը այդ օրերին զբաղված է եղել երկրի ամրապնդման հրատապ գործերով, խորամանկորեն նախ համոզել է Ասպրամի մորը, որ դստերը կնություն տա Յլիկ Ամրամին, ապա այնպես է արել, որ Աշոտը, պետության շահերից ելնելով, ստիպված ամուսնանա Սահականուշի հետ (տե՛ս նույն հատորը, էջ 53–54): Քանի որ Մուրացանի համար կատարյալ հերոսը բարոյական եւ հայրենասեր անհատն է, փորձենք տեսնել, թե այս հատկանիշները որքանով են բնորոշ Սեւադայի կերպարին: Արքային բարոյական դաս տալու կամ պատժելու համար երկրի պետականությունը վտանգող Սեւադան հենց ինքն է առաջին եւ շատերի ողբերգության գլխավոր պատճառ դարձած անբարո արարքի հեղինակը, որովհետեւ իր փառասիրական ծրագրի իրականացման համար կործանել է Աշոտի եւ Ասպրամի սերը: Նրա հայրենասիրությունը եւս թերի է: Թերի է, որովհետեւ նա պարծենում է, թե Հայաստանից արքայի բացակայության ժամանակ նրան պատկանող Կայեան բերդը գրավելուց հետո «ջարդել է» արքային հավատարիմ մի քանի հարյուր գյուղացիների, որոնք միացել էին արքայի զինվորներին, եւ... հնձել տվել ու այրել նրանց արտերը... (տե՛ս նույն տեղում, էջ 132): Որքան էլ գաղափարախոս Մուրացանը ջանում է Սեւադային դասել դրական հերոսների շարքը, միեւնույն է, մինչեւ Մարգարետունու հետ զրույցի

վերջնամասը չի հաջողվում: Ընթերցողը գուցե խղճում է կույր ապստամբին, բայց չի համակրում: Վիպասանին հաջողվել է գրեթե մոռացության մատնել Սեւադայի բոլոր թերությունները, երբ նա, ի վերջո տեղի տալով Մարգպետունու հորդորներին ու խնդրանքներին, ասում է. «Դու ինձ համոզեցիր, տե՛ր Մարգպետունի. իմ մեջ շարժեցիր նախանձավարության զգացում. ես չեմ կամենում, որ դու հայրենասիրությամբ գերազանցես ինձ: Թող այդպես լինի. ես թողնում եմ վրեժխնդրությունը» (նույն տեղում, էջ 142): Այս խոսքերի շնորհիվ ասես միանգամից վեհանում, ամբողջանում է Սեւադայի հոգեբանորեն բարդ, հակասական եւ իհարկե ինքնատիպ կերպարը: Այս դրվագը՝ որպես անձնականը հայրենիքի շահերին ստորադասելու փայլուն օրինակ, նաեւ վեպի գաղափարական բովանդակության բարձրակետերից է:

Սակայն հարկ ենք համարում նշել, որ այս տողերից առաջ Սեւադայի ապստամբության պատճառները առավել համոզիչ դարձնելու համար Մուրացանը հորինել է մեր կարծիքով անիմաստ, վեպի հագեբանական ու քերթողական հյուսվածքին անհարիր մի պատմություն: Խոսքն Աշոտի՝ աներոջը գրած նամակի մասին է, որով Սահականուշին ամբաստանում է անբարոյականության եւ Վասակ իշխանի հետ սիրային կապերի համար (տե՛ս նույն տեղում, էջ 130): Նամակի բովանդակությունը սաստիկ վրդովում է նույնիսկ արքայի հավատարիմ զինակից Մարգպետունուն: «... Այն թագավորը, որ մինչեւ այդ այնքան բարձր էր եւ վեհ էր երեւում յուր աչքում, կարծես մի ակնթարթում գլորվեցավ, ընկավ այդ բարձրությունից. նրա վեհությունը ոչնչացավ. նա երեւաց այժմ իրան իբրեւ մի հասարակ, սինլքոր արարած, որին կրքերը շրջում, տարուբերում են ամեն կողմ, որ գերի է եւ ստրուկ է դարձած մարդկային արժանիքը անասնական բնագդին ստորադասող զգացմունքներին...» (նույն տեղում): Չնայած այս տողերն իջնող աստիճանավորման բավականին հաջող կառույց են, սակայն զուրկ են Մուրացանի գրչին բնորոշ գեղարվեստական արժեքից: Հայտնի է, որ «Գեւորգ Մարգպետունի» վեպը Մուրացանը հատվածաբար տպագրել է «Արձագանք» թերթի համարներում, որից հետո միայն սկսել է խմբագրել, որպեսզի առանձին գրքով տպագրի: Բայց հրդեհի ժամանակ այլ ձեռագրերի հետ ոչնչացել է նաեւ վեպի խմբագրված տարբերակը: Հավանական է, որ խմբագրելիս Մուրացանը վերանայած կամ ամբողջովին հանած կլինեք այդ նամակի հատվածը, որովհետեւ Աշոտ Երկաթի ամբողջական կերպարին տրամաբանական չէ

այդպիսի նսեմ արարք վերագրելը: Հակառակ դեպքում որ՞ն է արքայի խորունկ վշտի այդքան պատկերավոր նկարագրությունների իմաստը, ինչո՞ւ էր նա գահից հրաժարվել եւ կղզում ներանձնացած՝ մահ երագում: Ինչո՞ւ է վիպասանը Աշոտի առողջական վիճակի անակնկալ վատթարացման եւ մահվան պատճառը համարում ոչ այնքան ծովամարտում ստացած վերքը, որքան հատկապես Ասպրամի մահվան լուրը: Ինչո՞ւ է այդ «սինթոր արարածի» շուրթերին դրել թագուհուն ուղղված գնահատանքի այսպիսի խոսքեր. «Ո՛հ, դրանց պատճառով չհեռացա, ոչ էլ հուսահատությունն ինձ հալածեց: Այլ խիղճը, իմ ներքին մարդը... Ինձ հալածեցին, մանավանդ, քո տխուր աչքերը, վշտալի հայացքը, դալկահար դեմքը... ամեն մի քեզ տեսնելիս սիրտս տակնուվրա էր լինում, ամոթն ու խիղճը տանջում էին ինձ չարաչար... Բայց դու հետեւեցիր ինձ իբրեւ ամուսնասեր կին եւ ապացուցեցիր հարյուրերորդ անգամ, թե ես արժանի չէի քո սիրուն» (նույն տեղում, էջ 313): Ի տարբերություն Սեւադայի՝ Աշոտը փառասեր չէ, որեւէ մեկին դժբախտացնելու հատուկ սադրանք չի ծրագրել ու իրականացրել, ընդհակառակը՝ Սեւադայի սադրանքի զոհերից մեկն է: Այո՛, Աշոտը եւս մեղքի իր բաժինն ունի, իր պատճառով դժբախտացել են թագուհին ու Ամրամը, իր դեմ ապստամբած աներոջն ու աներորդուն դաժանորեն կուրացրել է... Բայց նա գիտակցում է իր մեղքերը եւ այնքան խորն է հոգեպես տառապում, որ հրաժարվելով գահից՝ տենչում է նաեւ օր առաջ հրաժեշտ տալ կյանքին... Աշոտ Երկաթ անհատի հիրավի հոգեբանորեն կատարյալ կերպարի ամբողջականությունը փաստելու համար բավարարվենք նրա խոսքերից եւս երեք քաղվածք կատարելով: Նախ հիշենք, թե ինչպես է նա արձագանքում Սահականույշի այն հորդորին, որ մոռանա անցյալը եւ աշխատի «ներկա վիճակը բարվոքել»: «Անցյալը մոռանա՛մ... մի՞թե կարելի է, մի՞թե հնարավոր է այդ, – բացականչեց թագավորը:– Երկնքի աստղերը կկողոպտեի՝ վարձատրելու համար այն մարդուն, որ կկարողանար մոռացնել տալ ինձ իմ անցյալը... որ յուր դեղերով կամ կախարդական հմայությունմբ հնար կգտներ իմ հիշողությունները բթացնելու... Օ՛հ, ինչպես երջանիկ կլինեի, եթե կարողանայի չհիշել այլեւս այն, ինչ որ կատարվել է... Այն, որի հիշատակը բազմազխյան վիշապի պես կրծում, կեղեքում է իմ խիղճը... Կարո՞ղ եմ մի՞թե մոռանալ, որ ես Սեւադայի, իմ բարյացապարտ ազգակցի տունն ալերեցի՝ հորն ու որդուն միասին կուրացնելով... Կարո՞ղ եմ մոռանալ, որ ես Ամրամի, իմ հավատարիմ զինակցի ընտանիքը կործանեցի, նրա խաղաղության օթեւանը

դժոխքի փոխարկելով... Կարո՞ղ եմ մոռանալ, որ ես քո կյանքը թունավորեցի՝ կաթոգին սերդ անարգելով, երջանկությունդ կապտելով... (նույն տեղում, էջ 312): Հանգիստ լիներ խիղճս, արդար լինեին իմ գործերը, այն ժամանակ թեկուզ բոլոր աշխարհը կանգներ իմ դեմ, ես չէի ընկճվիլ. ոչ էլ հուսահատությունը կարող էր իմ հոգին հաղթահարել... Բայց խղճի անողոք խայթերին ես դիմադրել չկարողացա» (նույն տեղում, 313): Ցավի ու զղջման ավելի ռոմանտիկ, բայց ավելի տեսանելի ու տարողունակ նրբակերտում դժվար է պատկերացնել: Թեպետ այս մտքերն արտահայտված են թագուհու հետ երկխոսության ժամանակ, բայց ոճական առումով ավելի բնորոշ են պատկեր-մենախոսությանը, նույնիսկ պատկեր-խոհին: Ամբողջության մեջ սա մի հրաշալի փոխաբերությամբ է՝ նույնպես հագեցած լեզվի եւ պատկերավորման տարբեր արտահայտչամիջոցներով, որոնցից ամենաակնառուն հոետորական հարցերն են եւ գրեթե բոլոր նախադասություններում առկա աստիճանավորումը: Կառույցի շքեղությունը նպաստել են խոսույն մակդիրները (բազմազլխյան վիշապ, խաղաղության օթեւան, կաթոգին սեր, խղճի անողոք խայթեր), համեմատությունը (...վիշապի պես կրծում, կեղեքում է իմ խիղճը), չափազանցությունը (երկնքի աստղերը կկողոպտեի...), (...թեկուզ բոլոր աշխարհը կանգներ իմ դեմ, ես չէի ընկճվիլ...):

Վերջին քաղվածքները նույնպես թագուհու եւ արքայի երկխոսությանից են, բայց հայտնի ծովամարտից առաջ, երբ Սահականույշը խնդրում է հետ կանգնել ընդամենը հարյուր զինվորներով Բեշիրի տասը հազարանոց բանակի դեմ մարտի նետվելու խելահեղ ծրագրից:

«— Երկու զորավոր պատճառներ ստիպում են ինձ այդ քայլն անելու,— պատասխանեց թագավորը, — առաջինը՝ իմ արքայական պատվասիրությունը: Այս գոռոզ հագարացին համարձակվեցավ պատգամավոր ուղարկել ինձ եւ Սեւանը պահանջել, անվանելով այն ամիրապետի կալված... Այդ թշվառականը, որ ջարդ է կերել Մարզպետունու քսան զինվորներից, այնքան անգոր է համարում հայոց թագավորին, որ համարձակվում է այսօրինակ նվաստացուցիչ առաջարկություն անել նրան: Այժմ իմ պարտականությունն է հասկացնել նրան, որ առյուծը գառագղի<sup>14</sup> մեջ էլ առյուծ-

<sup>14</sup> Գառագղի կամ գառագիղ — 1. գազաններ պահելու երկաթե վանդակ, գազանների արգելարան՝ արգելոց, 2. ծուղակ, որոգայթ: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Ե., 1969, էջ 372:

ծի սիրտ է կրում... Երկրորդ պատճառը, որ առավել զորավոր է, այն է, որ կյանքը կորցրել է յուր արժեքը իմ աչքում. նա դարձել է ինձ համար տանջարան... Այժմ ահա՛ հասել է ժամը, եւ ես պիտի օգուտ քաղեմ նրանից... ես վայրկյան առաջ կամենում եմ ազատվել խղճի խայթից, հոգվո անվերջ տանջանքներից ... Ես, իհարկե, չեմ մտածում իմ հիշատակի, այլ հետնորդների մասին. իմ մահվամբ ես մի խրախուսական օրինակ կթողնեմ նրանց համար...» (Մ., հտ. 4, էջ 344): Իսկ երբ թագուհին հակադարձում է, թե «... բայց քեզ հետ միասին տանել մահվան դեմ ուրիշ հարյուր հոգի, անիրավացի է...» (նույն տեղում էջ 344), արքան պատասխանում է. «... ես արդեն չափել եմ, կշռել իմ քայլը եւ գիտեմ, թե նա ո՛ւմ կարող է վնասել: Այս հարձակումը գուցե մի զոհ ունենա. բայց այդ զոհը կլինի նա, ով հետամուտ է մահվան. մնացյալները հաղթանակով կվերադառնան (նույն տեղում, էջ 345):

Ճիշտ է՝ այստեղ էլ աստիճանավորումը հերոսի ներաշխարհը պատկերելու էական բաժին ունի, սակայն այս հատվածի հմայքը եւ Աշոտ Երկաթի կերպարի վերջնական ձևավորումը պարփակված են հատկապես երկու արտահայտությունների մեջ: Առաջինը պատվախնդիր արքայի եւ անկոտորում զորավարի որոշումն է՝ արտահայտված հակիրճ, բայց տարողունակ փոխաբերությամբ՝ «...առյուծը գառագղի մեջ էլ առյուծի սիրտ է կրում»: Երկրորդը, որը արտահայտված է հակադրությամբ, հայրենասեր եւ իմաստուն արքայի՝ ոչ միայն ազգի ներկային, այլեւ ապագային ծառայելու ցանկությունն է՝ «Ես, իհարկե, չեմ մտածում իմ հիշատակի, այլ հետնորդների մասին. իմ մահվամբ ես մի խրախուսական օրինակ կթողնեմ նրանց համար...»:

Ամփոփելով՝ մեկ անգամ եւս հիշեցնենք, որ մեր նպատակը ոչ թե աստիճանավորումը լեզվի եւ պատկերավորման մյուս արտահայտչամիջոցներին հակադրելը կամ գեղարվեստական խոսքում նրա դերի գերազնահատումն էր, այլ ցույց տալը, թե «Գեւորգ Մարզպետունի» վեպում կերպարների տիպականացման գործում որքան կարեւոր, երբեմն էլ նույնիսկ առանցքային է նաեւ աստիճանավորման դերը: Այդ են վկայում հերոսների խոսքերից մեր կատարած քաղվածքները, որոնք խարսխված են հատկապես աստիճանավորման հմուտ կիրառությունների վրա: Եթե այդ հատվածներից պայմանականորեն հանենք աստիճանավորումը (մի բան, որը անհնար է), կառույցի ամբողջականությունը պարզապես կփլուզվի՝ թուլանալով, գրեթե կորցնելով իր գաղափարական ներուժն ու գեղար-

*վեստական հմայքը: Մեջբերված եւ նմանատիպ շատ դրվագներ ոչ միայն Մուրացան գեղագետի, այլեւ իր հերոսների ներաշխարհի բազմաշերտ ծալքերը վարպետորեն նրբակերտող հոգեբանի մեծության ամենախոսուն վկայություններն են:*

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մուրացան, Գեորգ Մարգպետունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Սահականույշ, Սեւադա, Ամրամ, Աշոտ Երկաթ, աշխարհայացք, գաղափարախոս, պատմավեպ, աստիճանավորում, կերպար, հոգեբանություն, գեղարվեստական պատկեր, պատկերավորման արտահայտչամիջոցներ, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

## РЕЗЮМЕ

В статье рассматривается роль градации в изображении внутреннего мира героев и типизации персонажей в историческом романе Мурацана «Геворг Марзпетуни». Автор статьи, характеризуя мировоззрение Мурацана, основывается на мнении предыдущих исследователей о том, что для писателя Армянская Апостольская Церковь и морально крепкая семья являются важнейшей основой спасения нации. Отмечается, что, в отличие от других функциональных стилей, в художественной речи градация является не только синтаксическим оборотом, усиливающим или ослабляющим высказывание, но и важнейшим выразительным средством художественного образа.

На основе фрагментов из романа показано, что при изображении различных душевных состояний героев автор выражает градацию через различные грамматические структуры. Например, в эпизодах, посвященных воспоминаниям королевы Саакануш о счастливых днях, преобладают глаголы в желательном наклонении: хотела, мечтала, жаждала. Грустные размышления героев переданы через предложения с условными или противительными придаточными частями. В то же время их душевное волнение и гнев выражены через прерывистые, незаконченные предложения, риторические вопросы, восклицания и иногда формы императива.

Однако стиль Мурацана не включает в себя эпизоды, построенные исключительно на градации. Напротив, она тонко вплетена в образы, насыщенные эпитетами, сравнениями, гиперболами и другими выразительными средствами, являющимися самыми великолепными проявлениями искусства речи Мурацана.

## SUMMARY

The article examines the role of gradation in illustrating the inner world of the characters and in the typification of figures in Muratsan's historical novel "Gevorg Marzpetuni." The article's author, when characterizing Muratsan's viewpoint, bases his analysis on the perspective of previous researchers that the novelist saw the Armenian Apostolic Church and a morally strong family as the key foundations for the nation's salvation. It is noted that, unlike other functional styles, in artistic speech, gradation is not just a syntactic construction that enhances or weakens the statement but also one of the key expressive means in shaping the artistic image.

By using excerpts from the novel, it is demonstrated that when portraying the various emotional states of the characters, the author expresses gradation through different grammatical structures. For example, in the passages recalling the happy days of Queen Sahakanuysh, verbs in the subjunctive mood predominate: I wished, I dreamed, I longed for. The sad reflections of the characters are expressed through sentences containing conditional or adversative clauses. Meanwhile, their mental turmoil and anger are conveyed through interrupted, unfinished sentences, rhetorical questions, exclamations, and sometimes imperative verb forms.

However, Muratsan's artistic style does not consist of passages structured exclusively through gradation. Instead, they are subtly woven into images enriched with epithets, comparisons, hyperbole, and other expressive means representing the most magnificent manifestations of Muratsan's literary artistry.



ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Պատմական գիտ. թեկնածու

## ՎԱԶԳԵՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՅԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ (1958–1989)<sup>1</sup>

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Ս. Էջմիածնում գահակալեց հայ ժողովրդի եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (ՀԱԵ) համար բախտորոշ եւ պատմական կարեւոր իրադարձություններով լի ժամանակաշրջանում: Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո, երբ 1920–1930-ական թվականների աստվածամերժ ավերիչ շրջանից հետո Գեւորգ Զ. Զեորեքչյանին հաջողվեց պահել եւ պահպանել Մայր Աթոռն ու ՀԱԵ-ն, եւ հատկապես ԽՍՀՄ-ի առաջնորդ Ի. Ստալինի մահից հետո, 1955-ից սկսած Վազգեն Առաջինը գահակալեց համեմատաբար կայուն փուլում:

ՀԱԵ-ի հանդեպ ընդգծված թշնամական վերաբերմունքն այլեւս մնացել էր անցյալում, սակայն, այսուհանդերձ, ի հայտ էին եկել նոր մարտահրավերներ. հարկավոր էր լուծել բազմաթիվ խնդիրներ՝ հոգեւոր սպասավորների պատրաստումից մինչեւ պետության հետ արդեն նոր հարաբերակցության ձեւավորում եւ վարում, ու համայն աշխարհում ՀԱԵ-ի թեմերին աջակցելով՝ Սփյուռքի հետ լայն կապերի ամրապնդում:

Ժամանակի հեռավորությունից, մանավանդ խորհրդային իրականության եւ կոմկուսի ամենակարող իշխանության գործիքակազմին անձանոթ ընթերցողին հրապարակվող փաստաթղթերում հիշվող որոշումների կայացման եղանակներն առավել հասկանալի դարձնելու նպատակով ներկայացնենք որոշ պարզաբանումներ:

Փաստաթղթերի առանձին խումբ վերաբերում է հրատարակչական-տպագրական հարցերի. Ավետարանի, Վազգեն Առաջինի քարոզների ու ելույթների, արտասահմանյան այցերի արդյունքների հրատարակության թույլտվություն: Ինչպես հայտնի է, խորհրդային տարիներ

<sup>1</sup>\* Ստացվել է՝ 11.11.2024, գրախոսվել է՝ 22.11.2024:

Էլ. հասցե՝ avag.harutyunyan@yandex.com:

րին հրատարակչություն-տպագրությունը բացարձակապես պետական մենաշնորհ գործառույթ էր, եւ առանց որեւէ բացառության ցանկացած հրատարակություն պարտադիր պետք է ունենար պետական համապատասխան մարմինների թույլտվությունը: Սա պարտադիր էր անգամ խորհրդային-կուսակցական հրատարակությունների պարագային: Ինչ վերաբերում է եկեղեցակրոնական նյութերին, ապա հաշվի առնելով գաղափարաքաղաքական ուղղվածությունը՝ հրատարակության թույլտվություն պետք է տար կոմկուսի ղեկավար մարմինը: Այս սկզբունքը վերաբերում էր նաեւ Ռուս ուղղափառ եւ մյուս Եկեղեցիներին: Ի վերջո, պետք է հաշվի առնել, որ ԽՍՀՄ-ում միակ ոչ խորհրդային-կոմունիստական հրատարակությունները հենց եկեղեցակրոնականներն էին:

Փաստաթղթերի մյուս խումբը վերաբերում է Վազգեն Առաջինի ծննդյան, ընտրության եւ գահակալության հոբելյաններին, մյուսոնօրհնության արարողությանը, եպիսկոպոսական ժողովների գումարման թույլտվության գրություններին եւ որոշումներին: Դրանցում նախօրոք հստակ նշվում էին օրակարգերը, օտարերկրյա մասնակիցների թիվը, նպատակը: Հաշվի առնելով այդ ամենի կարեւորությունը՝ Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը միշտ տեղեկացնում եւ հայցում էր ԽՄԿԿ կենտկոմի թույլտվությունը: Նման միջոցառումների անցկացումը եւ հավուր պատշաճի նշումը պետության համար ուներ արտաքին քաղաքական նշանակություն, նաեւ կարեւորվում էր ՀՅԴ-ի դեմ գաղափարական պայքարի տեսանկյունից: Թույլտվությունների պարագայում պետք է նկատի ունենալ, որ նշյալները խորհրդային հասարակարգում միակ ոչ կոմունիստական միջոցառումներն էին:

Հաջորդ խումբն են կազմում Վազգեն Առաջինի արտասահմանյան այցերի եւ նրա հրավերով Ս. Էջմիածին արտասահմանյան հյուրերի թույլտվության փաստաթղթերը: Հարկ է հաշվի առնել մի քանի հանգամանք՝ սա ամենեւին Վեհափառի իրավունքների սահմանափակում չէր. Վազգեն Առաջինը ԽՍՀՄ-ի քաղաքացի էր, եւ ինչպես խորհրդային բոլոր քաղաքացիները՝ շարքայինից մինչեւ կոմկուսի կենտկոմի քարտուղար, արտասահման մեկնելու համար պետք է հատուկ թույլտվություն ունենար: Թույլտվությունը հատկապես վերաբերում էր կապիտալիստական երկրներ այցերին: Ինչ վերաբերում է արտասահմանյան հյուրերի այցելություններ, ապա նրանց գերակշիռ մասը կրկին կապիտալիստական երկր-

ներից էր, երկրներ, որոնց հետ ԽՍՀՄ-ի հարաբերություններն ամենեւին բարեկամական չէին:

Վերջապես, փաստաթղթերի առանձին խումբ են կազմում Վազգեն Առաջինի պարգևատրման (պատվոգիր, շքանշան) վերաբերյալ կոմկուսի կենտկոմի, ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահության որոշումները: Հատկանշական է, որ այդ ամենը Վազգեն Ա. Հայրապետին հանձնվում էր հանդիսավոր պայմաններում, հանրապետական բարձրագույն մարմինների նստավայրում՝ հոգեւոր դասի եւ պետական բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությամբ:

Փաստաթղթերում շեշտվում էր Վազգեն Առաջինի «հայրենասիրական գործունեությունը եւ ամբողջ աշխարհում խաղաղության եւ ժողովուրդների բարեկամության պայքարում ակտիվ մասնակցությունը», շեշտելով, որ հայրապետը «աջակցել է խորհրդային պետության արտաքին քաղաքական ուղեգծին, քարոզել մեր երկրի նվաճումները, արժանի հակահարված տվել ԽՍՀՄ-ում խղճի ազատության մասին թշնամական մոլորություններին, աջակցել իմպերիալիզմի եւ գաղութարարության դեմ ժողովուրդների պայքարին»: Ավելին. «Արտասահմանյան հայերի շրջանում հայրենասիրական զգացումների ամրապնդման եւ ուժեղացման, նրանց հայրենիքի՝ խորհրդային Հայաստանի եւ խորհրդային Միության շուրջ համախմբման գծով այնաժամալ աշխատանք է վարում: Նա ուղղորդում է Հայ Եկեղեցու ջանքերն իր Հայրենիք՝ խորհրդային Հայաստան հայերի հայրենադարձության գծով մեր կառավարության քաղաքականության ուղղությամբ»:

Ի վերջո, եւս մեկ նորահայտ ուշագրավ փաստաթուղթ լույս է սփռում 1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո ինչպես խորհրդային Հայաստանին օգնության, այնպես եւ Սաուդյան Արաբիա-ԽՍՀՄ դիվանագիտական հարաբերությունների վերսկսման հարցում Վազգեն Առաջինի վճռորոշ դերակատարության մասին:

Հարկ է շեշտել, որ Վազգեն Առաջինին բոլոր հարցերով ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Կրոնի գործերի խորհուրդը մշտապես աջակցում էր:

Հրապարակումը նպատակ ունի լրացուցիչ լույս սփռել Վազգեն Առաջինի 1958–1989 թթ. գործունեության, նաեւ ՀԱԵ-ի նկատմամբ խորհրդային պետության եւ իշխող կոմկուսի քաղաքականության վրա:

Նորահայտ փաստաթղթերը հրապարակվում են առաջին անգամ, գերակշիռ մասը թարգմանվել է ռուսերենից: Դրանք Հայաստանի կոմկուսի բարձրագույն մարմինների, նախարարների եւ Հայ Եկեղեցու գործերի խորհրդի փաստաթղթերն են: Մի զգալի խումբ ունի «Հատուկ թղթապանակ» կարգավիճակ, ինչպիսին տրվում էր կոմկուսի առավել գաղտնի ու կարեւոր քաղաքական որոշումներին: Բնականաբար, այդպիսիք կրում էին «հույժ գաղտնի», «հույժ կարեւորություն», «հույժ նշանակություն» նշագրումներ:

Փաստաթղթերը հրապարակվում են բնագրային հավատարմությամբ (պահպանվել են, մասնավորապես, «կաթողիկոս», «ամենայն», «առաջին» պաշտոնական գրեւածեւերը), ժամանակագրական հերթականությամբ:

#### ԹԻՎ 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ

1958 թ. մարտի 20

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ<sup>2</sup>

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

5. Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի առաջարկության մասին:

Ընդունել Վազգեն առաջին կաթողիկոսի քարոզներով կենսագրության ժողովածուի հրատարակության մասին Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի առաջարկությունը, 20–24 տպագիր մամուլ ծավալով<sup>3</sup>: Տպաքանակը տարածել գերազանցապես եկեղեցու արտասահմանյան կենտրոններում:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 1, թ. 6: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

<sup>2</sup> «Հատուկ թղթապանակ» կարգավիճակ տրվում էր կոմկուսի «Հույժ գաղտնի» որոշումներին:

<sup>3</sup> Տե՛ս Վազգեն Ա. Հայրապետ Հայոց, Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, Ս. էջ-միածին, 1958, 404 էջ+70 ներդիր:

## ԹԻՎ 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԸՆԿԵՐ Ս. Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ<sup>4</sup>

ԳԱՂՏՆԻ

Վազգեն Առաջին կաթողիկոսը 1958 թ. հոկտեմբերին հայ եկեղեցու եպիսկոպոսների ժողով<sup>5</sup> գումարելու թույլտվության առաջարկություն է ներկայացրել:

Ժողովին կմասնակցեն 28 եպիսկոպոս, այդ թվում՝ արտասահմանյան երկրից 21-ը:

Նրանցից զատ, պետք է հրավիրվեն հոգեւոր եւ աշխարհիկ նշանավոր անձի[ն]ք – արտասահմանում թեմերի առաջնորդներ 9 հոգի, ինչպես նաեւ՝ յուրաքանչյուր թեմական խորհրդից 2 ներկայացուցիչ:

Ժողովի նպատակն է.

1. Ապագա ազգային-եկեղեցական ժողովի հաստատման համար նոր եկեղեցական սահմանադրության քննարկում եւ երաշխավորում:

2. Կաթողիկոսի 50-ամյակի եւ օծման եռամյակի տոնակատարություն:

3. Հայ եկեղեցում պառակտման առթիվ միջոցների քննարկում եւ ընդունում:

4. Կիլիկիայի կաթողիկոսարանի նոր կանոնադրության մասին, եթե մինչ այդ Արաբական Միացյալ հանրապետությունը<sup>6</sup> ճանաչի իսպառ-քեպիսկոպոսին<sup>7</sup>:

5. Ընթացիկ ներեկեղեցական հարցեր:

Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհուրդը նպատակահարմար է գտնում 1958 թվականի հոկտեմբերին Կաթողիկոսին թույլատրել ժողովի գումարումը<sup>8</sup>:

<sup>4</sup> Թովմասյան Սուրեն Հակոբի (1909–1980) – 1953–1960 թթ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար, 1961–1964 թթ. – ԽՍՀՄ դեսպան Վիետնամում, 1965–1970 թթ. – Լիբիայում:

<sup>5</sup> Տե՛ս մանրամասն «Էջմիածին», 1958, թ. 10–11:

<sup>6</sup> Արաբական Միացյալ Հանրապետություն – 1958–1971 թթ., մինչեւ 1961 թ. ընդգրկել է եգիպտոսը եւ Սիրիան:

<sup>7</sup> Խաղ արքեպիսկոպոս Աջապահյան (1883–1968) – 1941–1945, 1952–1956 թթ. Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ:

<sup>8</sup> ՀԿԿ ԿԿ բյուրոն 1958 թ. մարտի 21-ի «Հատուկ թղթապանակ» որոշմամբ ընդունեց առաջարկը եւ դիմեց ԽՄԿԿ կենտկոմին թույլատրել: Տե՛ս ՀԱՆ, ֆ. 1, ց. 126, գ. 1, թ. 7:

Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի Նախագահ Ա. Քոչինյան<sup>9</sup>

1958 թ. մարտի 21

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 1, ք. 8: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

### ԹԻՎ 3

ԽՄԿԿ<sup>10</sup> ԿԵՆՏԿՈՄԻՆ

Արտասահմանի հայկական օջախներում ամերիկացիների ցուցումով դաշնակները էջմիածնից հայկական եկեղեցու արտասահմանյան թեմերի բաժանման լայն գործընթաց են ծավալել: Նրանց հաջողվել է Կիլիկիայի կաթողիկոսությունը պառակտել: էջմիածնի դեմ նման քայքայիչ աշխատանք նրանք վարում են Իրանում<sup>11</sup> եւ այլ երկրներում:

Արտասահմանյան մի շարք հայ եկեղեցական գործիչներ եւ անգամ թեմերի առաջնորդներ տատանվում են, հաճախ ենթարկվում դաշնակների ճնշմանը:

Որպեսզի կանխվի պառակտման հետագա խորացումը, եւ էջմիածնի շուրջ թեմերի համախմբման միջոցներ մշակվեն, Վազգեն Լ կաթողիկոսը որոշել է 1958 թ. հոկտեմբերին եպիսկոպոսների ժողով գումարել: Ժողովի տապալմանն ուղղված դաշնակների նոր սադրիչ գործողություններից խուսափելու համար Վազգեն Լ նախատեսում է եկեղեցական գործիչներին հրավիրել իր ծննդյան 50-ամյակի տոնակատարության պատրվակով:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը քննարկելով հարցը եզրակացրեց, որ ժողովը կարող է կարեւոր դեր խաղալ արտասահմանում հայկական եկեղեցու պառակտման հետագա խորացումը կանխելու եւ էջմիածնի շուրջ համախմբման գործում:

Ելնելով դրանից, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոն նպատակահարմար գտավ եպիսկոպոսների ժողովի գումարումը:

Խնդրում ենք թույլատրել Վազգեն Լ կաթողիկոսին 1958 թվականի հոկտեմբերին եպիսկոպոսների ժողովին 60 հոգի եկեղեցական եւ աշխարհիկ գործիչ հրավիրել:

<sup>9</sup> Քոչինյան Անտոն Երվանդի (1913–1990) – 1952–1966 թթ. Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ, 1966–1974 թթ.՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար:

<sup>10</sup> Խորհրդային Միության կոմունիստական կուսակցություն:

<sup>11</sup> Տես մանրամասն «էջմիածին», 1958, թ. 6, էջ 7–19, թ. 9, էջ 7–8:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ

1958 թ. ապրիլի 16

ՀԱԱ, ֆ. 1, ց. 38, գ. 50, թ. 70: Պատճեն: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

#### ԹԻՎ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ

ԳԱՂՏՆԻ

Ընթացիկ տարվա հոկտեմբերին լրանում է ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի ընտրության եւ գահակալության 10 տարին<sup>12</sup>: Էջմիածնի կաթողիկոսարանը մտադիր է արտասահմանյան հայկական գաղութներին, նաեւ մի շարք քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներին մեծ խումբ հյուրերի հրավիրմամբ տարեդարձը հանդիսավոր նշել:

Արտասահմանյան հայկական գաղութներին, ինչպես նաեւ արտասահմանյան կրոնական կենտրոններին հրավիրվելիք հյուրերի ցանկը կցվում է<sup>13</sup>:

Հայկական ԽՍՀ Մինիստրների հորհրդի Նախագահ Ա. Քոչինյան

1965 թ. փետրվարի 17

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 103: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

#### ԹԻՎ 5

ՑՈՒՑԱԿ

Էջմիածին ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի գահակալության 10-ամյա տարեդարձի հանդիսություններին արտասահմանյան երկրներից հրավիրվելիք հյուրերի

I. Արտասահմանյան հայկական գաղութներին

1. Անթիլիասի կաթողիկոսության պատվիրակություն (Լիբանան) – 4 հոգի,

<sup>12</sup> Տե՛ս մանրամասն «Էջմիածին», 1965, թ. 11–12, էջ 6–15, 19–35, 39–79:

<sup>13</sup> ՀԿԿ ԿԿ Բյուրոն 1965 թ. մարտի 16-ին ընդունեց առաջարկը եւ թույլատրեց 1965 թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 10-ը 15 օրով հրավիրել 75 հոգի: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 99:

2. Երուսաղեմի պատրիարքարանի պատվիրակություն (Հորդանան) – 4,
3. Ստամբուլի պատրիարքության պատվիրակություն (Թուրքիա) – 4,
4. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան ուղեկցողի հետ (ԱՄՀ<sup>14</sup>) – 2,
5. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան ուղեկցողի հետ (Ֆրանսիա) – 2,
6. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյան ուղեկցողների հետ (ԱՄՆ, արեւելյան թեմ) – 4,
7. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան ուղեկցողների հետ (ԱՄՆ, Կալիֆորնիա) – 4,
8. Պսակ արքեպիսկոպոս Թումանյան ուղեկցողների հետ (Անգլիա) – 3,
9. Բաբկեն արքեպիսկոպոս Ապաթյան ուղեկցողի հետ (Արգենտինա) – 2,
10. Շավարշ արքեպիսկոպոս Գուլումճյան ուղեկցողների հետ (Սիրիա) – 3,
11. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան ուղեկցողի հետ (Հնդկաստան, Ավստրալիա) – 2,
12. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյան ուղեկցողների հետ (Ռումինիա, Բուլղարիա) – 3,
13. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան ուղեկցողների հետ (Իտալիա) – 3,
14. Գնել եպիսկոպոս Ճերեճյան (Լիբանան) – 1,
15. Մեսրոպ վարդապետ Գրիգորյան ուղեկցողի հետ (Ավստրիա) – 2,
- II. Արտասահմանյան կրոնական կենտրոններից
  1. Հուստինիանոս պատրիարքը շքախմբով (Ռումինիա) – 4,
  2. Կիրիլ պատրիարքը շքախմբով (Բուլղարիա) – 4,
  3. Անբա Բազելիոս պատրիարքը շքախմբով (Եթովպիա) – 4,
  4. Պաթանյան պատրիարքը շքախմբով (Լիբանան, հայկական կաթոլիկ համայնք) – 4,
  5. Պատվիրակություն Վատիկանից – 2,
  6. Պատվիրակություն Եկեղեցիների համաշխարհային խորհրդից (Ժնև) – 2,

<sup>14</sup> Արաբական Միացյալ Հանրապետություն:

7. Պատվիրակություն Անգլիկան եկեղեցուց – 2,
  8. Պատվիրակություն Պրահայի քրիստոնեական համաժողովից – 2,
  9. Պատվիրակություն ԱՄՆ եկեղեցիների միությունից – 2,
  10. Պատվիրակություն Լիբանանի հայկական բողոքական համայն-  
քից – 2,
  11. Պատվիրակություն ԱՄՆ հայկական բողոքական համայնքից – 2,
  12. Պատվիրակություն «Գ. Կյուլպենկյան հիմնադրամ»-ից (Պորտու-  
գալիա) – 2:
- Ընդամենը – 75<sup>15</sup>;
- ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 100–101: Բնագիր: Մեխենագիր: Թարգմ. ուսու.:

## ԹԻՎ 6

ԽՄԿԿ ԿԵՆՏՐԱԼՈՒՄԻՆ

Արտասահմանյան կադրերի բաժին

Ընկեր ՊԱՆՅՈՒՇԿԻՆԻՆ

Հայաստանի Կոմկուսի կենտրոնի մեկնման հանձնաժողովի<sup>16</sup> հուլիսի 1-ի որոշմամբ թույլատրվել է հայկական եկեղեցու պատվիրակության մեկնումը Հելսինկի խաղաղության համաշխարհային կոնգրես<sup>17</sup> հետեւյալ կազմով.

<sup>15</sup> Հրավիրյալների եւ հյուրերի ցուցակը տե՛ս «Էջմիածին», 1965, թ. 11–12, էջ 36–38:

<sup>16</sup> Այս հանձնաժողովին էր որոշում եւ թույլատրում ՀԽՍՀ (ԽՍՀՄ) քաղաքացիների արտա-սահման մեկնելը՝ անկախ նրանց պաշտոնից եւ դիրքից, շարքային քաղաքացուց ընդհուպ կոմկուսի կենտրոնի քարտուղար: Որոշման մասին պարտադիր կարգով հանձնաժողովը տեղեկացնում էր մոսկովյան վերադասին: Թույլտվությունը հատկապես վերաբերում էր կապի-տալիստական երկրներ այցին:

<sup>17</sup> 1965 թ. հուլիսի 10–15-ին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում խաղաղության, ազգային անկախության եւ զինաթափման համաշխարհային կոնգրեսին մասնակցել է 98 երկրի 1470 պատգամավոր: ՀԱՆ պատվիրակությունը գլխավորում էր Վազգեն Առաքինը, անդամակցում էին Նոր Նախիջևանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Պարգեւ Եպիս-կոպոս Գեորգյանը եւ գավազանակիր Արսեն վարդապետ Բերբերյանը: Վազգեն Առաքինը հանդես եկավ ելույթով: Կոնգրեսի բանաձեւում հատուկ կետով ամրագրվեց հետեւյալը. «Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպատակով: Այս ցեղասպանությունը խլեց կյանքը ավելի քան մեկ ու կես միլիոն ազատասեր հայերի, ալսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդի»: Տե՛ս մանրամասն «Էջմիածին», 1965, թ. 8–9, էջ 66–71: Այս բանաձեւի ընդունման հարցում կարեւոր դերակատարություն է ունեցել խաղաղության համաշխարհային խորհրդի պատասխանատու քարտուղար հալեպահայ նշանավոր համայնավար գործիչ եւ բա-րեգործ Վարուժան Սալաթյանը:

Բալչյան<sup>18</sup> Վազգեն Աբրամի

Գեորգյան Քաջիկ Հմայակի

Բերբերյան Պետրոս Գառնիկի:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆՑ<sup>19</sup>

Բ. Երեւան, Հայաստանի Կոմկոսի Կենտկոմ

1965 թ. հուլիսի 1

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 42, թ. 1: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուս.:

#### ԹԻՎ 7

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին Հայկական ՍՍՈՒ Գերագույն սովետի պատվոգրով պարգևատրելու մասին<sup>20</sup>

Խաղաղության համար պայքարում ակտիվ գործունեության համար ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին պարգևատրել ՀՍՍՈՒ Գերագույն սովետի պատվոգրով<sup>21</sup>:

Հայկական ՍՍՈՒ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ<sup>22</sup>

Հայկական ՍՍՈՒ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Ա. ԳԱՆՍՏՅԱՆ

1965 թ. հոկտեմբերի 28

ֆաղ. Երեւան

«ՀՍՍՈՒ Գերագույն սովետի տեղեկագրեր», 1965, նոյեմբերի 10, N. 31, էջ 1154<sup>23</sup>:

<sup>18</sup> Փաստաթղթում «Բալչյան» է գրված:

<sup>19</sup> Տեր-Ղազարյանց Գեորգի Արտաշեսի (1923–2023) – 1961–1966 թթ. Հայաստանի կոմկոսի կենտկոմի քարտուղար, 1966–1973 թթ.՝ 2-րդ քարտուղար 1973–1981 թթ.՝ ԽՍՀՄ դեսպան Սենեգալում, 1981–1987 թթ.՝ Զիմբաբվեում:

<sup>20</sup> ՀԿԿ ԿԿ նախագահությանը 1965 թ. հոկտեմբերի 27-ին հաստատեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 12, թ. 81, գ. 27, թ. 135:

<sup>21</sup> Ընդգծումը բնագրինն է: Այս պատվոգիրը Հայկական ԽՍՀ բարձրագույն պարգևն էր:

<sup>22</sup> Հարությունյան Նազուշ Խաչատուրի (1912–1993) – 1962–1975 թթ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

<sup>23</sup> Նաեւ տե՛ս «Էջմիածին», 1965, թ. 11–12, էջ 5: Պատվոգիրը հանդիսավոր պայմաններում Վազգեն Առաջինին Ն. Հարությունյանը հանձնեց դեկտեմբերի 2-ին: Տե՛ս «Էջմիածին», 1965, թ. 11–12, էջ 16–17:

## ԹԻՎ 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ

## ԳԱՂՏՆԻ

Վազգեն Առաջին կաթողիկոսը, իր գահակալության տարեկիցի հոբելանական հանդիսություններին մասնակցելու համար, մտադիր է որպես անձնական հյուր էջմիածին հրավիրել ներքոնշյալ անձանց.

1. Արա Գալայճյանին Երուսաղեմից,

2. Տիգրան Բեկչանին (Բեջօղլու, Գարեգին վարդապետ) Կոստանդնուպոլսից<sup>24</sup>,

3. Վազգեն վարդապետ Թաթոյանին Նյու-Յորքից,

4. Գյուլտ վարդապետ Նազաշյանին Փարիզից,

5. Վազգեն վարդապետ Քեշիշյանին Մարսելից,

6. Գեուրգ վարդապետ Կարպիսյանին Բեյրութից:

էջմիածնի կաթողիկոսարանը համապատասխան միջնորդությամբ մեզ է դիմել:

Խնդրում ենք թույլատրել 1966 թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 25-ը մեկ ամիս ժամկետով էջմիածին հյուրերի ժամանումը<sup>25</sup>:

1966 թ. օգոստոսի 25

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 48, թ. 21: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

## ԹԻՎ 9

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 53

Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի նիստի

1967 թ. մարտի 28

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

12. Վազգեն առաջին կաթողիկոսի Շվեյցարիա այցի մասին<sup>26</sup>:

<sup>24</sup> Փաստաթղթում Կոստանդնուպոլիս է գրված:

<sup>25</sup> ՀԿԿ ԿԿ բյուրոն 1966 թ. սեպտեմբերի 8-ին հավանություն տվեց առաջարկին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 48, թ. 19:

<sup>26</sup> 1967 թ. հուլիսի 10–13-ին Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար է. Կ. Բլեյկի հրավերով Վազգեն Առաջինը պաշտոնական առաջին այցն ունեցավ

Թույլատրել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդին համաձայնվել եկեղեցիների Համաշխարհային խորհրդի հրավերով Շվեյցարիա Վազգեն առաջին կաթողիկոսի եւ ուղեկցող Հակոբ վարդապետ Պողապալյանի 1967 թվականի հուլիսի սկզբին երեք շաբաթ ժամկետով այցին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 47, գ. 13, ք. 6: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսւ.:

#### Թիվ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ

ԳԱՂՏՆԻ

1968 թ. սեպտեմբերի 20-ին ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի ծննդյան 60-ամյակի<sup>27</sup> լրանալու կապակցությամբ Հայ եկեղեցու գործերի խորհուրդը դիմել է Մինիստրների Խորհրդին առաջարկելով Վազգեն I կաթողիկոսին ներկայացնել Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրման, ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահ ընկ. Ա. Ն. Կոսիգինի<sup>28</sup> եւ ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ ընկ. Բ. Ա. Մուրադյանի<sup>29</sup> շնորհավորական հեռագրերի ուղարկմանը:

Հաշվի առնելով Վազգեն I կաթողիկոսի հայրենասիրական լայն գործունեությունը եւ ժողովուրդների միջեւ հանուն խաղաղության պայքարում ակտիվ մասնակցությունը, Մինիստրների Խորհուրդը հնարավոր է համարում բավարարել Հայ եկեղեցու գործերի խորհրդի միջնորդությունը:

Կցվում է Հայ եկեղեցու գործերի խորհրդի տեղեկանքը ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի գործունեության վերաբերյալ<sup>30</sup>:

Ժնեւ: Պատվիրակության կազմում էին՝ Մայր տաճարի լուսարարապետ եւ Գերագույն հոգեւոր խորհրդի ատենապետ Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակ Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի արեւելյան թեմի առաջնորդ Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանը, Վիեննայի հոգեւոր հովիվ եւ Ժնեւում եկեղեցիների համաշխարհային խորհրդի մշտական ներկայացուցիչ Մեսրոպ Ժ. վարդապետ Գրիգորյանը եւ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի տեսուչ Ներսես Ժ. վարդապետ Պողապալյանը: Տէս մանրամասն «Էջմիածին», 1967, թ. 9, էջ 5–38:

<sup>27</sup> Տէս «Էջմիածին», 1968, թ. 8–9, էջ 10–11, 66–67, թ. 10, էջ 9–12:

<sup>28</sup> Կոսիգին Ալեքսեյ Նիկոլայի (1904–1980) – 1964–1980 թթ. ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահ:

<sup>29</sup> Շնորհավորեց միայն Բ. Մուրադյանը: Տէս «Էջմիածին», 1968, թ. 8–9, էջ 7:

<sup>30</sup> ՀԿԿ ԿԿ բյուրոն 1968 թ. փետրվարի 27-ին նիստից դուրս հարցումով ընդունեց առաջարկությունը եւ խնդրեց ԽՄԿԿ կենտկոմին հաստատել: Տէս ՀԱԱ, ֆ. 1, ց. 48, գ. 13, թ. 22, գ.

Հայկական ԽՍՀ Մինիստրների հորհրդի Նախագահ Բ. Մուրադյան<sup>31</sup>

1968 թ. փետրվարի 9

ՀԱԱ, ֆ. 1, ց. 48, գ. 23, թ. 97: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

## ԹԻՎ 11

ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՏ<sup>32</sup>

1968 թ. սեպտեմբերի 20-ին լրանում է ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Լ-ի 60-ամյակը: Վազգեն Լ-ը (Պալճյան Վազգեն) ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 20-ին ք. Բուխարեստում (Ռումինիա) արհեստավորի ընտանիքում: 1929 թ.-ից մինչև 1936 թ. սովորել է Բուխարեստի պետական համալսարանի գրականության եւ փիլիսոփայության ֆակուլտետներում: 1930 թ.-ից մինչև 1945 թ. Բուխարեստի հայկական դպրոցում ուսուցիչ է աշխատել:

1943 թ. Վազգեն Լ-ը ընտրվել է հայ եկեղեցու Ռումինիայի թեմի առաջնորդ: Այդ պաշտոնում նա տեղի հայերի շրջանում իրենց հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միության նկատմամբ հայրենասիրական զգացումների ամրապնդման եւ ուժեղացման գծով մեծ աշխատանք է կատարել:

1955 թ. Վազգեն Լ-ը ընտրվել է ամենայն հայոց Գերագույն պատրիարք եւ կաթողիկոս:

Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելուց եւ ԽՍՀՄ քաղաքացիություն ընդունելուց հետո Վազգեն Լ-ը ավելի լայնորեն հայրենասիրական գործունեություն ծավալեց եւ էապես ակտիվացրեց հանուն ամբողջ աշխարհում խաղաղության եւ ժողովուրդների բարեկամության պայքարում հայ եկեղեցու մասնակցությունը:

Արտասահմանյան երկրներ հաճախակի այցերի, ինչպես նաեւ կաթողիկոսի պաշտոնում գործունեության ընթացքում Վազգեն Լ ակտիվ աջակցել է Խորհրդային պետության արտաքին քաղաքական ուղեգծին, քարոզել մեր երկրի նվաճումները, արժանի հակահարված տվել

23, թ. 91:

<sup>31</sup> Մուրադյան Բաղալ Հմայակի (1915–1991) – 1966–1972 թթ. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ:

<sup>32</sup> Զեկուցագրի հիմքը Հայ եկեղեցու գործերի խորհրդի տեղեկանքն է: Տճն ՀԱԱ, ֆ. 1, ց. 48, գ. 23, թթ. 99–101:

ԽՍՀՄ-ում խղճի ազատության մասին թշնամական մոլորություններին, աջակցել իմպերիալիզմի եւ գաղութարարության դեմ ժողովուրդների պայքարին, հանդես եկել ժողովուրդների բարեկամության եւ պետությունների խաղաղ համագործակցության օգտին, հանուն ամբողջ աշխարհում խաղաղության:

Վազգեն I կաթողիկոսը արտասահմանյան հայերի շրջանում հայրենասիրական զգացումների ամրապնդման եւ ուժեղացման, նրանց հայրենիք՝ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միության շուրջ համախմբման գծով լայնածավալ աշխատանք է վարում: Նա ուղղորդում է հայ եկեղեցու ջանքերը իր Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան հայերի հայրենադարձության գծով մեր կառավարության քաղաքականության ուղղությամբ»:

Վազգեն I-ը խաղաղության պաշտպանության Խորհրդային եւ Հայկական կոմիտեների անդամ է: Նա ամբողջ աշխարհում հանուն խաղաղության համաշխարհային կոնգրեսներում՝ Մոսկվայում (1962 թ.) եւ Հելսինկիում (1966 թ.), Խորհրդային Միության հասարակայնության պատվիրակության անդամ էր:

Խաղաղության պաշտպանության գործում ակտիվ գործունեության համար Վազգեն I-ը պարգևատրվել է Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Պատվո ղիպլոմով եւ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Պատվոգրով:

Հայ եկեղեցու Ռումինիայի թեմի առաջնորդ եղած ժամանակ Վազգեն I-ը Ռումինիայի կառավարության կողմից պարգևատրվել է «Հանրապետության աստղ» շքանշանով: Նա նաեւ պարգևատրվել է Եթովպիայի եւ Հորդանանի բարձրագույն շքանշաններով:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Բյուրոն որոշում է ընդունել ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ին ներկայացնել Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրման եւ խնդրում է ԽՄԿԿ Կենտկոմին հաստատել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՔՈԶԻՆՅԱՆ

1968 թ. մարտի 21

ՀԱԱ, ֆ. 1, ց. 48, գ. 46, թթ. 106–107, գ. 23, թթ. 92–93: Բնագիր: Մեֆեմագիր: Թարգմ. ուսւ.:

## ԹԻՎ 12

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 101

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ

1968 թ. հունիսի 11

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

*11. Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի Իտալիա այցի մասին:*

*Թույլատրել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդին համաձայնվել ընթացիկ տարում Իտալիա երկու շաբաթ ժամկետով ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի այցին, ուղեկցությամբ Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի եւ «էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանի:*

ՀԱԱ, ֆ. 1, ց. 48, գ. 16, թ. 28: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուս.:

## ԹԻՎ 13

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Հայ եկեղեցու առաջնորդ կաթողիկոս Վազգեն Առաքինին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին

*Խաղաղության պաշտպանության հայրենասիրական մեծ գործունեության համար եւ ծննդյան վաթսուեամյակի կապակցությամբ հայ եկեղեցու առաջնորդ կաթողիկոս Վազգեն Առաքինին պարգևատրել «Պատվո նշան» շքանշանով<sup>33</sup>:*

ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության նախագահ՝ Ն. Պողոսյանի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. Գեորգանե

Մոսկվա, Կրեմլ, 19 սեպտեմբերի 1968 թ.

N. 3105-VII

«ՍՍՀՄ Գերագույն Սովետի տեղեկագրեր», N. 39, 25 սեպտեմբերի 1968, էջ 63, 131<sup>34</sup>:

<sup>33</sup> Ընդգծումը բնագրինն է:

<sup>34</sup> Տե՛ս նաեւ «էջմիածին», 1968, թ. 8–9, էջ 3: 1968 թ. սեպտեմբերի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Ն. Հարությունյանը հանդիսավոր պայմաններում շքանշանը հանձնեց Վազգեն Առաքինին: Տե՛ս «էջմիածին», 1968, թ. 8–9, էջ 4–6:

## ԹԻՎ 14

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

1969 թ. փետրվարի 12

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

8. 1968 թվականի ապրիլ-հուլիսին արտասահմանյան երկրներ Վազգեն I կաթողիկոսի այցելության վերաբերյալ նյութերի ժողովածուի հրատարակության մասին:

Թույլատրել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդին էջմիածնի տպարանում 1968 թ. ապրիլ-հուլիսին Վազգեն I կաթողիկոսի արտասահմանյան երկրներ այցերի վերաբերյալ նյութերի ժողովածուի տպագրությանը համաձայնություն տալ, 12 տպագիր թերթ ծավալով, 4,000 օրինակ տպաքանակով<sup>35</sup>:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 11, թ. 18: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.<sup>36</sup>:

## ԹԻՎ 15

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

1969 թ. մայիսի 23

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

6գ. Վազգեն I կաթողիկոսի Ավստրիա այցի մասին<sup>37</sup>

Թույլատրել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդին համաձայնվել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի (Բալչյան Վասկեն Աբրամի<sup>38</sup>) Ավստրիա ս. թ. մայիսի 16-ից

<sup>35</sup> Տե՛ս Տ.Տ. Վազգեն Ա. Հայրապետի ութերորդ ուղևորությունը. 1968 թվականի ապրիլ-հուլիս, Վիեննա, ԱՄՆ, Կանադա, Հարավային Ամերիկա, Ֆրանսիա, Ս. էջմիածին, 1969, 389 էջ, 100 նկար, 24,5 մամուլ, 4000 տպաքանակ:

<sup>36</sup> Որոշումն ուղարկվել է Հայ Եկեղեցու գործերի խորհրդին:

<sup>37</sup> Որոշվել է հարցումով 1969 թ. մայիսի 12-ին: Վազգեն Առաջինը 1969 թ. մայիսի 17-24-ին Վիեննայում տեսակցել է Ալեք Մանուկյանի եւ Տատուր Տատուրյանի հետ՝ Մայր Աթոռի ապագա շինարարական գործերի առնչությամբ: Տե՛ս «էջմիածին», 1969, թ. 5, էջ 3-6:

<sup>38</sup> Բնագրում այսպես է:

10 օր այցին՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունն ներկայացուցիչների հետ հանդիպման համար<sup>39</sup>:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 49, գ. 32, թ. 20: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

#### ԹԻՎ 16

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 60

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԻ

1969 թ. սեպտեմբերի 30 եւ հոկտեմբերի 7

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

6գ. Բ. Հ. Մուրադյանի կողմից ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի ընդունելության մասին<sup>40</sup>:


Համաձայնվել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի առաջարկությանը Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ Բ. Հ. Մուրադյանի կողմից ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն առաջինին եւ Հայկական ԽՍՀ-ում մասնավոր այցով գտնվող ձեռնարկատեր Տ. Տատուրյանին ընդունելու մասին:


ՀԱԱ, ֆ. 1, ց. 49, գ. 33, թթ. 84–85: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ուսու.:

Շարունակությունը՝ հաջորդիվ

<sup>39</sup> Տե՛ս նաեւ ՀԱԱ, ֆ. 1, ց. 49, գ. 36, թ. 157:

<sup>40</sup> Որոշվել է հարցումով 1969 թ. օգոստոսի 29-ին:





## ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒՄ՝

Նախոց պատմամշակութային անցյալի հետազոտմանը եւ արժեւորմանը մեծապես նպաստել է Մայր Աթոռի առաջին պաշտոնական պարբերականը, Կովկասում առաջին հայագիտական՝ կրօնական, պատմական, բանասիրական, բառայական եւ ազգային գիտելեաց «Արարատ» հանդեսը: Կեսդարյա գործունեության ընթացքում ամսագրի խմբագրակազմն առաջադեմ, լայնախոհ ու բազմակողմ մոտեցում է ցուցաբերել մեր ազգային մշակույթի բոլոր փուլերի ամբողջական ներկայացման խնդրում: Դրա առհավատչյան է Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանցի՝ երախտագիտությանը լի խոսքը. «կարող եմ զարդարել Արարատ ամսագրիդ էջերը՝ Արարատեան թագաւորութեան երբեմն փայլած փառքը արտայայտելու ցանկութեամբ»<sup>2</sup>:

Նվիրյալ հայագետ հոգեւորականի հայրենապաշտության վառ դրսեւորում է ամսագրում հնագույն մշակութային կոթողի՝ Ժայռապատկերի հրատարակումը 1986 թ. (նկ. 1): Վեց քարայծերով փորագիր հորինվածքը գտնվել էր ամռանը՝ Մաստարա գյուղի մոտ<sup>3</sup>: Մի շարք այլ արձա-

<sup>1\*</sup> Ստացվել է՝ 6.12.2024, գրախոսվել է՝ 12.12.2024: էլ. հասցե՝ karen.tokhatyan@gmail.com:

<sup>2</sup> Մ. ԵՊՍ. ՍՄԲԱՏԵԱՆՅ, ԲԵԼԵՈՒՆԵԱՆ արձանագրութիւն, Արարատ, 1886=ՌՅՂԵ, № 11, էջ 491:

<sup>3</sup> Տե՛ս նաեւ Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երեւան, 1935, էջ 43: Այստեղ որպէս Ժայռանկարի գտնվելու վայր նշված «Ավոյի գաղա» անձավը գտնելու համար դիցաբան Գոհար Վարդումյանի եւ պատմաբան Արտակ Մովսիսյանի հետ 2004 թ. հունիսի 27-ին հետազոտեցինք գյուղից 250 մ հյուսիս-արեւմուտք, հնավուրց «Դեւախաղ» անվամբ գեղատեսիլ կիրճը: Հսկա ապառաժի հարավահայաց թեք նիստի վրա տեսանք 4 մ ձգվող նեղ ու խորը, որոշակի համաչափությամբ փորված ակոսագիծ (նկ. 4–5): Մոտակայքում կան հնում բնակեցված անձավներ եւ միջնադարյան ավե-

նագրությունների («բեւեռագրեր») շուրջ ծավալված նամակագրական լայն քննարկման արդյունքում համարվեց, որ այդ «արձանագրութիւնը մի նոր տեսակ պէտք է լինի»: Դառնալով «իբրեւ թարգման նոցա ժամանակի զգացմանց եւ սրտից», Մ. Սմբատյանցը ժայռապատկեր երեւոյթն «ի լուր աշխարհի» որակեց որպէս «երջանիկ նախնեաց մեզ աւանդած հնութեանց նշխարներ»<sup>4</sup>:

Կոթողի լուսանկարն առաջինը հրատարակել է հնագետ Աշխարհբեկ Քալանթարը<sup>5</sup> (նկ. 2–3):

Այս կերպ սկզբնավորվեց հայ ժայռապատկերաբանության նորօրյա փուլը: Հնդամին, սույն ասպարեզում եւս դրսեւորված է մեր մշակույթին հատուկ անխզելիությունը եւ ժառանգորդայնությունը՝ գիտելիքի այս ոլորտն ունեցել է իր նախընթացը. գրեթե մեկուկես հազարամյակ առաջ, Ոսկեդարի Հայոց մեծաց՝ Մովսէս Խորենացու եւ Անանիա Շիրակացու երկերում ժայռագրությանն աղերսվող երեք կարեւորագույն տեղեկություններով նշանավորվում է հայ ժայռապատկերաբանական մտքի առաջին փուլը<sup>6</sup>:

րակ մատուռ: Որեւէ պատկեր չգտնվեց նաեւ 2012 թ. մայիսի 21-ին (Կ. ԹՈՒՍԱԹՅԱՆ, Արագած լեռան եւ շրջակայքի ժայռապատկերները, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, նվիրված Պողոս Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին, Վանաձորի պետական համալսարան, Երեւան, 2020, էջ 347–348, նկ. 7–8):

<sup>4</sup> Մ. ԵՊՍ. ՍՄԲԱՏԵԱՆՅԱՆ, էջ 491–492:

<sup>5</sup> Տէն ՔԱԼԱՆԹԱՐ, 1935, նկ. 22: Այստեղ տեղադրված են լուսանկարիչ Արտաշէս Վրույրի (ՀՊԹ 8554, մակագրված է «Թալինի շրջան») եւ 1907–1908 թթ. «Արարատ» ամսագրի խմբագիր, 1943–1952 թթ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի արած լուսանկարները (ՀՊԹ 1307), քանի որ Ա. Քալանթարի գրքովում տպագրված լուսանկարի որակը ցածր է: ՀՊԹ-ում պահպանվում է նրանց, եւ Ա. Քալանթարի արած մի այլ ժայռափորագրի հատվածի հինգ լուսանկար (ՀՊԹ ն267, 1491, 1783–1785, առանց տեղանշման): Այդ հատվածի՝ Ա. Վրույրի արած լուսանկարը մակագրված է՝ «Մաստարա: Ժայռագրություն կիլիկյան պարսպի քարերի վրա, 1937 թ.» (ՀՊԹ 6005): Սա հավաստում է, որ երկու ժայռապատկերն էլ Մաստարայում են, իրար մոտ են կամ կից:

1886 թ. արտանկարը եւ 1935 թ. լուսանկարը հաջողվեց նույնականացնել միայն 2003 թ.: Արտանկարը շատ մոտավոր էր, համապատասխանում են միայն քարածերի թիվը եւ դիրքերը: Լուսանկարի աջ կողմի նետաձիգի պատկերի փոխարեն հայկական Ո եւ լատինական H տառեր են: Զախ կողմի մարդու պատկերը արտանկարում բացակայում է: Դրա ներքեւի գծիկի փոխարեն 1 թիվն է: Այս ամենը կճշգրտվի ժայռապատկերի հայտնաբերմամբ:

<sup>6</sup> Այդ մասին նյութեր եւ հոգվածներ հրապարակել եմ բազմիցս, տե՛ս Կ. ԹՈՒՍԱԹՅԱՆ, Մաշտոցեան տառաձեւերի եւ դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ, «Բազմավէպ», Վենետիկ – Ս. Ղազար, ՃԿԱ=CLXI, 2003, № 1–4, էջ 46–49: Կ. ԹՈՒՍԱԹՅԱՆ, Ժայռապատկերման վկայութիւնները ոսկեդարյան հայ պատմագրության մեջ, «Մաշտոցյան Դ. Ընթերցումներ», Օշական, 2002, էջ 52–53: Նույնի՝ Մեծ Հայքի ժայռապատկերները, «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում», «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երե-

Պատմահայրը հիշատակել է Տորք Անգեղի՝ «արծիվներ գրելը»՝ «քերել եղնգամբքն եւ կազմել որպէս տախտակ, եւ գրել նոյնպէս եղնգամբք իւրովք արծուիս եւ այլս այսպիսիս»<sup>7</sup>: Հրաշապատումի ձեւով նա պահպանել է ժայռագրութեան ու տառաստեղծման մի աղբրս եւս՝ Մեսրոպ Մաշտոցի երազը՝ «տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աշոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա, Ե, է, Ը, Ի, Ո, Ի, զի որպէս ի ձեան վերջք գծին կուտակեալ ունէր քարն»<sup>8</sup>:

ւան, 2011, էջ 115 (ռուսերեն՝ էջ 285–286): Նույնի՝ Շիրակացին եւ հայկական ժայռապատկերաբանության ակունքները, «Գիտության աշխարհում», Երեւան, 2012, № 3, էջ 49–51: Նույնի՝ ժայռապատկերաբանության եւ օրացույցի ակունքները Հայաստանում եւ Անանիա Շիրակացին, Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակութային, Երեւան, 2014, էջ 115–118: Կ. ԹՈՒՍԱԹՅԱՆ, Կ. ԲԱՅՐԱՄՅԱՆ, Ա. ԲՈՐՈՒՅԱՆ, Աշխարհքի քաղաքացիական պատկերների հետազոտումն ակունքներում, Մովսիսի Հայաստան. Ուղուրի-էթիուրի երկրի հնագիտական ժառանգությունը (խմբ.՝ Մ. Բադալյան, Ք. Մարտիրոսյան-Օլջանսկի, Ա. Բորոխյան), Երեւան, 2022, էջ 136, 144: К. ТОХАТЯН, I riflessi dell'antica conoscenza astronomica nell'arte rupestre dell'Armenia, Archeoastronomia: Un dibattito tra archeologi ed astronomi alla ricerca di un metodo comune, "Atti del XIII Convegno Internazionale XIII" (a cura di Mario Codebò), Genova, 2009, էջ 84–85: Նույնի՝ Rock Carvings of Armenia, "Fundamental Armenology", № 2, 2015, էջ 200–202: Նույնի՝ Petroglyphs of Armenia along the Great Silk Road, "Studies on Cultures along the Silk Roads", Vol. 2, Budapest, 2020, էջ 147–149: Նույնի՝ Petroglyphs in Armenian Highland, "Historical-cultural Heritage of Armenia, Yerevan, 2022, էջ 28–31: К. ТОХАТЯН, Наскальные изображения Великой Армении: астрономические рисунки и строения, Сборник материалов «Международного семинара-тренинга по историко-культурному наследию стран СНГ», Алматы, 2011, էջ 170–171:

<sup>7</sup> Մովսիսի Խորենացուց Պատմութիւն Հայոց, Երեւան, 1991, գիրք Բ., Ը., էջ 115: Դյուցազն Տորքը հայրենյաց պաշտպան է, մշակութային հերոս, դեմիուրգ (հունարեն δημιουργός – գիտակ, վարպետ, արհեստավոր, նկարիչ, արարիչ, ծագում է δημιουργ – ժողովուրդ եւ ἔργον – աշխատանք, գործ բառերից), քանդակի եւ ժայռափորագրման արվեստի հիմնադիր ու հովանավոր: Ըստ ազգագրագետ Խաչիկ Սամուելյանի՝ Պատմահոր տողերում «պահպանվել են հետքեր այն հնագույն դարաշրջանից, երբ մարդիկ իրենց տեխնիկական ճարտարվեստը արտահայտում էին միայն սեփական ձեռքով ու քարով» (Խ. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ, Հին Հայաստանի կուլտուրան. պատմական ակնարկներ, հտ. 1, Քարե դար, Երեւան, 1931, էջ 307–308): Արեւելագետ Նշան Մարտիրոսյանը «շատ հետաքրքրական եւ մշակութային պատմության համար հուշվ կարեւոր» համարելով այս տեղեկությունը, Տորքի փորագրած «արծիվի եւ ուրիշ կենդանիներու եւ առարկաներու պատկերները» առնչել է Ք. ծ. ա. II–I հազ. փոքրասիական մեհենագրողմանի հետ (տե՛ս Գիլգամեշ, Հին Արեւելքի դյուցազնավեպ, թարգմ. եւ ներած., Նշան Մարտիրոսյանի, Երեւան, 1963, էջ 12–13): Բանագետ Արամ Ղանալանյանի համոզմամբ՝ «հազարավոր հիանալի ժայռապատկերները ...ավանդական Տորքին վերագրված քարարվեստի այդօրինակ նմուշներից են, որն այնքան տարածված ու ծաղկած է եղել Հայկական լեռնաշխարհի բնակիչների մոտ» (Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ, Ավանդապատում, Երեւան, 1969, էջ 288):

<sup>8</sup> Մովսիսի Խորենացուց Պատմութիւն Հայոց, գիրք Գ., ԾԳ., էջ 327: Տե՛ս նաեւ Դազարայ Փարպեցուց Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քնն. բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. եւ ծանոթագր.՝ Բ. Ուլուբաբյանի, Երեւան, 1982, Ա զրուագ, Ժ., էջ 34, Ա. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ, Քննական պատմութիւն հայոց, մասն

Առավել ուղղակի է Անանիա Շիրակացու խոսքը. «զգայարանք առաջնոցն սուր էին քան զայժմուցս՝ զոր վկայեն բազումք. վասն որոյ ոչ միայն զԱրեգական գնացս կարացին նկատել, այլ եւ զբոլոր լուսաւորացս կարացին դրոշմել եւ ճանաչել»<sup>9</sup>: Սա վկայում է թե՛ ժայռերին դրոշմելու վաղեմության, եւ թե՛ աստղագիտական պատկերների մասին:

Հայաստանում ժայռապատկերի հրատարակման երեւոյթը նշանակալի էր, քանզի աշխարհում առաջին անգամ էր որեւէ գիտական մամուլում ժայռապատկեր հրատարակվում, քննարկվում եւ իրատեսորեն մեկնաբանվում:

Ժայռանկարներ հայտնաբերվել էին յոթ տարի առաջ՝ 1879 թ., Իսպանիայի հյուսիսում, Բասկերի երկրի «Ալտամիրա» (Altamira) անձավում<sup>10</sup>: Սակայն, Եւրոպայի գիտական աշխարհն ու Կաթոլիկ եկեղեցին փութացին այդ բարձրարժեք գտածոները նորաստեղծ՝ կեղծիք համարել, քանզի հնության ընդունումը կվկայեր «նախաշրջեղեղյան» արվեստի գոյությունը: Դրանք այդպես էլ չարժանացան որեւէ գիտական հրատարակման<sup>11</sup>:

Գ., Թիֆլիս, 1895, էջ 191–193: Բալահովիտ գավառում, Արածանիի աջ ափի լեռը Մեսրոպ Մաշտոցի անունով է կոչվել, քանի որ նա բերդում մնացել է յոթ շաբաթ եւ լրացրել հայոց տառերը. «Լեռոն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին եւ նկարք գրերոյն» (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ – Ս. Ղազար, 1862, Ին., էջ 49–50): Լեռան գագաթի հնավուրց կիսակործան բերդում տեսնելով 29 տողանի արձանագրութիւնը, Գարեգին Սրվանձտյանցը եւս համարել է, որ Մեսրոպ Մաշտոցը տառերն ստեղծել է Բալուի այս՝ «Գրման քար» անձավում (տե՛ս Գ. ՍՐՈՒԱՆԶՏԵԱՆՅՑ, Թորոս աղբար, հտ. Բ., Կ. Պոլիս, 1884, մասն Բ., էջ 160–162):

<sup>9</sup> ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ, Տիեզերագիտութիւն եւ տոմար, աշխ. պ. գ. թ. Աշոտ Աբրահամյանի, խմբագիր՝ պրոֆ. Հ. Աճառյան, Երեւան, 1940, ԾԹ., էջ 83–84: Հմմտ. ՄՄ ձեռ. 2180.527բ, 2762.206:

<sup>10</sup> Բարձրարժեք այս գունանկարներն իր տոհմական կալվածքում հայտնաբերել է իրավաբան, սիրող-հնագետ Մարսելինո դե Սաուտուոլան (Marcelino Sanz de Sautuola, 1831–1888)՝ դստեր՝ իննամյա Մարիայի հետ: Նրա արած արտանկարները 1880 թ. Լիսաբոնի «Նախապատմական» վեհաժողովում ծաղրի արժանացան, հատկապես ֆրանսիացի անվանի հնագետ Էմիլ Կարտեյակի (Émile Cartailhac, 1845–1921) կողմից: Ժայռանկարները գեղծարարութիւն համարվեցին մինչեւ 1902 թ. հոկտեմբերը, երբ նա վերանայեց իր կարծիքը՝ հեղինակավոր L'Anthropologie ամսագրում հրատարակելով La grotte d'Altamira, Espagne. "Mea culpa" d'un sceptique վերնագրած հոդվածը: Հնութիւնն ընդունելու հիմք դարձան Ալտամիրայում պեղված քարիդարյան գտածոները, նաեւ Ֆրանսիայի մյուս անձավներում հայտնաբերված գունանկարները՝ «Լա Մուտ» (La Mouthe) 1895 թ., Ֆոն դը Գոմ (Font-de-Gaume) եւ Կամբարել (Combarelles) 1901 թ.:

<sup>11</sup> Մինչ այդ՝ 1627 թ., նորվեգացի ուսուցիչ, կրոնավոր Պեդեր Ալֆսոնն էր ափատարած պատկերներն նկարագրել եւ արտանկարել Շվեդիայի Բոհուսլեն մարզի Տանում (Tanum) հնավայրում (տե՛ս P. SKOGLUND, J. LING, U. BERTILSSON (eds.), Picturing the Bronze Age. Oxford-Philadelphia, 2015, էջ 167): Առավել վաղ՝ Ֆրանսուա դը Բելֆորեն (François de Belleforest)

Իրավամբ կարող ենք համարել, որ ժայռապատկերման հնագույն օրրան Հայաստանում են նորօրյա ժայռապատկերաբանության ակունքները, քանզի Մաստարայի առաջին ժայռանկարի հրապարակմանը հաջորդում են 1892 թ. Արագածի գագաթնամերձ մասերում նկատված ժայռապատկերների մասին տեղեկությունները<sup>12</sup>, որոնք անմիջապես պատշաճ ուշադրության են արժանանում:

1893 թ. «Արարատ» ամսագրի խմբագիր Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) ամփոփել է Արագածի գագաթին մերձակա նկարների մասին տեղեկությունները: Նա ներկայացրել է Կարապետ վարդապետի տեղեկությունը գագաթին մերձակա ժայռապատկերների մասին: 1892 թ. մայիսին Թիֆլիսում գյուղատնտես Ալեքսանդր Քալանթարյանն իրեն հաղորդել էր, որ գագաթին, կամ դրան շատ մոտ կան տարօրինակ արձանագրություններ: Տեղեկություն հավաքելով, Միաբանն Աշտարակում գտել է դրանք անձամբ տեսած Սմբատ Սիսակյանցին ու ստացել նրա ընդօրինակած պատկերների մեկ էջ: Հստ այդ մատիտանկարի, դրանք «յիշեցնում են զանազան կենդանիների թեթեւ եւ կոպիտ ուրուագիծ (ձուկ,

Փարիզում 1575 թ. հրատարակած “La Cosmographie universelle de tout le Monde” գրքում նշել էր Դորդոնի Ռուֆինյակ (Rouffignac) անձավի մամոնտների գունանկարների մասին, որոնք իրապես հայտնաբերվեցին միայն 1956 թ.: XVII դարից Սիբիրի, հետագայում՝ Հեռավոր Արեւելքի, Սահարայի, Հարավային Աֆրիկայի, Ամերիկայի եւ Ավստրալիայի նորահայտ մասերում ճանապարհորդած մարդիկ հաղորդումներում ու նոթերում ժայռերին արված պատկերներ են հիշատակել: XVIII–XIX դդ. ուսական արխիվներում ժայռանկարների մասին հաղորդումներ ու զեկույցներ կան: Սակայն դրանք եւս գիտական հրապարակման չեն արժանացել (տես Т. НИКОЛАЕВА, Б. ПЯТКИН, К истории изучения петроглифов Енисея (дореволюционный период), Археология Южной Сибири, 10, Кемерово, 1979, էջ 134–141, М. ДЭВЛЕТ, К истории исследования петроглифов Енисея (работы А. Адрианова), Археология Южной Сибири, 14, Кемерово, 1985, էջ 88–97):

Քարի վրա նկարներ հիշատակել է դեռեւս Հերոդոտոսը (Ηρόδοτος Ἀλικαρνασσεύς, Բ. ծ. ա. 484–425), սակայն, ակնհայտորեն, խոսքը եգիպտական տաճարների սրբատաշ քարերին արված պատկերազարդների մասին է. «նրանք են առաջին անգամ զոհարաններ, արձաններ եւ տաճարներ կանգնեցրել աստվածներին եւ կենդանիներ փորագրել քարերի վրա» (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ.՝ Սիմոն Կրկյաշարյանի, Երեւան 1986, գիրք 2, Եւտերպե, 4, էջ 90): Արդ հայտնի տվյալներով, առաջին անգամ ժայռապատկերներ հիշատակել են չին փիլիսոփա Հան Ֆեյը (Han Fei, Բ. ծ. ա. 280–233) եւ աշխարհագետ Լի Դաոյուանը (Li Daoyuan, 386–434): Նրանց, ինչպես նշվեց, հաջորդում են Մովսես Խորենացին եւ Անանիա Շիրակացին: Պատկերներ եւ, որ շատ ուշագրավ է՝ դրանց առնչվող պատումներ է գրանցել Չժան Յուեն (Zhang Yue, VIII դ.), Զինաստանի հարավ-արեւելյան Ֆուցզյան մասում (տես CHEN ZHAO-FU, Découverte de l'art préhistorique en Chine. Paris, 1988, էջ 9, R. G. BEDNARIK, F. LI, Rock Art Dating in China: Past and Future, “The Artefact”, 1991, № 14, էջ 25–33):

<sup>12</sup> Տես Միաբան, «Նստոց». Հինգ նոր արձանագրություններ, Արարատ, 1893=ՌՅՆԲ, № 8, էջ 775–776:

մողէս, թռչնի գլուխ, օձ, մի շորքոտանի): Նկարներից մի քանիսը ակներեւ նման են Արարատում (1886 թ. ԺԱ.) տպուածին, գտնուած Մաստարայի մօտ: Այդ՝ մեր սովորական երկար նստարանների – «իշոտնուկի» նմանութիւն ունեցող խազերը գտնուելով խառն ուրիշ պատկերագրերի հետ՝ իսկապէս ստանում են նշանակութիւն եւ երեւում է, որ պատահական խազիսզոցներ չեն: Մեր ստացած ընդհանուր տպաւորութիւնը պ. Սիսականցի նկարից մեզ յիշեցրեց Ամերիկայի հնդիկների պատկերագրերը, միայն աւելի բարդ ու աւելի բազմաթիւ նշաններով<sup>13</sup>:

XX դ. սկզբից արդեն ժայռապատկերաբանական միտքը, նկարագրողական բնույթով հանդերձ՝ առավել վերլուծական էր եւ ամրապնդված պատմահամեմատական հենքով: Գիտության նոր մակարդակում հայ ժայռապատկերաբանության կայացմանը մեծապէս նպաստեց «Արարատ» ամսագիրը:

1910 թ. հունիսի 1-ին Մեսրոպ արքեպ. Սմբատյանը Արարատի ստորոտում, Արաքսի աջ ափի Յոլակերտ<sup>14</sup> բերդաքաղաքի ավերակներում «երկու քարափի վերայ» հայտնաբերել է յուրօրինակ գաղափարանշանակիր գրություն (նկ. 6), բնութագրելով այն որպէս նշանագրեր. բայց ոչ բեւեռագրեր: «Մեզ թւում է, որ այս նշանագրերը առնչութիւն ունեն հաթեան գրերի հետ, որոնց մասին «Հանդէս Ամսօրեայ» ամսաթերթի մէջ (1910 թիւ 2. փետրուար. երես 46, 47, եւ գրուած են Հաթեան նշանագրերի ձեւերը) մի յօդուած կայ, որի մէջ... հանդէսն ասում է «Շատ հետաքրքրական է

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 775–776: Այս մասին տեղյակ է եղել նաեւ Լ. Լիսիցյանը, տես Լ. Լիսիցյան, 1913–14 [հաղորդագրութիւն «Արարատ» հանդեսից, «Նախապատմական նկարներ»՝ Հայաստանում հայտնաբերված ժայռապատկերների պատճեններ. ձեռագիրը եւ գծագրերը Լ. Լիսիցյանի], ՀԱՍ, Ֆոնդ 428, ցուցակ 1, գործ 98, թերթ 1: Այստեղ իր նշումներում նա շփոթել է Տէր-Մկրտչեաններին: «Արարատի» 1892–1894, 1902 թթ. խմբագիր Գալուստ Տէր-Մկրտչեանի փոխարեն իբրեւ «Նստոց» բաժնի հեղինակ է նշել վարդապետ (1909 թ.՝ եպիսկոպոս) Կարապետ Տէր-Մկրտչեանին, որն ամսագրի խմբագիրն է եղել 1902, 1904–1906 թթ.:

<sup>14</sup> Յոլակերտը (Չողկերտ, Յողկերտ) Մեծ Մասիսի հարավային ստորոտում էր, Քարաքիթ (Դաշբուռուն) գյուղից 7 կմ արեւմուտք (հետագայում՝ Երեւանի նահանգի Սուրմալուի գավառ): Տես Ղ. ԱԼԻՇԱՆ, Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, Վեներիկ – Ս. Ղազար, 1890, էջ 123–124, 487–489, Մ. ՆԻԿՈՆՍԿԻ, Վանի թագավորների Ռուսաստանի սահմաններում գտնուած սեպաձեւ արձանագրութիւնները (ռուս. թարգմ. Նդիշէ արքեպ. Մուրադեան), Արարատ, 1893=ՌՅԽԲ, № 8, էջ 759–761, Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 11, Բրոնզե եւ վաղադուին երկաթե դար, Երեւան, 1941, էջ 189, 247–250: Ենթադրաբար, այստեղ էր բիւսնական Մենուախիւնիին: Իսկ առավել վաղ Յոլակերտը հիշատակում է Պատմահայրը. ...ի ժառանգութիւն երկուց որդոց իւրոց, արդոյն Փառոխի եւ կայտառին Յոլակայ. յորս բնակեալ յիւրեանց անուն գտեղիսն կոչեցին, ի Փառոխայ՝ Փառախոտ, եւ ի Յոլակայ՝ Յոլակերտ (Մովսիսի խորենացոյ Պատմութիւն Հայոց, Ա. գիրք, ԺԲ., էջ 40):

քննել՝ թէ ինչ ծագում ունին այս նշանագրերը. որ հայկական մտքի առաջին եւ հնագույն արգասիքը կը համարուին: Եսսէնի քննութեամբ Հաթեան արձանագրութեան ամենահինը Քրիստոսէ 1000–տարի առաջ կերելի: Այս մտածողութեամբ պէտք էր կարծել, որ Հաթեան նշանագրութիւնը հնարուած ըլլայ Քրիստոսէ 1200 տարի առաջ»<sup>15</sup>: Այսպիսով, Յոլակերտի եւ Արագածի պատկերները «դեռեւս XX դ. սկզբներին իրենց վրա են սեւեռել պատմաբանասիրական նախասիրություն ունեցող գիտնականների ուշադրությունը»<sup>16</sup>:

1910 թ. հուլիսի 21-ին Արագածի հարավային լանջերի ժայռապատկերները տեսել են Կոմիտասը եւ Մ. Տեր-Մովսիսյանը, որը երեք տարի անց գրել է. «գտայ խորհրդաւոր արձանագրութիւնը շատ տեղ կրկնուած: Դոքա ողորկ երեսով, մի կամ երկու արշին գետնից դուրս ցցուած բազալտ քարեր են, որոնց վրայ նախապատմական, ըստ մեծի մասին համանման կրկնութեամբ քանդակներ են: Թէեւ քանդակի մէջ պակասում է արուեստը, բայց անհրաժեշտ է քանդակողի հմտութիւնը եւ փորձառութիւնը: Ներկայացրած են, բարակ համաչափ գծերով, կամ շերտերով եղջիրաւոր կենդանիներ, այծ կամ եղջերամ, աղեղներով մարդիկ. երբեմն զարդեր: Խնչ են դոքա. արձանագրութիւն, թէ որսորդական եւ պատերազմական խորհրդանիշներ... Խնչ ժամանակից են»<sup>17</sup>:

Նույն հոգովածում Մ. Տէր-Մովսեսյանն արձանագրել է նաեւ 1902 թ. իր տեսած մյուս ժայռափորագրի հայտնաբերումը. «Հայ Զէյվա (այժմ Տարոնիկ- Կ. Թ.) գիւղի բնակիչներից ինձ պատմեցին, որ Սեւշուր գետի աղբիւրների մօտակայ Կարմիր բլուր բարձրութեան վրայ կայ մի տեսակ օտարոտի գրութիւն, որ ոչ ոք չի կարողանում կարդալ: Ամենաբարձր կէտում կայ մի քանի տող գրութիւն. չափազանց խոշոր մասշտաբով: Գրութիւնը բաղկացած է խորհրդանշաններից, իրար հետ սերտ շաղկապուած եւ մի քանի անգամ կրկնուած: Փորձեցի լուսանկարել, անկարելի եղաւ. ժայռը շատ է անկանոն: Արձանագրութեան բռնած տարածութիւնն է երկայնութիւնը

<sup>15</sup> Մ. ԱՐԲ. ՍՄԲԱՏԵԱՆ, Յոլակերտի բերդը, Արարատ, 1910=ՌՅԾԹ, № 6, էջ 574–576:

<sup>16</sup> ԳՐ. ԿԱՐԱՆԱՆՅԱՆ, Պ. ՍԱՖՅԱՆ, Սյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հտ. 4, պր. I, Երեւան, 1970, էջ 6:

<sup>17</sup> Մ. ԵՊՍ. ՏԷՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ, Արարատի եւ Արագածի գագաթներին, Արարատ, 1913=ՌՅԿԲ, № 1, էջ 65–66: ՏՆԵ ՆԱԵԼ Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Հ. ԻՍՐԱՅԷԼՅԱՆ, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հտ. 6, պր. II, Երեւան, 1971, էջ 6, Ա. ԲՈՐՈՆՅԱՆ, Կոմիտասը եւ հնագիտությունը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, հտ. Բ., Երեւան, 2017, էջ 30–35, 51:

5–6, լայնութիւնը 1–2 սաժէն: Արդեօք դա հիստորիական գրութիւն չէ: Այն ժամանակուանից ես շատերին եմ պատմել այդ մասին եւ առաջարկել գնալ ուսումնասիրելու եւ արտանկարելու. տակաւին մնում է այնպէս»<sup>18</sup>:

Հետագայում կոթողը տեսել է ֆիզիկոս, պրոֆ. Հարություն Անժուրը (Չեքոտարյան): 1936 թ. Երեւանի համալսարանում Ա. Քալանթարի զեկուցման ժամանակ նա նկատում է, որ ցուցադրված ջրագծերի ականաչափական սխեման հիշեցնում է Այդր լճի մոտ մի բլրի վրա իր տեսած ժայռափորագիրը: Այդ լսելով, Ա. Քալանթարն անմիջապէս եզրակացնում է, որ դա Արագածոտնի նախնադարյան ոռոգման համակարգի քարտեզն է<sup>19</sup>: Անվանի հնագետը դեռեւս 1927 թ. պարզել էր, որ «ջրաբաշխական մի յուրահատուկ սիստեմ, տեղին հարազատ, այստեղ հասել է բարձր կատարելության. նա խիտ ցանցի պէս ծածկում է մեր միջնաշխարհն ամբողջապէս՝ Արագած, Սեւան, Արարատյան բովանդակ աշխարհը»<sup>20</sup>: Այդպիսով, 35 տարի անց միայն պարզվեց, որ Կարմիր բլուրում 1902 թ. Մ. Տեր-Մովսիսյանի նկատած փորագրութիւնը Մեծամորում է<sup>21</sup> (նկ. 7–9):

<sup>18</sup> Մ. Տէր-Մովսիսեան, 1913, էջ 66: Տէն նաեւ Կ. Թոմսեան, 2003, էջ 60–62, նկ. 3–6: Երկարութիւնը եղել է մոտ 12 մ (1 սաժէնը՝ 2.13 մ): Այժմ մոտ 7 մ է՝ աջից երեւում են քարը կտրելու հետքերը: Լայնութիւնը՝ 2–4 մ է:

<sup>19</sup> Կոթողի հետազոտման հետագա ընթացքը տես Մ. Խաչատրյան, Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագրված գծագիրը, ՊԲՀ, 1971, № 3, էջ 128, Մ. ХАЧАТРЯН, О древней ирригационной сети Арагацотн, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1976, № 1, էջ 121–129, Л. КАРАПЕТЯН, Производящее хозяйство и духовная культура племен Армении в эпоху поздней бронзы и раннего железа, Ереван, 1980, էջ 33–36, Հ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ուրարտուի ջրաշինարարական կառույցները, Բնագիտության եւ տեխնիկայի պատմութիւնը Հայաստանում, Երեւան, 1987, էջ 172–188, Թոմսեան, 2003, էջ 61, նկ. 3–4, Ա. ԲՈՐԻՅԱՆ, Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Վիշապաքարերը Տարագրոսի ուսումնասիրութիւններում, ԼԳԳ, 2016, № 3, էջ 249–250: ՀՊԹ-ում պահպանվում է Գ. Հովսեփյանի (ՀՊԹՆ 157), Ա. Վրույրի 1927 թ. արած մեկական լուսանկար (ՀՊԹ 8569) եւ 1938 թ. արված գծագիր (ՀՊԹՆ 91):

<sup>20</sup> Ա. ՔԱԼԱՆԹԱՐ, Երկու սեպագիր արձանագրութիւն, Օրագիր ՀՍԽՀ Հնութիւնների Պահպանութիւն Կոմիտեի, Երեւան, 1927, № 3, էջ 54–55 (Ա. ՔԱԼԱՆԹԱՐ, Հայաստան. Քարե դարից միջնադար. Երկերի ժողովածու, Երեւան, 2007, էջ 245–246, նաեւ՝ 20), Ա. ՔԱԼԱՆԹԱՐ, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ խորհրդային Հայաստանում, Պատմութիւն եւ գրականութիւն ինստիտուտի հաղորդումներ, № 2, Երեւան, 1933, էջ 171–194 (Ա. ՔԱԼԱՆԹԱՐ, 2007, էջ 281–297): Ոռոգման համակարգերի մասին տես նաեւ Գ. ՇԻՐՄԱԶԱՆ, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմութիւնից, Երեւան, 1962, էջ 50–56, Г. ШИРМАЗАН, Страницы из истории орошения Армении (Урартское водохозяйственное строительство и Эчмиадинский канал), Նյութեր Հայաստանի գյուղատնտեսութիւն եւ գյուղացիութիւն պատմութիւն, հտ. 1, Երեւան, 1964, էջ 60–90, Н. АРУТЮНЯН, Некоторые вопросы земледелия в центральных областях государства Урарту, նույն տեղում, էջ 28–59, Ս. ԲԱՐԻՍԻՍԻԱՆ, Դիտողութիւններ եւ նոր նյութեր հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ, նույն տեղում, էջ 259–285:

<sup>21</sup> Վեցհազարամյա բնակատեղիի բուն անունն անհայտ է. 1966 թ. ընդունվեց վաղմիջնադարյան հայ պատմագիրների երկերում վկայված Մեծամոր անունը, որը տեղագրորեն

1912 թ. լեզվաբան, պատմաբան Գրիգոր Ղափանցյանը մոտ 50 ժայռանկար է հայտնաբերել Արագածի հարավ-արեւելյան լանջի վիշապաքարից դեպի հյուսիս-արեւմուտք բարձրանալով. «քարակոթողի տեղից մօտ 1 վերստ հեռու դէպի Արագածի ձիւնապատ գագաթները (մօտ 1 կմ.-կ. թ.): Քանդակուած են բազմաքանակ քարերի եւ քարափների վերայ, ընկած հեղեղատների մէջ»: Դրանք «մարդկութեանս զարգացման ամենաուժեղ գործօնի՝ գրի մարմնացած հաւակներն ու ռահահորդներն»<sup>22</sup> են քարի վերայ. սրանք զանազան առարկաների պատկերացումներ են, մեծ մասամբ ինչ որ աղեղնաւոր շորքոտանու: Քանդակը 2–3 միլլիմետրից աւելի չէ եւ ոչ էլ ուղղանկիւնաւոր: Մի քանի քարափների վերայ դուրս են հանուած որսի տեսարաններ՝ հեղեղներ իրենց ձագերով, շներ. սրանցից երկու հարեւանցի տեսարաններ նշմարելի են բացուստ մօտ 100–150 քայլ հեռաւորութեան վերայ: Այս ստեղծագործութեան հինաւորց ժամանակներին պատկանիլը ապացուցւում է հէնց նրանով, որ յիշածս «պատկերագրերի» քարերի շերտերը շատ տեղեր փոխուել են, քանդակներից միայն մասերն են մնում»<sup>23</sup>: Հետագայում, վիշապաքարերին նվիրված աշխատության մեջ նշել է, որ դրանք խորաքանդակ են, ի տարբերություն վիշապաքարի վերնամասի բարձրաքանդակի<sup>24</sup>:


Հայաստանի ժայռապատկերների հայտնաբերման եւ ուսումնասիրման մօտ 140 տարվա ընդարձակ պատմագրությունը վկայում է հնագիտության այս ոլորտի հանդեպ հայագետների դրսեւորված մեծ հետաքրքրությունը եւ մասնագիտական պատշաճ վերաբերմունք: Նորօրյա

մօտ է հնավայրին, տե՛ս է. ԽԱՆԶԱԿՅԱՆ, Կ. ՄԿՐՏՅԱՆ, է. ՊԱՐՍՄՅԱՆ, Մեծամոր, Երեւան, 1973, էջ 6–8:

<sup>22</sup> Հայերեն հնախոսական բառեր են. հաւակ – սկիզբ, սկզբնապատճառ, առաջնորդ, հեղինակ. առնչվում է նաեւ հաւատ – ապացույց, փաստ, հավաստիք բառին (ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, հտ. Գ., Երեւան, 1977, էջ 67, 70), ռահահորդ – ճանապարհորդ (ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, Երեւան, 1979, էջ 139):

<sup>23</sup> Գ. ՂԱՓԱՆԿՅԱՆ, Հնութեան մի քանի յիշատակարաններ, Արարատ, 1914=ՌՅԿԳ, № 1, էջ 95:

<sup>24</sup> Помимо многочисленных заштриховок контур диких коз с двумя рогами, загнутыми назад, удалось видеть и следующее красивое изображение: на одной большой, отдельно стоящей скале трехугольного вида...выгравирована сцена из охотничьего быта с охотником, стреляющим из лука по бегущим оленям и козам, преследуемым собаками. Разница в способе изображения между стелой и этой охотничьей картиной была в том, что в первом случае изображение рельефное, а во втором, наоборот, выдолблено (выгравировано) в камне (Г.Р. КАПАНЦЯН, О каменных стелах на горах Армении, Ереван, 1952, էջ 48), տե՛ս նաեւ Կ. ԹՈՒՍԱԹՅԱՆ, 2021, էջ 63–64, Կ. ԹՈՒՍԱԹՅԱՆ, Կ. ԲԱՅՐԱՄՅԱՆ, Ա. ԲՈՐԻՅԱՆ, էջ 144–145:



Նկ. 1 Մաստարայի ժայռապատկերի արտանկարը




Նկ. 2—3 Մաստարայի ժայռապատկերի լուսանկարները  
 (ՀՊԹ 8554, 1307)




Նկ. 4 Մաստարա. Դեախաղի կիրճը, 2012 թ.



Նկ. 5 Դեախաղ. ակոսագիծ, 2012 թ.



Նկ. 6 Յուլիերտի արձանագրության արտանկարը



Նկ. 7 Մեծամոր. Արագածի ջրաբաշխ համակարգի փորագրության 1938 թ. արտանկարը (ՀՊԹ Ն91)



Նկ. 8 Մեծամոր. Արագածի ջրաբաշխ համակարգի փորագրության աշ հատվածը, 1927 թ. (ՀՊԹ 8569)



Նկ. 9 Մեծամոր. Արագածի ջրաբաշխ համակարգի փորագրությունը, 2019 թ.



Նկ. 10—11 Արագած. ժայռապատկերներ, որ Գր. Ղափանցյանի հետազոտած տարածքում են, 2022, 2024 թթ.

*Ժայռապատկերաբանությունն սկզբնավորվում է Հայաստանում 1886 թ.՝ «Արարատ» ամսագրի հինգ հրապարակումներով:*

*Վերը շարադրվածը եւս մի անգամ հավաստում է, որ «Արարատ» ամսագրի խմբագրակազմը գիտահեն մոտեցում է ցուցաբերել բազմադարյա հայոց մշակույթի զարգընթացի եւ ամբողջականության ընկալման ասպարեզում:*

### ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աշխարհիքեկ Զալանթար, «Արարատ», Գրիգոր Ղափանցյան, Ժայռապատկեր, Կոմիտաս, Արագած, Մաստարա, Մեծամոր, Մերոպ Սմբատյանց, Մերոպ Տեր-Մովսիսյան, Միաբան, ռոռզման համակարգ, Յոլակերտ

### РЕЗЮМЕ

Журнал Первопрестольного Святого Эчмиадзина «Арагат» (1868–1919) сыграл значительную роль в формировании научного подхода к исследованию историко-культурного наследия Армении. В течение пятидесятилетнего периода своей деятельности редакция издания демонстрировала прогрессивное и многоплановое отношение к вопросам всестороннего изучения и комплексного осмысления армянской культуры.

Одним из ярких свидетельств этого является публикация в журнале первого наскального изображения, обнаруженного на территории Армении Месропом Смбатяном в 1886 году. Это событие стало знаковым в истории науки: впервые в мировой научной периодике был опубликован, подвергнут обсуждению и реалистической интерпретации петроглиф. Примечательно, что за семь лет до этого – в 1879 году – петроглифы были открыты в пещере Альтамира (Испания), однако в научной печати тогда они так и не получили должного отражения.

Таким образом, представляется возможным утверждать, что истоки современной петроглифологии восходят именно к Армении – одному из древнейших центров наскального искусства. Существенное значение в становлении этой научной дисциплины имел журнал «Арагат», на страницах которого в течение нескольких десятилетий публиковались исследования таких выдающихся уче-

ных, как Галуст Тер-Мкртчян (1893), Месроп Тер-Мовсисян (1913) и Григор Капанцян (1914).

Более чем вековая история открытия и изучения петроглифов Армении — охватывающая уже около 140 лет — свидетельствует о постоянном интересе и серьезном научном подходе арменоведов к этой специфической, но важной области археологических исследований.

## SUMMARY

The journal of the Mother See of Holy Ejmiadzin, Ararat (1868–1919), played a pivotal role in shaping the scientific approach to the study of Armenia's historical and cultural heritage. Throughout its five decades of operation, the editorial board of the journal demonstrated a progressive and multifaceted approach to the examination and comprehensive representation of all phases of Armenian culture.

One of the key milestones in this regard was the publication of the first rock carving discovered in Armenia by Mesrop Smbatyan in 1886. This event marked a significant turning point, as it represented the first time in the world that a petroglyph was published, discussed, and interpreted realistically in the scientific press. It is noteworthy that while petroglyphs were discovered seven years earlier in the Altamira cave in Spain, they were never afforded a scientific publication.

It is safe to assert that the origins of modern petroglyphology can be traced to Armenia, one of the most ancient centers of rock art. The development of this scientific discipline at a new level was significantly fostered by the journal Ararat, which, over several decades, published works by distinguished researchers such as Galust Ter-Mkrтчyan (1893), Mesrop Ter-Movsisyan (1913), and Grigor Ghapant-syan (1914).

The extensive history of the discovery and study of petroglyphs in Armenia, spanning nearly 140 years, reflects the sustained scholarly interest and rigorous scientific approach of Armenianists toward this specific field of archaeology.



ԳԱԼՅԱ ԴԱՎԻԴՈՎԱ

Հայոց ազգագրության թանգարան

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲՆՕՐԻՆԱԿ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՒ ՅԱԶԱՎԱԳՅՈՒՏ ԳՐՔԵՐԻ ՎԱՎԱՔԱԾՈՒՄ ԶՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ՝

Հայոց ազգագրության թանգարանի վերջին ձեռքբերումներից է թուրքահայ բանասեր, բառարանագիր Բարսեղ Միքայելի Թուղլաճյանի (1933–2016)<sup>2</sup> հավաքածուն: Իր գրական անունն է Փարս Թուղլաճի: Որպես հույժ կարեւոր գործ՝ հիշենք, որ Հայ Եկեղեցու մասին հարուստ տեղեկություններ հավաքելուց հետո նա 1991 թվականին հայերեն, անգլերեն, թուրքերեն հրատարակել է «Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները» հատորը<sup>3</sup>: Բարսեղ Թուղլաճյանի հավաքածուն շատ հարուստ է եւ արժեքավոր: Այն կազմված է հազար վեց հարյուրից ավելի հայերեն (հայ գրողների ստեղծագործություններ, հայ մշակույթի, հայկական գավառների պատմության<sup>4</sup>, Հայ Եկեղեցու պատմության, հայ իրավունքի եւ իրավաբանության վերաբերյալ) եւ ութ հարյուր երեսունից ավելի օտարալեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն, թուրքերեն) գրքերից, գրքուկներից, կրթության ու վարժարանների վերաբերյալ նյութերից, հայրապետական կոնգակներից, բազմաանուն մամուլից<sup>5</sup>, անձնական նամակներից, բազմաբովանդակ գրություններից, վավերագրերից, կաթողիկոսի ընտրու-

<sup>1\*</sup> Ստացվել է՝ 12.12.2024, գրախոսվել է՝ 12.03.2024: Էլ. հասցե՝ galya.davidova.60@gmail.com:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Բարս Թուղլաճի: Կյանքի էջեր, Երեւան, 2022:

<sup>3</sup> PARS TUĞLACI, İstanbul Ermeni Kiliseleri, Armenian Churches of Istanbul (Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները), Կ. Պոլիս, 1991, 452 էջ 1:

<sup>4</sup> Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, Ատանայի հայոց պատմություն, 1970, Անթիլիաս–Լիբանան, Ա. Ալպոյաճեան, Պատմություն հայ Կեսարիոյ, Ա., Բ., 1937, Գահիրէ, ԱՐՏԱԽԱԶԳ ԱՐՔ. ՍԻՐՄԷԱՆ, Առաջնորդ հայոց Հալէպի, Պատմություն Հալէպի Հայոց, Սուրիա, հտ. Ա., 1940, Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ, Պոլիս եւ իր դերը, հտ. Ա, Բ., Տ. ՍԱԽԱՆԱԼԵԱՆՅ, Պատմություն Երուսաղէմի, հտ. 1, 2, 1931 եւ այլն:

<sup>5</sup> Հայ պարբերականները կարեւոր դերակատարություն են ունեցել Կոստանդնուպոլսի հայոց ինքնությունը պահպանելու գործում՝ վերլուծելով եւ ներկայացնելով ազգային համայնական կյանքի ամեն մի դրվագ: Հավաքածուի մաս են կազմել Հասարակական-քաղաքական եւ գրական մի շարք թերթեր՝ «Մասիս» (1852–1908), «Փարոս Հայաստանի» (1881), «Հայրենիք» (1892), «Արեւելք» (1932), «Մարմարա» (1940) եւ այլն:

թյան ժողովի պատգամավորական վկայագրից եւ այլ արժեքավոր փաստաթղթերից: Մեր նպատակն է դիտարկել, ուսումնասիրել եւ ներկայացնել հավաքածուն, ինչպես նաեւ հնարավորության դեպքում վերլուծել փաստաթղթերը, մեկնաբանել դրանք: Անհրաժեշտ է նաեւ բացահայտել Հայ Եկեղեցու՝ այս ինքնատիպ եւ հետաքրքրության արժանի վավերագրերի ազգապահպան նշանակությունն ու արժեքը, հավաքածուի մասին իրազեկել գիտական հանրությանն ու Եկեղեցու պատմությունն ուսումնասիրողներին: Հոգվածում անդրադառնում ենք տարբեր բնագավառների աղերսվող վավերագրերի: Պատմամշակութային նշանակություն ունեցող արժեքավոր փաստաթղթերն առնչվում են եկեղեցական եւ աշխարհիկ նյութերի, որոնք շոշափում են եկեղեցաշինության ու բարեգործության հանգամանքները, կրթական համակարգի բարելավմանը, հայոց լեզվի անաղարտության խնդիրներին եւ այլն: Խնդրո առարկա բնօրինակ փաստաթղթերը հանդես են գալիս որպես դիտարկման միավոր, իսկ վերլուծական միավորները վերաբերում են ազգին, եկեղեցաշինությանն ու վարժարաններին: Դրանք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաջնորդների արժեքավոր բնագիր փաստաթղթեր են, նամակներ՝ հասցեագրված «Գերապատիւ տէր Գէորգ Ծայրագոյն Վարդապետ Արսլանեանին»: Նամակները հղել են Հայոց թեմերի առաջնորդները, եւ դրա շնորհիվ կարելի է նաեւ պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի խնդիրների ու իրադարձությունների մասին: Հավաքածուի հնատիպ, բազմաբովանդակ գրքերի շարքում գերակշռում են կրոնաբարոյական բնույթի հրատարակությունները: Առկա են Հայրապետական պաշտոնական որոշ փաստաթղթեր ու ուղերձներ, նաեւ արվեստի բարձրարժեք նմուշներ: Կոնդակներից որոշները ձեւավորված են հայկական մանրանկարչական դպրոցի հարազատ ոճով: Հավաքածուի փաստաթղթերում (հայրապետական կոնդակներ, շրջաբերականներ, կոչեր, Ազգային Պատրիարքարանի ազգային ժողովի ատենագրություններ, տեղեկագրեր, Կեդրոնական վարչության կանոնադրություններ, հրահանգներ, Թուրքիո գավառական Ազգային վարժարանների վիճակացույցեր) կարելուրվում են ոչ միայն եկեղեցաշինության, կրոնաքաղաքական հարցերը, այլեւ ազգապահպանության, ազգային մշակույթի ու արվեստի խնդիրները:

Կոստանդնուպոլսի պատրիարքներն օժտված են եղել ընդարձակ կրոնական եւ մասնակի աշխարհական իրավունքներով: Նրանք իրա-

վամբ տնօրինել են Թուրքիայի վարչական իրավասության ներքո գտնվող հայության կրթությունն ու լուսավորությունը, տպագրության գործը, բարեգործական ու մշակութային հաստատությունները: Երկար ժամանակ իշխանության բարձրագույն մարմիններին որեւէ հարցով դիմելու, գրագրություն վարելու իրավունքը վերապահված է եղել բացառապես Պոլսո Հայոց պատրիարքությանը, եւ սա վերաբերել է ոչ միայն հայ ազգի ներկայացուցիչներին, այլ նաեւ Հայոց դավանակիցներին. օրինակ 1873–1874 թթ. կրոնական եւ քաղաքական ազգային ժողովների փաստաթղթում պահպանվել է Ասորի Պատրիարքապետի խնդրանք-դիմումը Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանին. «Կը խնդրեմ որ ըստ հին սովորութեան հարկ եղած Թագրիբը<sup>6</sup> մատուցանելով Բ. Դրան, Պատրիարքական հրովարտակը եւ առաջին կարգի մէնիտիյէ<sup>7</sup> պատուանշանը ժամ յառաջ ստանալու եւ ինձ յանձնելու շնորհ ընէք»<sup>8</sup>:

Ինչպես նշել ենք փաստաթղթերի մեծ մասը բնօրինակ է: Կան նույնիսկ եզակի նմուշներ (1898 թ. ձեռագիր Վկայագիր<sup>9</sup>, Տեղեկագիր Բ. Ազգային Կեդրոնական պարտուց բարձման համար, Կոնդակ-շրջաբերականներ՝ Ամենապատիւ Տ. Մկրտիչ Խրիմեան Ս. Պատրիարք հօր բացած հանգանակութեան՝ 1873 թ., Տեղեկագիր կաթողիկոսական Բ. յանձնաժողովոյ, Ազգային ընդհանուր ժողով՝ 1883 թ., Տեղեկագիր համարատուութեան տնտեսական խորհրդոյ՝ 1878 թ. եւ այլն):

Հավաքածուի կոնդակներից մի քանիսն ուղղված են Կոստանդնուպոլսի Պատրիարքին, Տեղապահ Տ. Գեւորգ Արքեպիսկոպոս Արսլանյանին: Պատմական նշանակության այս փաստաթղթերը ներկայացնում են եկեղեցական տարբեր իրադարձություններ՝ եկեղեցաշինության, եկեղեցական թեմերի, հոգեւորականների գործունեության վերաբերյալ եւ այլն: Կան նաեւ ծեսերի՝ պսակադրության կարգի («պսակի արտօնագիր»), ամուսնացողների իրավունքների, նաեւ թաղման ծեսի, գերեզմանատեղի տրամադրման, դրա խնամքի, բարեկարգման վերաբերյալ փաստաթղթեր:

<sup>6</sup> Թագրիբ (արաբերեն) – խնդրագիր, զեկուցում. տե՛ս Մ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆՅ, Բացատրական բառգիրք օտարազգի բառերի եւ օտարագիր բառերի ու դարձուածքների, Ալեքսանդրապոլ, 1912, էջ 114:

<sup>7</sup> Այս պարգեւը 1852 թ. հիմնել է սուլթան Աբդուլմեջիդ Ա.-ն եւ կոչել իր անունով. տե՛ս E. METIN, Ottoman Orders and Decorations, Կոստանդնուպոլիս, 2001, էջ 54–58:

<sup>8</sup> Համարատուութիւն ազգային կեդրոնական վարչութեան 1873–1874 ամի, տպագր. Ս. Միքայէլեան, Կ. Պոլիս, 1876, էջ 49:

<sup>9</sup> Տրուած Եւդոկիոյ ս. Մինաս եկեղեցւոյ տիրացու Գարեգին Արսլանեան Բինկեանցուն:

Առանձին խումբ են կազմում նյութերը, որ անմիջականորեն վերաբերում են Կոստանդնուպոլսի տեղապահ Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանին, որ թերեւս արժանի է Հայ Եկեղեցու նվիրյալ կոչմանը: Արսլանյանը ծնվել է 1869 թ. Տեւրիկի գավառում, Ակն քաղաքից մոտ 35 կմ հեռու գտնվող Բենկա (թրք. Բինկյան)<sup>10</sup> գյուղաքաղաքում, մեծահարուստի ընտանիքում<sup>11</sup>: Չնայած իր զգալի գրավոր ժառանգությանը (հեղինակել, հրատարակության է պատրաստել եւ ի լույս է ընծայել մեկ տասնյակից ավելի գրքեր<sup>12</sup>) Արսլանյանը շատ հայտնի չէ ընթերցող լայն հասարակությանը, եւ թերեւս պատճառը դառն ու դժոխային տարիներն են, որ պատուհասել են համայն հայությանը ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին: Այդ ծանրագույն դարաշրջանում ընդհանրապես զարմանալի է, որ մարդ արարածը կարողացել է ապրելու եւ ստեղծագործելու ուժեր գտնել: Ահա 1898 թ. հայկական ջարդերի ժամանակ Արսլանյանը կորցրել է կնոջը, որին թուրքերը ողջ-ողջ այրել են, երբ մերժել է «կյանքը փրկելու ստորացուցիչ առաջարկները»<sup>13</sup>: Այս դեպքերից հետո իր գրքերից մեկը՝ «Գեղե-

<sup>10</sup> Հնաւանդ պատմումով Հոաբաթ բնակավայրը նորոգել է Բենիկ իշխանը (1021 թ.), եւ կոչել իր անունով՝ Բենկայ (իմա՝ Բենիկի) քաղաք. տես «Հայոց անձնանունների բառարան»՝ «Բենիկ», հմմտ. «Տեղանունների բառարան»՝ բենկայ:

<sup>11</sup> Մ. ՄԻՆԱՍՅԱՆ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», Է., 1955, էջ 7 եւ յջ.:

<sup>12</sup> ԺԻՐԱՅՐ (ՄԱՐՏԻՐՈՍ ՊՕՅԱՃԵԱՆ), «Աղու հացից եօթնեակը» (Կոստանդնուպոլիս, 1928, 360 էջ), «Հովուի խօսքեր» (Կ. Պոլիս, 1912, 94 էջ), «Հայ զինուորին» (Կոստանդնուպոլիս, 1912, 14 էջ), «Հայ պանդուխտին» (Կոստանդնուպոլիս, 1913, 29 էջ), «Կեսնքի դասը մոլութիւններու հանդէպ» (Կոստանդնուպոլիս, 1928, 108 էջ), «Գեղեցիկ ասացուածք 2»: Հայոց ազգագրության թանգարանի գրադարանում պահպանվում են իր՝ «Մատենիկ մը բանախօսութեանց», տպագր. «Կիլիկիա», Ատանա, 1920, 80 էջ, «Գեղեցիկ ասացուածք», Կոստանդնուպոլիս, 1936, 158 էջ, «Ուղեւորութիւն յԵթովպիա», Կ. Պոլիս, 1930, 208 էջ գրքերը: Միւս հրատարակութիւնների մասին տեղեկութիւններ չգտանք:

<sup>13</sup> Բէնկեանի եղեռնագործութեան վաւերագիր կարելի է համարել Լեւոն էսաճանեանի՝ «Այրած քնար մը Բինկեանի Մոխիրներուն վրայ» քերթուածը ([Կոստանդնուպոլիս], 1909), որի Առաջաբանը բերում ենք ամբողջութեամբ: Ասլանեան Գէորգ վարդապետի կեանքին մէկ եղերական ցոլարանն է այս ողբախառն դիւցազներգութիւնը: Ասլանեան վարդապետ, այդ տիպար եկեղեցականը, իր աշխարհականութեան միջոցին դառնօրէն սեւեւ բաղդը կ'ունենայ իր կնոջ քսանհինգամեայ նազենիին հոմերական վախճանը տեսնելու: Նազենի Բինկեանցի այդ դիւցազնուհին, որուն նմաններ իր մէջ հաշուելուն համար է, որ այսօր Հայոթիւնը իր առջեւ կը գտնէ պատմական լուսաւոր սիւն մը, իր դրացի գաւառին՝ Ակնայ կոտորածին արտաբերած փլատակներուն վեհութիւնը ներգգալով, իր բնակավայրին՝ Բինկեանի մէջ, իր գաւառներուն հետ շուրջբոլոր, կը գուշակէր այն սպառնալիքը, խոշտանգումները, հրկիզումները, որուն Բինկեան ծունկէն կտրուած, իր ամենէն աղեկտուր թառանջանքներն ու հոնդիւնները պիտի լսեցնէր Եփրատի սառնագանգուր ալեաց եւ անմարդկային ոլորտներու մէջ: Կը հասնի սեւ օրը:

ցիկ ասացուածք»-ը<sup>14</sup>, Արսլանյանն ընծայել է կնոջը՝ Նազենիին<sup>15</sup> եւ ուխտել է այլեւս նվիրվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն<sup>16</sup>: Գրքի առաջաբանում արդեն գերապատիվ հայրը ներկայացնում է արյունոտ օրերի իր տառապանքներն ու տանջանքները: Այսպիսի մտորումներով ու հուշերով է նա դիմում է կնոջը . «Ու հիմակ ես ինչ ձօնեմ քեզի ու քու անմեռ յիշատակիդ, եթէ ո՛չ նուիրեմ իմ սրտս հոգիիս հետ, որ արդէն քու կողքի եմ եւ քեզի պիտի մնայ, գեղեցիկ ասացուածներու այս հաւաքածոն, որ քու նահատակութենէդ վերջ հաւաքեցի քեզի, քու յիշատակիդ համար, որ քու գեղեցիկ հաւաքածոներուդ հետ հոգ ըլլայ այն ամբողջական փնջակը, Մարտիրոսաց փառապսակը, նուիրելի ու մատուցանելի միշտ քեզպէսներուն: Յիշատակդ անցինք պահող Գ. Մ. Վրդ. ԱՐՍԼԱՆԵԱՆ»<sup>17</sup>: Հարկ է անպայման նշել, որ Արսլանյանի ընտանիքին պատուհասած եղեռնագործութիւնը ոչ թէ առանձին մի դեպք էր, այլ արեւմտահայոց համայն երկիրն արյունով ողողած ոճրագործութիւն: Սա վկայում է հենց ինքը հեղինակը, երբ նշում է, որ իր կնոջ օրինակին հետեւել են բազմաթիւ հայուհիներ՝ մահը գերադասելով անպատիւ կյանքից: Արհավիրքները, բնական աղետներն ու պատերազմները շրջադարձային են լինում շատերի կյանքում: Դրանք ստիպում են մտորել հավերժականի ու համամարդկայինի մասին, ժո-

Բինկեան կը պաշարուի տասը հազար խուժանային զինուորներով, սպանութիւնները քարերը արցունքի կը փոխեն, ամբողջ շէնքերն ու փառաւոր մայր տաճարը կը հրդեհուին, բոցերը՝ գետնաթաւալ ատրաշէկ ովկեան մը, հրեղեղ մը կազմած նախճիրներուն նախճիրը կը գործեն ներոններ ամէցնելով:

Հարսերն ու կոյսերը Շախէնց ձորը կ'ապաստանին, եւ երբ հոգ ալ յարձակում տեղի կ'ունենայ, Նազենիին նախապատուէրին վրայ կը սկսին կարգաւ վազրամուռնչ Եփրատը նետուիլ: Նազենիին թոյլ չտրուիր գետամոյն ըլլալ: Դիւցազնուհին, իր մատաղատի զաւակները գրկած հրդեհին վայրը կը փութայ: Զինուորները զինք կը հալածեն, մինչ ինք իր զաւակներով կը խոյանայ բոցերուն մէջ, քաղաքին ամբողջ սուգն ու մոխիրը իր վկայարանին մէջ առնելով (ծնթ.՝ խմբ.):

Իր ամուսինը այդ օրէն ի վեր, սգաւոր սքեմի մը տակ, անմխիթար Ասլանեան Գէորգ վարդապետը կը դառնայ, որուն բերանն է դրուած այս ողբամուռնչ դիւցազնագութիւնը: Այրած քնար, այրած բանաստեղծութիւն...

<sup>14</sup> Կ. Պոլիս, 1913, 158 էջ:

<sup>15</sup> Սրտիս անմոռաց եւ հոգիիս անկեղծ ՅԻՇԱՏԱԿԱՆՁՈՆՍ

Մարտկուհի ու մարտիրոսուհի

Ազնիւ ու դիւցազն ամուսնույս

ՆԱԶԵՆԻԻՆ:

<sup>16</sup> «Տ. Գէորգ Ս. Արքեպս. Արսլանեան», «Սիրոն» ամս. 1951 հտ. ԻԵ., հ. 7, էջ 224. [https://arar.sci.am/dlibra/publication/66425/edition/59855/content/դիւնումը\\_13.04.2023,10:38/](https://arar.sci.am/dlibra/publication/66425/edition/59855/content/դիւնումը_13.04.2023,10:38/)

<sup>17</sup> «Գեղեցիկ ասացուածք», էջ Ե.:

ղովրդին ավելի են մոտեցնում Եկեղեցուն, հավատքին: Մարդու անծիր վիշտը, զրկանքները արահետ են հարթում առ Աստված: Ազգաշնչման դժոխային դեպքերին հաջորդած առաջին հինգ տարիներին Գեորգ Արսլանյանն իրեն նվիրել է որբահավաքման եւ որբախնամության գործին: Տեւրիկում եւ Սեբաստիայում օթեւան է տվել, խնամել ու դաստիարակել է 200 որբերի, որ իր շնորհիվ ոչ միայն ողջ մնացին, ոչ միայն հայ մնացին, այլեւ մեծանալով շարունակեցին իրենց ուսուցչի գործը, իրենց ստացածը վերադարձնելով ազգին: Արհավիրքից տարիներ անց Գումգաբուի Գաղթականաց կայանի վարժարանում ավագ ուսուցչի պաշտոնն ստանձնած Վահան Վառվառյանը, որ փրկվածներից՝ երբեմնի որբերից մեկն է, Ջօն է ընծայել Թուրքիոյ Հայոց Պատրիարքական տեղապահ, Տ. Տ. Գէորգ արքեպիսկոպոսին<sup>18</sup>: Որբախնամության տարիներից քիչ անց (1901 թ.) վարդապետական աստիճան ստանալով՝ Գ. Արսլանյանն ամբողջովին նվիրվել է հոգեւոր սպասավորությանը՝ 1922–1927 թթ., այնուհետ՝ 1944–1951 թթ. եղել է Կոստանդնուպոլսի Պատրիարքական տեղապահ, ծավալել եկեղեցաշինական բուռն գործունեություն: Հիսնամյա հայանպաստ գործունեության մայրամուտին՝ ազգինը նորից ազգին վերադարձնելու ձգտումով Գ. Արսլանյանը Մայր Աթոռ Ս. էջմիածին է կտակել հոգեւոր կյանքին աղերսովոր իր ժառանգությունը: Այն բավականին հարուստ է ու արժեքավոր: Դրա մի զգալի մասն իր անձնական գրադարանն է՝ կազմված 3000 գրքից, հազվագյուտ թերթերից, ամսագրերից, հանդեսներից ու ժողովածուներից<sup>19</sup>: Ժառանգության մաս են կազմում նաեւ եկեղեցական սպասքը՝ արծաթյա սկիհը, արծաթյա մեռոնաթափ աղավնին, արծաթյա «զոյգ ձեռաց խաչերը», ադամանդակուռ երկու լանջախաչերը, արծաթյա կազմով Աւետարանն ու Մաշտոց ծիսամատւանը, մետաքսյա երկու ծաղկյա փիլոններն ու այլ արժեքավոր իրեր<sup>20</sup>: Այս ամենից զատ սրբազանի դուստրը՝ Հռիփսիմե Արսլանյանն, իր կողմից Եկեղեցուն է նվիրել գերաշնորհի եպիսկոպոսական ասան:

<sup>18</sup> Ջոնը ձեռագիր է, թվագրված՝ Պոլիս, 1924, փետր. 24.

Ո՛վ բարձրաշնորհ Սրբազան,  
Գործք ազգօգուտ զանազան,  
Եղար ազգին հայր պատուական,  
Պաշտպան որբոց գաղթական...

<sup>19</sup> Մ. ՄԻՆԱՍՅԱՆ, անդ:

<sup>20</sup> Ն. տ., էջ 9:

Ժամանակին անդրադարձել ենք Բարսեղ Թուղլաճյանի հավաքածուի հայրապետական կոնդակներին: Այժմ տեղին է նկատել, որ պատմական նշանակության այս ուղերձները Բ. Թուղլաճյանին են հասել Կոստանդնուպոլսի պատրիարքական տեղապահ Գեւորգ Արսլանյանի ձեռամբ<sup>21</sup>: Հավաքածուում կա ուշագրավ մի փաստաթուղթ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ընտրության մասնակից պատգամավորի վկայականը՝ 1908 թ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին գրույթամբ: Պատգամավորի վկայականը տրվել է Խարբերդի եւ Բալուի թեմերից ընտրված պատգամավոր Գեւորգ Ծ. Վարդապետ Արսլանեանին: Քառածալ փաստաթղթում նշված են պատգամավորի պարտականությունները եւ Մայր Աթոռի հյուրատան կանոնները: Մանրամասն ներկայացված են. խմբա-խորհրդակցական ժողովների մասնակցությունը, 1908 թ. հոկտեմբերի 29-ի պատարագը, որը նվիրված է եղել հանգուցյալ տեր Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսին (Հայրիկ): Այնուհետ տեղեկություններ կան հոգեհանգստյան կարգի, հոկտեմբերի 30-ի կայսերական մաղթանքներով պատարագի եւ պատգամավորների երգման կարգի մասին: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 31-ին, պետք է տեղի ունենար կաթողիկոսական չորս թեկնածուների ընտրությունը, իսկ նոյեմբերի 1-ին՝ կաթողիկոսական բուն ընտրությունը: Ինչպես գիտենք, 1908 թ. Մկրտիչ Ա. Խրիմյան Վանեցուն հաջորդել է Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի Իզմիրլյանը՝ 1908–1910 թթ.<sup>22</sup>: Նրանից հետո հայրապետական գահ բարձրացած Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե. Տփղիսեցի Սուրենյանցը (1911–1930)<sup>23</sup> բարձր է գնահատել եկեղեցաշինության մեծագույն նվիրյալին եւ թիվ 591 (հոկտեմբերի 16, 1922 թ.) կոնդակով շնորհավորանքներ է հղել Գեւորգ վարդապետ Արսլանյանին. «Հայրապետական կոնդակաւ շնորհեմք քեզ իրաւասունս կրելոյ ի կուրծսդ զվարդապետական ակամակոտ լանջախաչ»: Ավելի ուշ Ամենայն Հայոց կաթողիկոսը թիվ 347 կոնդակով (1923 թ. նոյեմբերի 3) Գեւորգ եպիսկոպոսին շնորհել է արքույկյան պատիւ:

<sup>21</sup> Տե՛ս մեր «Բարսեղ Թուղլաճյանի հավաքածուի պատմամշակութային արժեքը» հոդվածը, «Նոր Ազգագրական հանդես», 2023, հտ. Գ., էջ 36:

<sup>22</sup> Դիտելի է, որ Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցին 1894–1896 թթ. հայտայց քաղաքականության դեմ բողոքի ձայն բարձրացնելու համար ստացել է «Երկաթյա պատրիարք» (Iron Patriarch) անունը: Օսմանյան արխիվներում պահվող փաստաթղթերում նա հաճախ ներկայացվում է որպես «կոշտ եւ անհնազանդ». տե՛ս Başbakanlık Osmanlı Arşivi, (Dahiliye Nezareti Mektubi Kalemi, DH.MKT.1234/56:

<sup>23</sup> Եղեռնի արհավիրքները եւ հարազատ ժողովրդի ցեղասպանությունը վերապրած Գեւորգ Ե.-ն հայրապետական իր անվանն ավելացրել է «Վշտալի մականունը»:

Մեծ թիվ են կազմում Հայոց Թեմական Առաջնորդարանների նամակներն ուղղված Գեորգ Արք. Արսլանյանին: Դրանք բազմաբովանդակ են՝ ուղարկված սփյուռքահայ գրեթե բոլոր թեմական Առաջնորդարաններից եւ պաշտոնյաներից՝ «Հայրապետական լիազօր ներկայացուցիչ Եւրոպայի թեմի», «Առաջնորդարան Հայոց Պուլկարիոյ», «Հոգեւոր Հովուութիւն Հայոց Ամմանի», «Կաթողիկոսարան Հայոց Կիլիկիոյ Անթիլիաս- Լիբանան», «Առաջնորդարան Հայոց Իրաքի», Առաջնորդարան Հայոց Լիբանանի», Աթոռ առաքելական Սրբոց Յակովբեանց յԵրուսաղէմ», «Առաջնորդարան Հայոց ի Խարբերդ», «Առաջնորդարան Հայոց Կեսարիոյ, «Առաջնորդարան Հայոց Կիպրոսի», «Առաջնորդարան Հայոց Յունաստանի» եւ այլն: Հարուստ ու բազմաբովանդակ նամակները լի են կրթութեան ու մշակութի, եկեղեցական ու քաղաքական կյանքի դրվագներով եւ բացահայտում են անցյալ դեպքերի ետնախորքը: Ուշագրավ են՝ Ծայրագույն պատիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Զ. Զորեքչյանի, Մամբրէ Արքեպիսկոպոսի (Լոս Անճըլէս, Գալիֆորնիա), Արտավազդ Արքեպիսկոպոս Սուրմէյանի եւ այլոց հղած նամակները: Շնորհակալական գրեր կան ուղղված Գեր. Գեորգ Արք. Արսլանյանին Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Կիլիկեան Գործադիր Յանձնախմբի, Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան, Իսթանպուլի Հայկական Թաղական Խորհրդի, վարժարանների՝ վարժապետների եւ այլոց կողմից: Ահա 1904 թ. Կարինի (էրզրում) Սանասարյան վարժարանի տնօրեն Սարգիս Խաչատուրեանը շնորհավորական նամակ է հղել «Մալաթիոյ թեմի առաջնորդ գերապատիւ Տ. Գեորգ Վրդ. Արսլանեանին»<sup>24</sup>: Նոր տարվա առթիվ գրված ձեռագիր շնորհավորական նամակի (2 էջ) դիմերեսին, կենտրոնում՝ շարադրանքից առաջ, Գեորգ սրբազանի գծամատիտ դիմանկարն է՝ դափնեպսակով զարդարուն:

Նամակների մեծ մասը տարբեր առիթների, տոների հետ կապված շնորհավորանքներ են, որոնք ավարտվում են օրհնություններով եւ մաղթանքներով<sup>25</sup>: Փաստաթղթերը հիմնականում բնօրինակ են, ձեռագիր կամ

<sup>24</sup> Կարինում 1881 թ. հիմնադրվել է Սանասարյան վարժարանը (հիմնադիր՝ Մկրտիչ Սանասարյան): Վարժարանի խնամակալության գործերը տրված էին Կոստանդնուպոլսի պատրիարքարանին՝ պատրիարքի նախագահությանը:

<sup>25</sup> Ինչպես նկատել է հետազոտողներից մեկը՝ հաճախ օրհնության գրերն ու կոնդակները ուղղվում են անհատին կամ հանրությանը՝ ցանկանալով կյանք, արեւշատություն, հոգու փրկություն եւ ամենայն բարիք. տես Ա. ԻՍԻԳԵՆՅԱՆ, Խոսքի մոգական ուժը, Շնորհ ի վերուստ (առասպել, ծես, պատմություն), Երեւան, 2008, էջ 175:

մեքենագիր-տպագիր: Գրությունների մի մասը հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն է: Առանձնակի կարելու է Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորեն Ա. Մուրադբեկյան կաթողիկոսի կոնդակը, որ անդրադառնում է ազգի զավակների ճիշտ ու վայելուչ պահվածքին, վարվեցողության կանոններին, որ արդիական են առհավետ: Հայրապետը դիմում է եպիսկոպոսներին, վարդապետներին, որ «Աստուծոյ առաջ, կրօնին, վանքերին ու ժողովրդին ցուցաբերեն իրենց հաւատարմութիւնը»: Իսկ խոսքն ուղղելով ժողովրդին՝ կաթողիկոսը գրում է. «...պատուէ՛ք եւ հպատակուէ՛ք ձեր առաջնորդներին, ձեր կրօնաւոր հայրերին»: Վարժապետներին հասցեագրված մասում կաթողիկոսն ասում է՝ «ձեր աշակերտներին վարժեցէ՛ք հայերէն լեզուի, ազգային պատմութեան, կրօնի բարեպաշտութեան եւ կարեւոր գիտութիւնների», նաեւ հորդորելով, թե՛ «Աշակերտներին սորվեցուցէ՛ք սիրել Աստծուն, Ազգը, Եկեղեցին, հոգեւոր եւ սահմանադրեալ իշխանութիւնը... Սորվեցուցէ՛ք պատուել եւ խնամել իրենց ծնողքը, պատկառել ծերերէն, հնազանդել մեծերուն, սորվեցուցէ՛ք կիրակէն սուրբ պահել...»: Այնուհետ կաթողիկոսը զարգացնում է կրթության-դաստիարակության հորդորը. «Սորվեցուցէ՛ք, որ բերանին մաքուր պահեն, աղտելի բառ եւ խօսք չհանեն, հայերէն յստակ լեզու գործածեն, պարկեշտ եւ համեստ հագուիւն, վայելուչ շաւոնաւոր եւ խոնարհ դէմքով խօսին, քաղեն եւ կենցաղավարեն»<sup>26</sup>: Կրկին ու կրկին ի մտի առնելով կոնդակի խոսքերը՝ հասկանում ենք, որ կաթողիկոսի համոզմամբ ազգապահպանության հարցում կարելու է գործոն են կրթությունն ու հայեցի դաստիարակությունը: Իսկ մարդկային որակներից գնահատելի են գթասրտությունն ու բարեպաշտությունը, ծնողասիրությունն ու խոնարհությունը, ինչպես նաեւ եկեղեցասիրությունն ու ազգասիրությունը: Կոնդակում Խորեն վեհափառը սահմանում է՝ գործածել հայերեն մաքրամաքուր լեզուն, պահպանել վայելչության ու պարկեշտության կանոնները, հարգել ու պատվել ծնողներին, ավագներին ու պատկառել նրանցից:

Հավաքածուի ձեռագիր նամակներից մեկն ունի շատ ուշագրավ բովանդակություն: Այն Հայոց Վեհափառ կաթողիկոս Գեորգ Զ. նամակն է (Երեւան, 11 նոյեմբերի, 1950)՝ ուղղված ամենապատիվ Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանին: Այս հիշարժան նամակում գրված է. «Իսթանպուլի կուսակալի արձակած նոր ընտրական հրահանգի դէմ հետեւեալ

<sup>26</sup> Կոնդակ շրջաբերական Տ. Տ. Խորենայ Սրբազան Արքեպիսկոպոսի ուղղուած Հայոց Կ. Պօլսոյ Պատրիարքին, Կ. Պոլիս, 1888, էջ 14—17:

բողոքն ենք ուղարկել Հանրապետության բրեզիտենթին ամսոյս 6-ին. «Թուրքիոյ հանրապետութեան բրեզիտենթութիւն. Պրն. բրեզիտենթ Իսթանպուլի կուսակալի արձակած նոր հրահանգը Պօլսի հայ պատրիարքի ընտրութեան վերաբերեալ՝ հակասում է Հայ Եկեղեցու կանոններին եւ պատմականօրէն սրբագործուած իրաւունքներին, ինչպէս եւ Թուրքիոյ պետութեան կողմից հաստատուած պատմական բնոյթ ստացած 1862 թուականի Ազգ. Սահմանադրութեան, միաժամանակ նշանակում է միջամտիլ Հայ Եկեղեցւոյ ներքին գործերին, որ թոյլատրիլի չէ:

Ուստի եւ որպէս պետ Հայաստանեայց Առաքելական միասնական Եկեղեցւոյ, բողոքելով բողոքում ենք եւ վստահօրթիւն տածում որ Դուք կը բարեհաճե՞ք չեղեալ յայտարարել Իսթանպուլի կուսակալի ընտրական նոր հրահանգը եւ կը կարգադրե՞ք չխառնուիլ Հայ Եկեղեցւոյ գործերին»:

Հայոց Վեհափառ Հայրապետ Գեւորգ Զ.-ի թիվ 275 կոնդակը (մայիսի 25, 1950) հղված է Կոստանդնուպոլսի պատրիարքութեան Ամենապատիւ տեղապահ Տ. Գեւորգ արքեպիսկոպոս Արսլանյանին: Կաթողիկոսն ուղերձում շնորհակալութիւն է հայտնում մեծ հավատացյալին ու հայրենասերին Կ. Պոլսի ըմբոստ հոգեւորականների՝ Հմայակ Ժ. վրդ. Պախտիարյանի, Զարմայր Ժ. վրդ. Կեոզիվրյանի, Թովմա ավ. քհն. Շիկահերի, Աբրահամ ավ. քհն. Էպլեյանի եւ Սերովբե ավ. քհն. Պուրմայանի ընդվզումը կանխելու համար<sup>27</sup>: Ըմբոստացած հինգ հոգեւորականները դուրս են եկել պետութեան ճանաչած եկեղեցական կանոնակարգի դեմ, արհամարհել իշխանութեան ճանաչած Պատրիարքական իշխանութիւնը, մեղանշել են եկեղեցական կարգապահութեան դեմ, խորհել տապալել գոյութիւն ունեցող հոգեւոր իշխանութիւնը եւ պառակտել պոլսահայ համայնքը: Այնուհետ կաթողիկոսը հավելում է, որ Զարմայր Ժ. վրդ. Կեոզիվրյանի, Աբրահամ ավ. քհն. Էպլեյանի եւ Սերովբե ավ. քհն. Պուրմայանի պատիժը մեկ տարով երկարացնում են՝ հուսալով, որ կզղջան եւ ներման կարժանանան: Կաթողիկոսն ուղերձն ավարտում է լավատեսական խոսքերով. «Լիովին հաւատացած ենք, որ պոլսահայ համայնքը եւ հոգեւորականութիւնը կհամախմբուեն Պատրիարքարանի շուրջ եւ բարձր կպահեն մեր ժողովրդի ազնիւ ու բարոյական արժանիքները»: Այս դեպքերի մասին է հավաքածուի մեկ այլ վավերագիր «Նոր լուրի» խմբագիր Վահան Թոշիկյանի ձեռա-

<sup>27</sup> Տէն Գ. ԳԱՎԻԴՈՎԱԿԱՆ, Բարսեղ Թուրքաճյանի հավաքածուի պատմամշակութային արժեքը, «Նոր Ազգագրական հանդես», 2023, հտ. Գ., 39:

գիր նամակը (3 էջ, 4. 10.1949, Կ. Պոլիս)՝ ուղղված Նորին Վեհափառությանը Ս. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց կաթողիկոսին. «Վեհափառ տէր, Պատիւ ունիմ հաստատելու Ձերդ Վեհափառությանն ուղղեալ իմ հետագիւս ի պատասխան «Նոր Լուս»-ի միջոցով հայ մամուլին հրատարակել յանձնարարուած Ձեր հայրապետական նախորդ պատգամին, ինչպէս եւ իմ կողմէ նոյնպէս Ձերդ Վեհափառությանն ուղղեալ գրութիւնը՝ ի մասին (այսպ.) քաղաքիս կախակայեալ եւ ըմբոստ եկեղեցականներու եպերելի շարժման»։ Եկեղեցու դեմ ընդվզած հինգ եկեղեցականների մասին կա եւս մեկ նամակ-փաստաթուղթ (մեքենագիր)՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ կաթողիկոս Գեորգ Զ. գրութիւնը Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա. կաթողիկոսին (Անթիլիաս, 10 հուլիս 1949)։ Կաթողիկոսը հայտնում է. «Փափաքելով տապալել Տեղապահը եւ տիրանալ Պատրիարքութեան՝ հայ եկեղեցականութիւնը բաժնուած է եւ համայնքը պառակտուած։ Իրենց ջանքը վրիպեցաւ կառավարութեան օրինական միջամտութեամբ։ Հաստատեցինք Տեղապահին որոշումը կախակայելու հինգ եկեղեցականները ցնոր կարգադրութիւն...»։

Հավաքածուում ուշագրաւ է «Պսակի Արտօնագրի» բովանդակութիւնը։ Այն հարուստ է եզակի տեղեկատվութեամբ եւ բացահայտում է ամուսնացողների անձնական կյանքի մանրամասնութիւնները (փեսացուի, հարսնացուի՝ անուն, ազգանուն, հոր անուն, ծննդավայր, տարիք, ամուսնական վիճակ, շ վկա, քննող բժիշկ, տաներեց քահանա, պսակագրամ, արտօնագրին, գանձապահ եւ այլն)։ Ամենականառուն այն է, որ քննող բժշկի եզրակացութիւնից հետո միայն կարելի էր ստանալ «Պսակի Արտօնագիր»-ը՝ «Վկայութեամբ եւ ֆննութեամբ հաստատուած ըլլալով որ վերոյիշեալները (փեսացու, հարսնացու.— Գ. Դ.) ամուսնական արգելիչ չեն կապ չ'ունին՝ եւ անոնց ամուսնութիւնը առողջապահիկ կանոններու եւ Հայ Եկեղեցոյ օրինաց համաձայն նկատուած է, հետեւապէս կ'արտօնուի օրհնել իրենց Ս. Պսակը»։

Հավաքածուի մեկ այլ փաստաթղթում (Ամուսնական խնդիրներ. Մասն Գ.) Ազգային Սահմանադրութեան 47-րդ հոդվածի համաձայն բազմաթիւ խնդիրներ են ներառված «Համառօտագրութիւն խնդրոց» ընդարձակ ցանկի մեջ.

- «1. Ամուսնական դատեր ու խնդիրներ.
2. Ամուսնալուծումներ.
3. Անչափահասներու ամուսնութիւններ.
4. Տարիքի անհամեմատութիւններ.

5. Ապօրէն կենակցութիւններ.
6. Հայրապետական Կոնդակով ամուսնալուծումներ.
7. Ապօրէն պսակադրութիւններ.
8. Ի կենդանութեան առն կամ կնոջ կրկնամուսնութիւններ.
9. Չեղեալ նկատուած պսակներ.
10. Ամուսնական ճիւղահամարի խնդիրներ. եւ թվով 343 հաստատուած կանոնիկ կէտեր»<sup>28</sup>:

Այլ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ տվյալ ժամանակաշրջանում ամուսնալուծութիւնն անընդունելի եւ անպատվաբեր էր: Եթե ամուսնալուծութեան հարցում մեղավորը կինն է եղել, նրան զրկել են եկեղեցական Ս. Խորհուրդներից, իսկ մահվանից հետո՝ «անշուք թաղել»: Ավելի փոքր զանցանքների դեպքում կինը պետք է ապաշխարեր, նրան հանդիմանել են եւ ժամանակավորապես բաժանել ընտանիքից:

Տարաբնույթ այս փաստաթղթերը կարելու է եւ դրանք ազգային-կրօնական ինքնութեան բարձրարժէք պատմամշակութային վավերագրեր են: Այս ուշագրավ, վավերագիր փաստաթղթերը բացահայտում են Հայոց Եկեղեցու պատմութեան հետաքրքիր ու տարաբնույթ կողմերը:

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութիւնը Հայ Եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկն է, որ մշտապես ձգտել է նպաստել ազգային նկարագրի պահպանմանը օտար միջավայրում եւ հատկապես՝ անաղարտ ու մաքրամաքուր պահել հայոց լեզուն, հայ շունչն ու միտքը, եւ վավերագրերը, որ փորձեցինք ներկայացնել այդ ամենի խոսուն վկաներն են:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգվածում ներկայացված են եկեղեցական կյանքի տարբեր բնագավառների հետ առնչվող բնօրինակ փաստաթղթեր: Պատմամշակութային նշանակութիւն ունեցող արժեքավոր փաստաթղթերում քննարկվում են եկեղեցաշինութեան ու բարեգործութեան, կրթական համակարգի բարելավման եւ հայոց լեզվի անաղարտութեան պահպանման հետ կապված խնդիրներ: Հավաքածուում պահպանվող նամակների մեծ մասը տարբեր

<sup>28</sup> Այս ժողովը նախագահել է Կ. Պոլսի պատրիարքութեան տեղապահ՝ Վահրամ Մանկունին (1846–1920) հայ հոգեւորական, մշակութային գործիչ: 1933 թ. Փարիզում հետմահու լույս է տեսել նրա աշխատութիւնը՝ «Գէորգ Դ. եւ իր ժամանակը»: Համարատուութիւն Ազգ. Կեդր. Վարչութեան կրօնական ժողովոյ՝ 1908 նոյեմբեր 3 – 1910 հոկտեմբեր 13, Կ. Պոլիս, տպագր. Օսմ. Գործակցական Ընկերութեան, էջ 24:

առիթների, տոների հետ կապված շնորհավորանքներ են, որոնք ավարտվում են աստվածահաճո օրհնություններով, մաղթանքներով: Ուշագրավ է Վեհափառ Հայոց կաթողիկոս Գեորգ Զ.-ի ձեռագիր նամակներից մեկն՝ ուղղված ամենապատիվ Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանին, որտեղ Վեհափառը հրահանգում է Պոլսո պատրիարքարանի տեղապահին բողոք ներկայացնել Թուրքիայի նախագահին Հայոց եկեղեցու ներքին գործերին միջամտելու առիթով:

Տարաբնույթ այս փաստաթղթերը էթնոկրոնական ինքնության բարձրարժեք պատմամշակութային վավերագրեր են: Դրանք բացահայտում են Հայոց եկեղեցու պատմության որոշ մանրամասներ: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը ձգտել է պահպանել օտար միջավայրում հայ մնալու դժվարին գործը, անաղարտ ու մաքրամաքուր պահել հայոց լեզուն եւ մշակույթը:

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Փաստաթուղթ, բնօրինակ, եկեղեցի, կոնդակ, պատրիարք, նամակ, հավաքածու:

## РЕЗЮМЕ

В статье представлены подлинные документы, относящиеся к различным сферам церковной жизни. В документах, имеющих историко-культурное значение, обсуждаются вопросы церковного строительства и благотворительности, совершенствования системы образования и сохранения чистоты армянского языка. Большинство писем, хранящихся в коллекции, представляют собой поздравления по различным поводам и праздникам, которые заканчиваются богоугодными благословениями и пожеланиями. Заслуживает внимания одно из рукописных писем Католикоса всех армян Геворга VI, адресованное Его Высокопреосвященству архиепископу Геворгу Арслanianу, в котором Его Святейшество поручает местоблюстителю Константинопольского патриархата подать жалобу президенту Турции на вмешательство во внутренние дела армянской церкви.

Эти ценные, историко-культурные документы этнорелигиозной принадлежности раскрывают некоторые подробности истории армянской церкви. Армян-

ский патриархат Константинополя всегда был сплочен и стремился сохранить трудную задачу оставаться армянином в чужой среде, сохранить армянский язык и армянскую культуру.

## SUMMARY

The article presents original documents related to various spheres of church life. In valuable documents of historical and cultural significance, issues of church building and charity, improvement of the education system and preservation of the purity of the Armenian language are discussed. Most of the letters stored in the collection are congratulations on various occasions and holidays, which end with God-pleasing blessings and wishes. Noteworthy is one of the handwritten letters of Catholicos of All Armenians Gevorg VI addressed to His Eminence Archbishop Gevorg Arslanyan, in which His Holiness instructs the Locum tenens of the Patriarchate of Constantinople to complain to the President of Turkey about interference in the internal affairs of the Armenian Church.

These valuable historical and cultural documents of ethno-religious identity reveal some details of the history of the Armenian Church. The Armenian Patriarchate of Constantinople has always been united and has strived to preserve the difficult task of remaining an Armenian in a foreign environment, to preserve the Armenian language and culture in its original and pure form.





Գեորգ Ծ. Վրդ. Ասանեան, «Գեղեցիկ ասացուածք» գրքի տիտղոսաբերքը, Կ. Պոլիս, 1913 թ.



Ամենապատիւ Ս. Տեղապալ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց և Եփեսոսի Ս. Սրբոցի Տ. Գեորգ Երջմիածնի ՍՈՒՐԵՆԵՆՆ՝

Լուսարարական Մայր տաճարի և Զախարիա Վանական Կաթողիկոսի Կաթողիկոսի Տ. Դեմիտրի Կաթողիկոս:

Մատենադարանական Մայր Աթոռի Տ. Մեմֆիս Կաթողիկոս:

Խմբակի Արարատ տաճարի Տ. Գեորգի, Կաթողիկոս:

Թանգարանական Տ. ԽՈՋԻԿ Տ. Կաթողիկոս:

Տեսուչ Տպարանի Տ. ԵՐՄԵՆԻ Կաթողիկոս:

Տեսուչ Ներսիսի Պ. ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ:

Կաթողիկոսի ազգային ԳԵՂԵՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ. ՄԵԼԻՍ-ՇԱՀԱԶԱՆԻՆ:

Կաթողիկոսական ընտրությունների պատգամավորի մանդատ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1908 թ.









ԱՆՆԱ ԵՐԿԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՊՏՀ

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ԼԵԶՎԱՈՒՃԱԿԱՆ ԱՈՒՆՁՆԱԿԱՏԱՌԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԴԵԻՐԻԿՅԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)<sup>1</sup>

ԽՍՀՄ գրողների միության անդամ, արձակագիր, հրապարակախոս Գեուրգ Դեւրիկյանի<sup>2</sup> ստեղծագործությունների զգալի մասը<sup>3</sup> նվիրված է հայ ժողովրդի պատմությանն ու հայ մշակույթի նշանավոր գործիչներին, հայ բանահյուսությանն ու միջնադարյան գրականությանը: Դրանք արժարժույթ են արդիական հնչեղության խնդիրներ եւ տարբեր ազգային հարցեր: Հայրենասիրությամբ է ներծծված նրա ստեղծագործության ամեն դրվագ, իսկ նյութն ազգասիրությունն է՝ անցյալի ու ներկայի հետ տարված զուգահեռներով եւ մերօրյա կյանքի մտահոգություններով:

Ակադ. Ս. Սարինյանը գրում է. «Ամեն մի վերածնունդի բնորոշ գիծն է կորցրած արժեքների վերագտնումը, հանգամանք, որ մարդկանց հայացքն ուղղում է դեպի անցյալը: Հայրենիք, լեզու, կրոն՝ ահա այն արժեքները, որ հայ նորագիշները հայտնաբերում են պատմական անցյալում, որը, հիրավի, ապշեցնում է նրանց մաքառման հերոսական դրվագներով, հանճարի հրաշակերտ ստեղծումներով»<sup>4</sup>:

Գեուրգ Դեւրիկյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում բառապաշարի հարստությամբ, գրաբարյան բազմաթիվ կառույցների, քերականական ձևերի օգտագործմամբ, միջինհայերենյան բառաշեր-

<sup>1</sup>\* Ստացվել է՝ 10.10.2024, գրախոսվել է՝ 11.11.2024: Էլ. հասցե՝ annajanyerkanyan@mail.ru:

<sup>2</sup> Տե՛ս Կոնգրեսի գրադարանի կայքը. <https://id.loc.gov/authorities/names/79013281.html>, համտ. «Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան», հատոր առաջին, Եր., 2005:

<sup>3</sup> «Խաչապաշտ հող – 1700» խորագրով ակնարկաշարը, նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, մնացել է անավարտ: Հոգեւոր-մշակութային կենտրոններին՝ Սուրբ Էջմիածնին, Մշո Սուրբ Կարապետ վանքին, Զվարթնոցին, Գանձասարին, Դադիվանքին եւ այլ սրբավայրերին նվիրված հոգվածաշարի մի մասը հրատարակվեց Լոս Անջելեսի «Երկինք» գրական-մշակութային ամսագրում: Անտիպ է մնացել նաեւ «Գլաձոր» պիեսը:

<sup>4</sup> Ս. ՍԱՐԻՆՅԱՆ, Հայոց գրականության երկու դարը, գիրք 2, Եր., 1989, էջ 393:

տերի կիրառմամբ, լեզվի պատկերավորման միջոցների առատ գործածությամբ: Դերիկյանն իր արձակի պատկերավորությունն ստեղծում է տվյալ դարաշրջանը նկարագրող լեզվաոճական միջոցներով ու հնարանքներով: Պատկերավորման գրեթե բոլոր միջոցներն առկա են Դերիկյանի արձակում, որոնց կիրառմամբ հեղինակը նկարագրում է միջնադարյան աշխարհը:

Իր գեղարվեստական պատկերի բաղադրիչ տարրերից է բնանկարը, որը ոճական յուրահատուկ երանգավորման գրասեղանում է: Գրողի ստեղծագործական երեւակայության միջոցով<sup>5</sup> շատ հաճախ պատկերվում է բնության նկարագրությունը, որը հեղինակի պատմողական խոսքի անբաժանելի մասն է: Բնության նկարագրությունը պատմավեպում նաեւ դառնում է կերպարներին բացահայտող միջոց ու հնարանք:

Բնանկարը բարձր արվեստով է ներկայացվում Դերիկյանի արձակում: Ինչպես օրինակ՝ «Տրդատ ճարտարապետ» պատմավեպն սկսվում է բնության նկարագրությամբ, որտեղ հատկանշական է Արագած լեռան խորհուրդը. «Լեռը մի գիշերում ճերմակել էր: Եւ Տրդատ պատանուն թվում էր՝ լեռն ավելի է ջահելացել, եւ ճերմակը հարսնաքողի է նման: Ու զմայլված նայում էր Արագած լեռանը, որի ձյուններն արեւի շողերից հուրհրում էին, պեծպեծին տալիս, շողշողում, որ ասես նորահարսի դեմքն էր հարսնաքողի տակից շառագույն առնում»<sup>6</sup>:

Հարկ է նշել, որ Դերիկյանի պատմավեպին բնորոշ է բնությունը պատմականացնելը եւ բնության միջավայրում գործողությունների մեկնարկը ներկայացնելը: Թերեւս համեմատելի օրինակ է Րաֆֆու «Սամվելի» սկսվածքը, որը շեշտված պատմականություն է հաղորդում շարադրանքին, ապա հաջորդում է գործողությունների սրենթաց զարգացումը: Նման դեպքերում բնության պատկերավորմանը համահունչ պետք է լինի հաջորդող գործողությունը: «Տրդատ ճարտարապետ» վեպում Դերիկյանը բնության պատկերների նկարագրությամբ ցույց է տալիս մարդկային ստեղծագործության հաղթանակի արտահայտումը եւ բնության անկրկնելի ուժը: Աղթամար–Անի պատմական զուգահեռին կից, ներկայացվում են Մանվել (Մանուել) ճարտարապետ – Տրդատ աղբերները: Մարդ–բնություն արարչագործությունը կողք կողքի են: Աղթամար կղզու

<sup>5</sup> Լ. ԵՋԵԿՅԱՆ, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007, էջ 363:

<sup>6</sup> Գ. ԴԵՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 3:

բնության առեղծվածային եւ անզուգական պատկերները լրացվում են մարդ-հանճարի մտքի թռիչքով՝ Աղթամարի տաճարով: Մի կողմում չքնաղ բնությունն է. «Մայրամուտի արեւը հրդեհել էր ծովը, եւ շուրջը լույս էր համատարած: Դիմացը Արտոս լեռան ձյուններն էին հրդեհվել: Իսկ շուրջը աշնան կանաչ զմրուխտն էր ավիրն եւ այգիների դեղինը...»<sup>7</sup>, մյուս կողմում՝ տաճարը. «Տրդատն այդպիսի պատկերազարդ տաճար դեռ չէր տեսել: Սրբատաշ որմերը ճարտարապետն օգտագործել էր առավելագույնս՝ աշխարհի արարչագործության օրից մինչեւ իր օրերն ու ապագան պատկերելու համար: Սա մի քարեղեն մատյան էր, որի ամեն մի պատկեր-էջը շատ բան էր հայտնում ու ուսուցանում դիտողին»<sup>8</sup>:

Դիտելի է, որ Գ. Դեւրիկյանն իր արձակում տարեթվերի նույն ընթացքն է օգտագործում մեր հին հեղինակներին բնորոշ ոճավորմամբ՝ յուրաքանչյուր սկսվող նոր տարին ներկայացնելով միջնադարյան մատենագրությունից եկող կայուն լեզվական կաղապարով, ինչպես օրինակ՝ «Տիրոջ 989 թվականի ամառնամուտին ավարտին հասավ պարսպաց շինությունը, եւ պարսպադռներն օժտվեցին մայրագերան ու բեւեռապինդ դարպասներով»<sup>9</sup>:

Ինչպես գիտենք գեղարվեստական պատկերավորման միջոցներից այլաբերությունն ունի բառային դրսեւորում, որի տեսակներից է խորհրդանշանը (սիմվոլ): Վերջինս հենվում է փոխաբերական իմաստի վրա եւ ունի ասեկիքի խորություն: Խորհրդանշանն արտահայտվում է ոչ միայն բառերի, այլեւ գեղարվեստական ամբողջ պատկերի միջոցով: «Սիմվոլն իբրեւ պատկեր միշտ պարունակում է մի ներքին, ավելի խոր իմաստ, որ մենք ընկալում ենք մտքի երեւակայության օգնությամբ»<sup>10</sup>, – գրում է էդ. Զրբաշյանը: Պետք է նշենք, որ Դեւրիկյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում խորհրդանշաններն առատ են: «Տրդատ ճարտարապետ» վեպում Արագած լեռը խորհրդանշում է նպատակների իրականացման այն բարձրակետը, որին ձգտում է հասնել Տրդատը: Այս ամենին հաջորդում է գեղարվեստական պատկերավորությամբ նկարագրված հարսանեկան ծիսաշարի ընթացքը, որն իր լրումին է հասնում մինչեւ լույս ձգվող ուրախությամբ, որին էլ հաջորդում է լույսի ու կյանքի հետ կապված եւ

<sup>7</sup> Գ. ԴԵՒՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 111–112:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 197:

<sup>10</sup> Է. Զ. ԶՐԲԱՇՅԱՆ, Գրականության տեսություն, Եր., 1972, էջ 257:

նախաքրիստոնեական ակունքներից եկող Արեւագալի շարականը: Հարսանեկան խնջույքում հավաքված վանականներին՝ Սիմոն վարդապետին, Մակար հայր սուրբին, հակադրվում է աշխարհիկ կյանքը՝ հարսանիքը՝ իր ազգագրական սովորույթներով, կաքավող աղջիկներով:

Կտրին գնե, թե գնել կարես  
Ճորտակ եմ ու չեմ ծանոթագնոչ:  
Թուխ ամ, ծոցուտ գին հրամե  
Գնեմ զֆեզ, թե գնել կարեմ...<sup>11</sup>:

Միջնադարյան երգի քառատողին անմիջապես հաջորդում է հեղինակի բացատրությունը եւ վերլուծությունը. «Երգում էր ու գովում այն ճորտակ աղջկան, որ սիրու էր կարոտ, եւ այն պատանուն, որ սիրու տեր էր, եւ հեշտ էր գնելու աղջկա սերը»<sup>12</sup>:

Այն միտքը, որ Ավետարանը չի հակասում կենսասիրությանը, որոշակի ձեւով արտահայտվել է միջնադարյան աշխարհայեցողության մեջ՝ որպես գաղափարական հոսանք: Այդ ըմբռնմանը բնորոշ գեղագիտական արտահայտությունն է վեպի սկզբի հարսանեկան տեսարանը, երբ Սիմոն վարդապետը Տրդատին թույլ է տալիս երգել՝ ասելով. «Երգիր, Աստված սեր է, եւ սիրո այս ժամին իրավունք կա երգելու»:

Խորհրդանշական պատկերներից է ճարտարապետի հալածվելը, որը նկարագրվում է Հիսուս Քրիստոսի չարշարանքներին զուգահեռ անցկացվելով. «Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա շարժեալ զգլուխս իւրեանց եւ ասէին. վա՛հ, որ քակէիր զտաճարն եւ զերիս աւուրս շինէիր. Ապրեցո՛ղ զանձն քո եւ էջ ի խաչէդ»<sup>13</sup>: Հեղինակի պատկերավորմամբ Սուրբ Գրքից հատվածը նաեւ Տրդատին է աղերսակցվում:

«Եւ ասես նայում էր պատկերից Հիսուս Քրիստոս ու հարցնում.

— Իսկ քեզ ինչու են հալածում, Տրդատ մահկանացու:

Եւ ի պատասխան Տրդատը շնչաց.

— Ըմբոստ ոգուս համար, Տէր, քանզի անմեղ տկարին պաշտպան կանգնեցի եւ չգովեցի արքայի արարմունքը դաժան»<sup>14</sup>:

Կարելի է ասել, որ վեպի գեղարվեստական չլուսավաճքում ընթերցողը ծանոթանում է նաեւ ազգային-կրոնական այն գիտելիքներին, որ երկար

<sup>11</sup> Գ. ԴԵԴԻՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 5:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 214, հմմտ. Մարկ. ԺԵ. 29:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 218–219:

տարիներ արգելքի տակ են եղել: Տարբեր դրվագներում գեղարվեստորեն հնչում է այն հարցադրումը, թե ո՞րն է վանքերի առաքելությունը, ինչի՞ են կոչված նրանք. ամենօրյա աղոթքի՞ միայն, թե՞ նաեւ ժողովրդի ոգու արտահայտիչը հանդիսանալով՝ պետք է ծառայեն որպես մտքի ու լույսի ակունքներ: Վեպի տարբեր հերոսների, հատկապես վանականների երկխոսությունների միջոցով հեղինակը ներկայացնում է թոնդրակյան շարժման իր ըմբռնումը՝ հիմնված պատմիչների հաղորդած տեղեկությունների վրա: Անդրադարձ կա ժամանակի բյուզանդական վեճերին եւ Հայոց Եկեղեցուն ուղղված մեղադրանքներին նաեւ:

Ոճավորման հաջորդ կարեւոր միջոցը միջնադարին բնորոշ սուրբգրային վկայակոչումներն են, որ հնուկյան շունչ ենք հաղորդում շարադրանքին: Ընդ որում՝ աստվածաշնչային օրինակը համահունչ է շարակարգի տվյալ իրավիճակին եւ ոգուն: Անգամ ստեղծվել է համապատասխանությունների մի շարք, թե համանման իրավիճակներից որում ինչ օրինակ պետք է բերվի: Փորձուկյան ժամանակ ամենատարածվածը փորձուկյան բաժակը հեռացնելու մասին խոսքերն էին, որոնք Հիսուս ասաց Գեթսեմանիի աղոթքի ժամանակ: Նույն ձեւով Տրդատն Անիից ստոր ամբաստանությամբ հեռանալիս է վկայակոչում Գեթսեմանիի աղոթքի խոսքերը. «Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս Դու»<sup>15</sup>:

Մի այլ տեղ Սողոմոն իմաստունի խոսքերը ներհյուսվում են վեպի ընդհանուր շարադրանքին. «Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է նոյնպէս աւետիք բարեաց յերկրէ հեռաստանէ»<sup>16</sup>: Այս տողերը մեջբերում է հայրենիքից հեռու գտնվող Տրդատ ճարտարապետը, երբ լսում է երկրի բարօրության մասին: Մեկ այլ մեջբերում կա Սուրբ գրքից՝ Հառիճա վանքի վանահորը բնութագրելու համար. «Զգո՛յշ լերուք ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, եւ ի ներքոյն են գայլք յափշտակողք»<sup>17</sup>:

Սուրբգրային մյուս վկայակոչումները եւս ոճավորում են Դերիկյանի արձակը.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 220, հմմտ. Մատթ. ԻԶ. 39, Մարկ. ԺԴ. 36, Դուկ. ԻԲ. 42:

<sup>16</sup> Գ. ԴԵՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 343, հմմտ. Սաղմ. ԻԱ. 2:

<sup>17</sup> Գ. ԴԵՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 344, նաեւ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՅԻ, նշ. աշխ., էջ 87, հմմտ. Մատթ. Է. 15:

- «Զիմաստուութիւն եւ զխրատ ամպարիշտք անգոսնեն» (Մատթ. ԻԲ. 29),
- «Տո՛ւք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ»<sup>18</sup> (Մատթ. ԻԲ. 21),
- «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ ոտին, խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածոյ»<sup>19</sup> (Եւք ԻԱ. 24–25),
- «Նուաղեցան ճշմարտութիւնք յորդուոց ի մարդկանէ: Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում, շրթամբք նենգաւորի սրտէ ի սիրտ խօսեցաւ»<sup>20</sup> (Սաղմոս ԺԲ. 2),—Դավիթ մարգարեի խոսքերը:

Շարադրանքին միջնադարյան շունչ հաղորդելուն են ծառայում որպէս-ով սկսվող նախադասությունները՝ կառուցված երկու տարբեր երեւոյթների համեմատությունների վրա, օրինակ՝

- «Որպէս ամառվա տապից նախնաւ հողն է ծառավի անձրեւի կաթիլին, այդպէս էլ Տրդատի միտքն էր անհագորեն կլանում ընթերցածը»<sup>21</sup>: Ընդհանրապէս մեր հին հեղինակների խոհերն ու տողերը առանձնակի շուք ու հմայք են հաղորդում ցանկացած ստեղծագործության: Ներկա պարագային եւս՝ պատկերը, որ Ղազար Փարպեցին (գլ. Զ.) ստեղծել է սուրբ Տրդատ Գ. Թագաւորի հոգեւոր ծառաւր նկարագրելու համար Գեւորգ Դերիկյանի «մտայղացմամբ միահիւսուել է Տրդատ ճարտարապետի դիմաստուերին»<sup>22</sup>:

Միջնադարյան պատկերներն ավելի վառ ներկայացնելու համար հեղինակը կարեւորել է հայրենների տեղին օգտագործումը, որի նպատակներից է նաեւ գալիք սերունդներին անցյալի հոգեւոր արժեքները փոխանցելը.

Դու ապրես հորով-մորով,  
Հաց նստես յոթն եղբայրով,  
Ապրես դու հորով-մորով,  
Ու լցվի սրտիկդ արեւով<sup>23</sup>:

<sup>18</sup> Գ.ԴԵԴԻՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 203–204:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 326:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 62–63:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>22</sup> «Միջնադարեան հայ արձակի ժանրային համակարգը», Եր., 2015, էջ 96:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 151:

Հեղինակը վեպի պատմական միջավայրն ստեղծում է շատ բնական՝ օգտագործելով միջին հայերենին բնորոշ բառեր եւ արտահայտչամիջոցներ՝ միաժամանակ տալով դրանց բացատրությունը, առած-ասացվածքներ, օրհնանք-մաղթանքներ:

Օրինակ՝ կուղպակ (կրպակ), կնաֆար (մարմար), երբեմնակի, նախնյաց, իմ կողմանե, տարու մեջ, զավակաց, միտ բերել, ձեռնասուն, գուսանաց, ֆանգի, կորուսեց, գխթոր, փութաց, Աշխարհն Հայոց, դեսպանաց, ագուգա, բուռ (1. գաջ, 2. գաջագործ, 3. դաստիարակ), մանկտավագ, փոֆավոր, բամբառակ, մեղսակից, գիշերն ի բուն, իմաստասիրաց, մանկունմ, կարին (ծծումբ), ֆարախունկ, զադիկ (մկնդեղ), կոփիչ, փնդուկ, պողովատիկ (պողպատե), ածպան (այծպան), մառնպան (հացթուխ ու մառնապետ), նավագ, ստրատիոտ (զինվոր), դրոնգարն (1.զինվոր, 2.տորմիղի հրամանատար) եւ այլն: Հեղինակը տողատակերում տալիս է այս բառերի բացատրությունը նպատակադրվելով ընթերցողին ներկայացնել միջնադարյան ժամանակաշրջանը:

Անգամ միջինհայերենյան հատուկ անուններն են ուսուցողական բնույթ հաղորդում վեպին՝ Եղբայրիկ Պատանի, Խնձորիկ, Նազեր Աղջիկ, Գոհարիկ, Շաղիկ, Շնորհիկ, Աստվածատուր, Անանիա, Անդրեաս եւ ուրիշներ: Հեղինակը կատարում է անունների ստուգաբանական վերլուծություն: Ինչպես, օրինակ՝ Գուրգեն (տեղական հնչմամբ հայտնի է նաեւ Կյորիկե անվամբ) եւ այլն:

Հատկանշական է, որ քաղաքները ներկայացվում են՝ ըստ միջնադարյան հայկական անվանումների, եւ տողատակի ծանոթագրություններում տրվում են ռումինական ընդունված ձևերը:

Պատմական նյութի հիման վրա ստեղծված պատմվածքների լեզուն Դերիկյանը հմտորեն համապատասխանեցրել է ներկայացվող ժամանակին եւ միջավայրին՝ օգտագործելով հնաբանություններ, գրաբարյան ձևեր եւ այլն: Քաջատեղյակ լինելով տվյալ շրջանի առօրյային օրինակ՝ զինվորական աստիճանների կամ հանդերձների դեպքում կիրառել է իմաստային համապատասխան խմբերին վերաբերող եզրույթներ ու բառեր,՝ դեսպակ, պեպլոս, ստոլա, տունիկա, տոգա եւ այլն:

Անիին նվիրված դերիկյանական երկու ծավալուն երկերը համեմատելով միջնադարյան նյութին նվիրված պատմվածքների եւ միջնադարից դեպի նոր շրջան անցում կատարող «Վիրավոր կռունկ» վեպի, ինչպես նաեւ խորհրդային տասնամյակներին վերաբերող պատմվածքների հետ,

տեսնում ենք գրական բարձր վարպետությունն ի ցույց դնող հետեւյալ իրողությունը. ոչ միայն յուրաքանչյուր ժամանակաշրջանին բնորոշ բառեր են կիրառված, այլեւ այսօրվա գրական հայերենի շրջանակում Անիին նվիրված գործերում զգում ենք գրաբարյան շունչը համապատասխան դարձվածքներով ու բառաձևերով: Նույն կերպ ուշ միջնադարին վերաբերող ստեղծագործություններում հիշյալ շրջանի հայ բանաստեղծության ուրույն շունչն է, ուր միջնադարյան քերթությունը հատուկ գծերին ժէ.—ԺԸ. դարերի լեզվին բնորոշ արտահայտչաձևերով միահյուսվում է պատումի ընտրյալ բառամթերքը: Ժամանակակից պատմվածքներում գտնում ենք 1930–1980 թթ. երեւանյան իրականությունը բնորոշ գրական լեզուն՝ մերօրյա իրականությունը բնորոշ շարադրանքով:

\* \* \*

Գեւորգ Դեւրիկյանի հայրենասիրական ընթացքն արժանավորապես շարունակեցին որդիները: Կրտսերը՝ Տիգրանը, լրագրության եւ տեղեկատվական ոլորտի ներհուն մշակ է, հրապարակախոս, պաշտոնաթող գնդապետ, իսկ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ, հրապարակախոս Վարդանը, լրագրությանից բացի, իրեն դրսեւորեց նաեւ գիտահետազոտական ասպարեզում: Տիգրանի գրական ժառանգության քննությունը թողնելով ապագային՝ հպանցիկ անդրադառնանք բանասիրական գիտությունների դոկտոր (2014), (2001–2009 թթ.) «էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր, (2015–2023 թթ.) Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վ. Դեւրիկյանի հայրենասիրական արձակի մի քանի առանձնահատկություններին՝ «Վարդանանք եւ հայ երիտասարդությունը»<sup>24</sup> գրքի օրինակով: Եթե փորձեք սեղմ ներկայացնել գիրքը, պետք է ասենք, որ Վ. Դեւրիկյանը Վարդանանց ազգային-ազատագրական պատերազմը կապում է Հայկի ազատատենչության հետ՝ հասցնելով մինչեւ Արցախի ազատագրում: Եւ բնական է, որ հիշյալ ընդգրկումն ունեցող գիրքը պետք է խարսխվեր Մովսես Խորենացու, Բուզանդարանի, Սեբեոսի եւ Հովհան Մամիկոնյանի երկերի հաղթական եւ ազգասիրական փաստերին, որոնք հեղինակը նորովի ներկայացնելով նոր շունչ է հաղորդում: Գրքում Վ. Դեւրիկյանը շեշտադրում է այն հանգամանքը, որ Վարդանանց կռիվը նաեւ հայոց պետականության եւ

<sup>24</sup> Եր., 2008:

հայ ազգային ինքնուրույնության համար էր մղվում: Հեղինակը նաեւ նշում է, որ այն արդիական ու մշտական է հայ ժողովրդի համար եւ կարելու դեր է կատարում հայ հասարակական եւ հոգեւոր-մշակութային կյանքում: Գրքի լեզվաոճական առանձնահատկություններից է Նղիշերի երկի կարեւորագույն դրվագների հատվածական վերաշարադրանքը, որը Վ. Դերիկյանը կատարյալ ներկայացնում է՝ Ավարայրի ճակատամարտի եւ փափկասուն տիկնանց նկարագրերը տալով<sup>25</sup>: «Վարդանանք եւ Հայոց Եկեղեցին» գլխում Վ. Դերիկյանը ներկայացնում է Վարդանանց եւ Ղեւոնդյանց տոները, որ առանձնակի ժողովրդականություն են վայելում այսօր եւ պետք է սիրված լինեն հավետ՝ հայրենասիրության եւ եկեղեցասիրության օրինակ հանդիսանալով սերունդների համար: Վ. Դերիկյանը հատկաբար նշում է, որ Ավարայրի՝ ի սեր հայրենյաց նահատակված հերոսները դարձան Հայ Եկեղեցու սիրված դեմքեր, եւ նրանց անունները դրոշմվեցին եկեղեցական տոնացույցների, պատմական մատյանների էջերին եւ շնորհակալ հայորդիների սրտերում: Ի թիվս այլ աղբյուրների՝ Վարդան Դերիկյանը պատմական ժամանակաշրջանը նկարագրելու համար նյութեր է ներառել նաեւ Գանձարան ժողովածուներից<sup>26</sup>, որոնք հատուկ վեհություն են հաղորդում վեպին: Իսկ միջնադարյան մատենագիրներից արվող մեջբերումներին զուգահեռ հեղինակը տալիս է իր բացատրությունը եւ կարելու դիտարկումներ անում հաճախ Գեորգ Դերիկյանի հետ ոճական նմանություններ դրսևորելով: Վերջինս, ինչպես գիտենք, կարելու էր Վարդանանց պաշարը եւ իր «Գոյամարտ» վեպում առանձին հատված է նվիրել սուրբերին: «Վարդանանք եւ հայ երիտասարդությունը» գլխի միակուռ խճապատկերում ներկայացվում է Գրիգոր Տաթևացու դերը հայ երիտասարդության շրջանում հայրենասիրություն սերմանելու գործում: Վ. Դերիկյանը մեծ ոգեւորությամբ է անդրադառնում Գրիգոր Տաթևացու՝ հայ երիտասարդներին ուղղված քարոզների շարքին: Սուրբ գրքից բերված մեջբերումները ոճավորում են ստեղծագործությունը ու եւս մեկ անգամ երիտասարդների կյանքում կարելու կրոնի դերը: Գրաբարյան մեջբերումներն անմիջապես բացատրվում են դերիկյանական խորագրիտությամբ ու վերլուծությամբ՝ ձուլելով գրա-

<sup>25</sup> Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, Վարդանանք եւ հայ երիտասարդությունը, Եր., 2008, էջ 25:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 56–57: Պետք է նշենք, որ «Մատենագիրք Հայոց» շարքի գանձարանային երկու հատորները լույս են տեսել Վ. Դերիկյանի աշխատասիրությամբ. տես ԺԳ. եւ ԺԴ. հատորները՝ Անթիլիաս–Լիբանան, 2008:

բարն ու աշխարհաբարը, ինչպես հաճախ անում էր Դերիկյան ավագը. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ զինվորները հիմնականում երիտասարդ եւ պատանի են լինում, Վարդանանց համար ասում է, որ նրանք թեեւ «մանուկ էին հասակաւ, այլ ծեր իմաստութեամբ, որ զմահ ի յանձն առին եւ անանց պսակացն արժանաւորեցան»<sup>27</sup>:

Գրքում հատկապես ուշագրավ են այն հատվածները, որոնցում Վ. Դերիկյանը նկարագրում է Ավարայրի նահատակներին նվիրված տոները, որ հայ ժողովուրդն այսօր եւս նշում է մեծ ոգեւորությամբ:

Եւ Գեւորգ Դերիկյանի, եւ Վարդան Դերիկյանի հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործությունների լեզվաոճական աշխարհը մեկտեղվում է, եւ մենք ականատես ենք լինում հայրենիքն անսահման կարեւորող ու գովերգող երկու ստեղծագործողների գրչի անզուգական պատկերներին:

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայրենասիրություն, պատգամ, պատմավեպ, միջնադար, լեզվաոճական պատկերներ, գեղարվեստական պատկեր, բնանկար:

## РЕЗЮМЕ

В данной статье рассматриваются лингвостилистические особенности и библейские выражения в патриотических произведениях одного из самобытных представителей нового периода армянской прозы XX века Геворга Девриkyana и его сына Вардана Девриkyana. Подчеркивается связь произведений Геворга Девриkyana и Вардана Девриkyana с древнеармянским (грабаром) и среднеармянским языком.

В статье рассматриваются стилистические особенности исторического романа, цитаты на древнеармянском и выражения на среднеармянском языках. Из средств художественной выразительности исследуются аллегория и пейзаж, подчеркивается значение характерных для Средневековья отсылок к Библии.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 64:

В статье анализируются также характерное для произведений Г. Девриkyан богатство лексики, уместное использование многих древнеармянских слов и грамматических форм, среднеармянских пластов лексики, широкое применение средств языковой выразительности. Предметом рассмотрения является также книга сына Геворга Девриkyан Вардана Девриkyан «Вардананк и армянская молодежь». Подчеркивается сходство и неповторимость пера отца и сына Девриkyанов.

## SUMMARY


The paper examines the linguistic and stylistic features and biblical expressions in the patriotic works by Gevorg Devrikyan, one of the outstanding representatives of the new period of 20<sup>th</sup>-century Armenian prose, as well as his son Vardan Devrikyan. The connection of the works by Gevorg Devrikyan and Vardan Devrikyan with the Ancient Armenian (Grabar) and Middle Armenian languages is emphasized.

The paper touches upon the stylistic features of the historical novel, the quotes in Ancient Armenian and expressions in Middle Armenian. Allegory and landscape are studied as means of literary expression, and the significance of references to the Bible, typical of the Middle Ages, is emphasized here.

The paper also studies the characteristic richness of vocabulary in G. Devrikyan's works, the appropriate use of numerous Ancient Armenian words and grammatical forms, layers of Middle Armenian vocabulary and the abundant use of linguistic expressive means. The significant book by Gevorg Devrikyan's son Vardan Devrikyan "Vardanank and the Armenian Youth" is also a subject of consideration in this paper. The similarity and uniqueness of writing styles of father and son Devrikyan are emphasized.



# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



## ԵՒՍ ՄԵԿ ՔԱՅԼ ԴԵՊԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(Խաչատրյան Լ. Լեզվաբանական ավանդույթներ, նոր եւ նորագույն  
ուղղություններ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2025)

**Ք**իտությունն առաջ է քայլում շնորհիվ մեծ նվիրյալների, մանավանդ  
փոքրա թիվ ժողովուրդների գիտությունը, որը, այդպիսին կոչվե-  
լու համար պետք է միշտ լինի աշխարհի նվաճումների առաջին գծում:  
Լ. Խաչատրյանի՝ վերջերս լույս տեսած «Լեզվաբանական ավանդույթներ,  
նոր եւ նորագույն ուղղություններ» ուսումնական ձեռնարկն իր ուրույն  
տեղն ունի մեր լեզվաբանության զարգացման գործում, քանի որ ընդգր-  
կում է աշխարհի այս բնագավառի եւ պատմական զարգացման ընթաց-  
քը, եւ մեթոդաբանությունը, որի ընկալումը եւ կիրառումը մեր այսօրվա  
երիտասարդ լեզվաբանների համար իսկապես անհրաժեշտություն է:  
Հեղինակը այս, ինչպես եւ նախորդ մի քանի աշխատություններում,  
փորձում է տալ լեզվաբանության գիտության հիմքը, որի շնորհիվ սո-  
վորական դատողություններն ստանում են հստակ ձեւակերպումներ եւ  
դառնում են գիտություն:

Կարելի է զարմանալ Լ. Խաչատրյանի աշխատասիրության եւ նվիրվա-  
ծության վրա, քանի որ վեր հանել եւ պարզաբանել լեզվաբանության վեց  
հազարամյա պատմությունը եւ ներկայացնել նրա զարգացման քայլերն  
այնպես, որ դրանք հիմք հանդիսանան ապագա հետազոտությունների  
համար՝ հեշտ եւ ամենքին տրվող աշխատանք չէ:

Ձեռնարկը գրված է խորհրդային լեզվաբանության տվյալների հի-  
ման վրա, որի տեսությունն ամենազարգացածն էր աշխարհում: Բացի  
այդ խորհրդային գիտական մամուլն անընդհատ ներկայացնում էր ըն-  
թերցողին արտասահմանյան գիտության վերջին նվաճումները: Խոսքս  
Ն. Ս. Չեմոդանովի, Ս. Գ. Բարխուդարովի, Վ. Ա. Զվեգինցեի, հետագայում  
Տ. Ա. Ամիրովայի, Բ. Ա. Օլիովիկովի, Ֆ. Մ. Բերեզինի, Ն. Ա. Կոնդրաշովի

եւ նրանց շրջապատող գիտնականների գործերի մասին է, որոնք լայն եւ հստակ օգտագործված են քննարկվող աշխատությունում:

Լ. Խաչատրյանն առաջին գլխում ներկայացնում է լեզվաբանության պատմությունն ու նվաճումների փուլերը մինչեւ 20-րդ դարի վերջը՝ ընդգծելով նաեւ հայ լեզվաբանների լուծման մեր գիտության զարգացման մեջ: Մասնավորապես նա նշում է Գ.Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» (հ. 1—2, Եր., 1961—1962) մենագրությունը, որից մասամբ օգտվել են նաեւ Տ.Ա.Ամիրովան եւ նրա համահեղինակները: Այս գլուխը հետաքրքիր է ոչ միայն իր բովանդակությամբ, այլեւ կառուցվածքով, քանի որ քայլ առ քայլ հետեւում է, թե ինչպես սովորական հակադրումը (ձայների, բառաձևերի, բառերի եւն) պատմության ընթացքում ձևավորում է իմաստաբանական, կառուցվածքային, ձևաբանական, ինտեգրալ եւ այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնել լեզուն այնպես, որ նա կարողանա հանդիսանալ նաեւ ավտոմատ թարգմանության եւ լեզվի ավտոմատ ուսումնասիրման հիմք: Ուշագրավ է, որ պատմական նկարագրության մեջ հեղինակը կանգ է առնում մոտեցումների միջեւ եղած ոչ միայն ընդհանրությունների, այլեւ տարբերությունների վրա, նշելով, որ սկսած 19-րդ դարի վերջից՝ պատմական-համեմատական լեզվաբանության հետ մեկտեղ սկսում է թափ առնել տեսական լեզվաբանությունը Կազանի, Մոսկվայի, Պրահայի, Սորբոնի, Ժնևի մասնագետների ուժերով: Լ. Խաչատրյանի վարպետությունը կայանում է նրանում, որ նա «համատեղում է մոտեցումներն ու զարգացումները», ոչ մի տեղ չի նշում, որ որեւէ նոր ուղղություն վերացնում է նախորդ ուղղությունների ձեռքբերումները (չնայած այդ երեւոյթը տարբեր ժամանակաշրջաններում առկա է): Ընդհակառակը՝ հենց առաջին գլխում վերլուծված պատմական եւ տեսական մոտեցումները գնահատվում են նրա կողմից որպես զարգացում, որպես միմյանց լրացնող եւ լեզվական նյութն ավելի խորը մեկնաբանող տեսություններ: «Լեզվաբանական ավանդույթները, - գրում է նա, - տրվում են ոչ թե միմյանցից անկախ ձեռքբերումների եւ դպրոցների գործունեության կտրվածքով, այլ դրանց փոխադարձ կապերի, միմյանց օրգանական շարունակություն կազմող գիտական շղթայի հայեցակետով» (էջ 5):

Ավելի կարեւոր նշանակություն ունեն, ըստ իս, երկրորդ եւ երրորդ գլուխները, որոնք նվիրված են համապատասխանաբար լեզվաբանության ժամանակակից եւ նորագույն միջգիտակարգային ուղղություններին:

Ցավոք, պետք է նշեմ, որ Հայաստանի Հանրապետությունում 1990 թվականից այս կողմ գրված գիտական աշխատությունների 90 տոկոսը չունի գիտական մեթոդաբանական հիմք, մանավանդ դա վերաբերում է թեկնածուական եւ դոկտորական ատենախոսություններին: Սա մեր հայամբողջ խորհրդային շրջանի լեզվաբանության բացն է, եւ այս առումով Լ. Խաչատրյանի աշխատությունն ավելի քան արդիական է:

Երկրորդ գլուխը ներկա եւ ապագա հայ լեզվաբաններին պարզաբանում է հաղորդակցական, ճանաչողական, մշակութային, համակարգչային եւ այլ ուղղությունների էությունը: Այս կարճ ակնարկի խնդիրը չէ կանգ առնել դրանցից ամենքի բովանդակության վրա, բայց անհրաժեշտ է նշել, որ հեղինակը ուղադրությունը սեւեռում է տեսությունների տերմինների, կառուցվածքի, մոտեցման սկզբունքների, նպատակային խնդիրների վրա, ինչով սրանցից յուրաքանչյուրը ներկայացվում է ամբողջությամբ: Ուղադիր ընթերցողը կարող է նկատել, որ բոլոր մոտեցումները ներկայացված են գրեթե համաչափ, քանի որ համաչափ տարածում են գտել գիտության մեջ: Իհարկե հաղորդակցական եւ ճանաչողական լեզվաբանությունն ավելի մեծ նշանակություն ունի մեր գիտության զարգացման համար, քան լեզվամշակութաբանությունը, կիրառական լեզվաբանությունն այսօր ավելի պահանջված է, քան տեքստի լեզվաբանությունը, սակայն հեղինակն իրավացի է՝ ներկայացնելով դրանց սկզբունքները լիակատար, քանի որ բանասիրական ուղղությամբ սովորող ուսանողների համար սա անհրաժեշտ է:

Երրորդ գլուխը, ինչպես նշեցինք, նվիրված է լեզվաբանության նորագույն ուղղություններին: 21-րդ դարի գիտությունը փորձում է պարզաբանել նաեւ միջգիտական առանձնահատկությունները, քանի որ առանձին ճյուղեր իրենց ներքին խնդիրների լուծումները գրեթե սպառել են: Բացի այդ, կյանքը թեւադրում է համատեղել տարբեր գիտությունների նվաճումները՝ աշխարհի գաղտնիքները պարզաբանելու եւ ապագայի ճիշտ ուղի որոնելու համար: Այսպիսով, ի հայտ են գալիս մաթեմատիկական, հոգելեզվաբանական, նյարդալեզվաբանական եւ այլ ուղղություններ: Չեմ կարծում, որ սրանք բոլորը կստանան հավասար զարգացում ապագա սերունդների աշխատություններում, բայց մենք պետք է նշենք մեր գիտնականի՝ ապագան տեսնելու միտումն ու ունակությունը: Ըստ հեղինակի՝ ոչ միայն լեզվի տարբեր բաժիններն են պահանջում հատուկ մոտեցումներ, այլեւ լեզվի կիրառման տարբեր բնագավառները: Բացի այդ՝ մեծ


տարածում են ստանում լեզվի ուսուցման հետ կապված մոտեցումները, օրինակ՝ լեզվամշակութաբանությունն ու լեզվաերկրագիտությունը, քանի որ բոլոր ժամանակներում բազմալեզու գիտնական ներն ու ոչ գիտնականները պահանջված են:

Հատուկ պետք է նշել հեղինակի գիտական ոճը՝ պարզ, հասկանալի, առանց իմաստային բարդությունների, ինչը համապատասխանում է ուսումնական ձեռնարկներին ներկայացվող պահանջներին:

Այսպիսով՝ քննարկվող աշխատությունը նոր քայլ է հայ լեզվաբանության զարգացման եւ բանասիրական կրթության մակարդակի բարձրացման գործում, ու այն պետք է ողջունել:

ՎԱՂԱՐՇԱԿ ՀՆՁԱՅՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



## СОДЕРЖАНИЕ

### РЕЛИГИОВЕДЕНИЕ

- ИЕРЕЙ МОВСЕС (ДАВИД) СААКЯН** — Христология Армянской Церкви  
в V веке: *Воплотившийся Бог* . . . . . 5
- АСМИК АБРААМЯН** — Пост полного воздержания (цом) в армянской  
празднично-обрядовой культуре (предварительные наблюдения). . . . . 17
- АКОП КЕСЕЯН** — Источники «Толкования на книгу пророка Исаии»  
Давида Кобайреци. . . . . 23

### ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- ВАРДАН ПЕТРОСЯН** — Фонологические характеристики гласного է (ē)  
в классическом армянском (Грабар) . . . . . 43
- АШОТ ТЕР-МИНАСЯН** — Градация в речевой структуре исторического  
романа Мурацана «Геворг Марзпетуни» . . . . . 59
- АВАГ А. АРУТЮНЯН** — Деятельность католикоса Всех Армян  
Вазгена Первого согласно новоявленным документам (1958—1989 гг.). . . . . 79

### СООБЩЕНИЯ

- КАРЕН ТОХАТЯН** — Отражение первых открытий наскальных изображений  
в журнале «Арарат». . . . . 99
- ГАЛЯ ДАВЫДОВА** — Коллекция подлинных церковных документов и редких  
книг в Музее Армянской этнографии . . . . . 110
- АННА ЕРКАНЯН** — Лингвостилистические особенности патриотической  
прозы (на примере отца и сына Деврикянов) . . . . . 129

### РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

- ВАГАРШАК ГНДЗАЦЯН** — Ещё один шаг к современной науке. . . . . 140

## CONTENTS

### *RELIGIOUS STUDIES*

- FATHER MOVSES (DAVID) SAHAKYAN** — The Christology of the Armenian Church in the 5<sup>th</sup> Century: The Incarnate God . . . . . 5
- HASMIK ABRAHAMYAN** — Absolute Fast (Tsom) in the Armenian Festive-Ritual Culture (Preliminary Observations) . . . . . 17
- HAKOB KYOSEYAN** — Sources of the Commentary on the Book of the Prophet Isaiah by David Kobayretsi. . . . . 23

### *HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES*

- VARDAN PETROSYAN** — Phonological Characteristics of the Vowel Է (Ē) in Classical Armenian (Grabar). . . . . 43
- ASHOT TER-MINASYAN** — Gradation in the Speech Artistry of Muratsan's Historical Novel «Gevorg Marzpetuni» . . . . . 59
- AVAG A. HARUTYUNYAN** — The activities of the Catholicos of All Armenian Vazgen I according to newly discovered documents (1958–1989) . . . . . 79

### *ESSAYS*

- KAREN TOKHATYAN** — The Reflection of the First Discoveries of Petroglyphs in the Journal “Ararat” . . . . . 99
- GALYA DAVIDOVA** — Collection of original church documents and rare books in the Museum of Armenian Ethnography . . . . . 110
- ANNA YERKANYAN** — Linguistic and Stylistic Features of Patriotic Prose (The Case of Father and Son Devrikians) . . . . . 129

### *LITERARY REVIEW*

- VAGHARSHAK HNDZATSYAN** — One More Step Toward Modern Science . . . 140

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

|                                                                                                                      |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| <b>Տ. ՄՈՎՍԷՍ ՔՀՆՅ (ԴԱԴԻԹ) ՍԱՀԱԿԵԱՆ</b> — Հայոց Եկեղեցու<br>քրիստոսաբանությունը Ե. դարում. մարդագաժ Աստուած . . . . . | 5  |
| <b>ՅԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ</b> — Ծոմը հայոց տօնաժխական մշակոյթում<br>(նախնական դիտարկումներ) . . . . .                     | 17 |
| <b>ՅԱԿՈԲ ՔԷՕՍԷԵԱՆ</b> — Դաւիթ Քորայրեցու՝ Եսայու մեկնութեան<br>աղբիւրները . . . . .                                  | 23 |

### ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

|                                                                                                                                       |    |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| <b>ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ</b> — Գրաբարեան հայերէնի Է (Ե) ձայնաւորի<br>հնչոյթաբանական բնութագրերը . . . . .                                  | 43 |
| <b>ԱՇՈՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ</b> — Աստիճանաւորումը Մուրացանի<br>«Գեւորգ Մարգարետունի» պատմավեպի խօսքարուեստում . . . . .                      | 59 |
| <b>ԱԲԳԱ Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ</b> — Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի<br>գործունեութիւնը նորայայտ փաստաթղթերի համաձայն (1958—1989) . . . . | 79 |

### ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

|                                                                                                                                    |     |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| <b>ԿԱՐԷՆ ԹՈԽԱԹԵԱՆ</b> — Ժայռապատկերների առաջին յայտնաբերումների<br>անդրադարձները «Արարատ» ամսագրում . . . . .                      | 99  |
| <b>ԳԱԼԵԱ ԴԱԴԻԴՈՎԱ</b> — Եկեղեցական բնօրինակ փաստաթղթերի եւ հազուագիւտ<br>գրքերի հաւաքածու Հայոց ազգագրութեան թանգարանում . . . . . | 110 |
| <b>ԱՆՆԱ ԵՐԿԱՆԵԱՆ</b> — Հայրենասիրական արձակի լեզուաոճական<br>առանձնայատկութիւններ (հայր եւ որդի Դեւրիկեանների օրինակով). . . . .   | 129 |

### ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

|                                                                                 |     |
|---------------------------------------------------------------------------------|-----|
| <b>ՎԱՂԱՐՇԱԿ ՀՆՁԱՅԵԱՆ</b> — Եւս մէկ քայլ դէպի ժամանակակից<br>գիտութիւն . . . . . | 140 |
|---------------------------------------------------------------------------------|-----|

ISSN 1829-4243  
eISSN 2953-7843

Հրատարակում է  
Գէորգեան հոգեւոր ճեմարանի  
(աստուածաբանական համալսարան)  
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝  
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱԿԱՐՇԱՊԱՏ,  
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ  
«ԷԶՄԻԱԾԻՆ»  
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ [etchmiadzinamsagir@gmail.com](mailto:etchmiadzinamsagir@gmail.com)  
Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրուած է տպագրութեան՝ 14.04.2025 թ.



ԵՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ  
ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ